

**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ**



**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ >>**

<b>1. ԱՐԹՈՒՐ ՂԱՄՔԱՐՅԱՆ</b> Նախաքննական ցուցմունքների դատական դեպոնացումը (Իրավահամեմատական վերլուծություն)	2
<b>2. ՌՈՒՋԱՆՆԱ ՀԱԿՈՔՅԱՆ</b> Իրավաբանական ֆիկցիայի էվոլյուցիան և հայրենական իրավունքի համակարգում այն ներդնելու ուղիները	7
<b>3. ՏԻԳՐԱՆ ՔՈՉԱՐՅԱՆ</b> Ազգային գաղափարախոսությունը Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կայացման և գործունեության հենքում	15
<b>4. ԱՆԻ ՍՏԵՓԱՆՅԱՆ</b> Ապրանքային բորսաների գործունեության պետական կարգավորումը Հայաստանի Հանրապետությունում	21
<b>5. ԱՐՄԵՆ ԱՍԱՏՐՅԱՆ</b> Իրավունքի կենսագործման հիմնախնդրի տեսական սոտեցումները	26
<b>6. ՄԱՐԹԱ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ</b> Քրեական պատասխանատվությունը երեխային դատախարակելու պարտականությունը չկատարելու համար	29
<b>7. ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ</b> Հատուկ վարույթի առանձնահատկությունները	35
<b>8. ԱՐՏԱՇԵՍ ԲԱՍԵՆՅՅԱՆ</b> <b>ՎԼԱԴԻՄԻՐ ԱՂԱՆԻԿՅԱՆ</b> <b>ՎԱՍԴՈՒՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ</b> <b>ԱՇՈՏ ԳԱՍՊԱՐՅԱՆ</b> Հրագենի կիրառման հետ կապված գործերով դեպքի վայրի հասկացությունը, դրա պահպանման և զննության առանձնահատկությունները	42
<b>9. ՄԱՐՏԻՆ ՆԱԼԱՆԴՅԱՆ</b> Կալանքի՝ որպես քրեական պատժի նշանակման մի քանի հարցեր	47
<b>10. ԼԵՎՈՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ</b> Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով գույքային վնաս պատճառելու հանցակազմի նախատեսման հիմքերն ու պայմանները	51
<b>11. СЕРЖИК АВЕТИСЯН</b> Проблемы модернизации понятия “преступление” в свете уголовно-правовой реформы Армении	56
<b>12. ЛИЛИТ ДАЛЛАКЯН</b> Специфика института обеспечения единообразного применения закона, как составного элемента конституционно-правового статуса Кассационного суда РА	63
<b>13. СТАНИСЛАВА ИЛЬЧЕНКО</b> Принципы соотношения права общестственности на доступ к информации и права на частную жизнь	68

**ԱՐԹՈՒՐ ԴԱՄԲԱՐՅԱՆ**

ՀՀ գլխավոր դատախազության բաժնի պետ,  
իրավաբանական գիտությունների դոկտոր

**ՆԱԽԱՔՆՆԱԿԱՆ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐԻ  
ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊՈՆԱՑՈՒՄԸ**  
(ԻՐԱՎԱՀԱՄԵՍԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ)

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի (Նախագիծ) 42-րդ գլխում նախատեսված է քրեադատավարական նոր ինստիտուտ՝ ցուցմունքների դատական ղեպոնագումը: Նախագծի 312-րդ հոդվածի համաձայն՝ ցուցմունքի դատական ղեպոնագումը կատարվում է՝ 1) մեղադրյալի խոստովանական ցուցմունքի պատշաճությունն ապահովելու նպատակով՝ քննիչի միջնորդությամբ: 2) դատաքննությանը ներկայանալու հնարավորություն չունենալու կամ դատաքննության ընթացքում իրավաչափորեն ցուցմունք չտալու հիմնավոր ենթադրության պարագայում այդ անձից պատշաճ ցուցմունք ստանալու նպատակով՝ քննիչի կամ վարույթի մասնավոր մասնակցի միջնորդությամբ:

ՀՀ քրեական դատավարությունում ցուցմունքների դատական ղեպոնագման կարգավորումների, մասնավորապես մեղադրյալի խոստովանական ցուցմունքները ղեպոնացնելու՝ իրավաչափությունը գնահատելու նպատակով կարևոր նշանակություն ունի այս ինստիտուտի իրավահամեմատական վերլուծությունը: Մույն հոդվածում կներկայացվի Մոլդովայի, Էստոնիայի, Ռուսաստանի, Վրաստանի, Խորվաթիայի, ԱՄՆ-ի, Գերմանիայի քրեական դատավարության օրենսդրությամբ, ինչպես նաև Ղազախստանի քրեական դատավարության օրենսգրքի նախագծով ցուցմունքների ղեպոնացման իրավակարգավորումները:

*Մոլդովայի 2003թ.-ի* քր. դատ. օր.-ի 109-րդ հոդվածի համաձայն՝ եթե վկան արտասահմանում գտնվելու կամ այլ հիմնավոր պատճառներով չի կարող մասնակցել դատարանում գործի քննությանը, ապա դատախազի պահանջով նրան կարող է հարցաքննել քրեական հետապնդման դատավորը՝ ապահովելով կասկածյալի, մեղադրյալի, նրա պաշտպանի, տուժողի և դատախազի՝ հարցաքննվող վկային հարցեր տալու հնարավորությունը:

*Էստոնիայի Հանրապետության 2004թ.-ի* քր. դատ. օր.-ի 67-րդ հոդվածի համաձայն՝ նախնական քննության դատավորը, հաշվի առնելով հան-

ցագործության ծանրությունը կամ բացառիկ հանգամանքների առկայությունը, դատախազության միջնորդությամբ՝ վկայի անվտանգության ապահովման նպատակով վերջինիս անանուն վկա ճանաչելու որոշում կայացնելուց առաջ հարցաքննում է՝ նրա անվտանգությունն ապահովելու անհրաժեշտությունը որոշելու նպատակով: Էստոնիայի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում 2013թ.-ին կատարված փոփոխություններով նախատեսվում է մինչդատական ցուցմունքների ղեպոնացման առավել լայն հնարավորություն: Օրենքում կատարված փոփոխության համաձայն՝ դատախազությունը, կասկածյալը կամ պաշտպանը կարող են միջնորդել, որպեսզի վկան հարցաքննվի նախնական քննության դատավորի մոտ, եթե հետագայում քրեական գործի դատական քննության ընթացքում վկային հարցաքննելը կարող է անհնարին լինել, կամ վկայի վրա կարող են ազդեցություն ունենալ՝ նրա կողմից սուտ ցուցմունք տալու նպատակով: Դա նշանակում է, որ, եթե վկան չներկայանա դատարան (ինչը, ցավոք, պատահում է բավականին հաճախ), նրան սպառնան կամ շահարկեն, ապա որպես ապացույց՝ գործին կկցվեն մինչդատական վարույթի ընթացքում տրված ցուցմունքները<sup>2</sup>:

*Ռուկրահնայի 2012թ.-ի* քր. դատ. օր.-ի 225-րդ հոդվածը կարգավորում է նախաքննության ընթացքում վկայի և տուժողի հարցաքննությունը դատական նիստում, որը կարող է կատարվել բացառիկ դեպքերում՝ վկայի և տուժողի կյանքին կամ առողջությանը սպառնացող վտանգի, ծանր հիվանդության կամ այլ հանգամանքների առկայության դեպքում, որոնք կարող են անհնար դարձնել դատարանում նրանց հարցաքննությունը կամ ազդել ցուցմունքների հավաստիության և լրիվության վրա:

*Վրաստանի 2009թ.-ի* քր. դատ. օր.-ի 243-րդ հոդվածը նախատեսում է վկաների ցուցմունքների ղեպոնացումը և նրանց հեռահարցաքննությունը: Այսպես, նշված հոդվածի 1-ին մասի համաձայն՝

www.lawinstitute.am

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

վկայի մահվան, Վրաստանի Հանրապետության տարածքում չլինելու կամ նրա գտնվելու վայրը անհայտ լինելու դեպքում դատարանում հրապարակվում են նախաքննության ընթացքում վկայի դեպոնացված և օրենքների պահանջների պահպանմամբ ձեռք բերված ցուցմունքները: Նույն հոդվածի երկրորդ մասում սահմանված է, որ վկան կենթարկվի հարկադրանքի, սպառնալիքի, կկաշառվի, և, եթե նրա ցուցմունքների մեջ առկա են էական հակասություններ, ապա կողմերը կարող են միջնորդել, որ հրապարակվեն վկայի չդեպոնացված ցուցմունքները: Մեղադրական դատավճռի հիմքում չեն կարող դրվել միայն այդ ցուցմունքները:

Ի դեպ, Ղազախստանի Հանրապետության քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծում մանրամասն կարգավորվում է վկայի և տուժողի ցուցմունքների դեպոնացման ընթացակարգը<sup>3</sup>: Նշված նախագծի 53-րդ, 55-րդ հոդվածների համաձայն՝ քննիչ դատավորը իրավասու է դատախազի, պաշտպանի միջնորդության հիման վրա դեպոնացնել վկայի և տուժողի ցուցմունքները, եթե առկա են հիմքեր՝ ենթադրելու, որ նրանց ավելի ուշ հարցաքննելը օբյեկտիվ պատճառներով կարող է անհնարին լինել (Ղազախստանի Հանրապետությունից դուրս հիմնական բնակության վայր, արտասահման, մեկնելը, առողջության ծանր վիճակը, անվտանգության միջոցների կիրառումը) կամ հիմնական (գլխավոր) դատական քննության ընթացքում իրականացվող հարցաքննության ժամանակ նրանց նկատմամբ հնարավոր հոգետրավմատիկ (психотравмирующего) ազդեցության բացառման նպատակով: Նախագծի 217-րդ հոդվածում սահմանվում են քննիչ դատավորի կողմից տուժողի, վկայի հարցաքննության առանձնահատկությունները (ցուցմունքների դեպոնացում): Այսպես, դատախազը, պաշտպանը իրավունք ունեն միջնորդել քննիչ դատավորի կողմից տուժող, վկա հանդիսացող անձի հարցաքննության վերաբերյալ: Մինչդատական վարույթն իրականացնող անձը իրավասու է դատախազին դիմել քննիչ դատավորի մոտ վկայի կամ տուժողի ցուցմունքների դեպոնացնելու միջնորդություն ներկայացնելու վերաբերյալ: Նման առաջարկին վարույթն իրականացնող անձը կցում է վկայի, տուժողի ցուցմունքները դեպոնացնելու անհրաժեշտությունը հավաստող քրեական գործի նյութերը: Ներկայացված նյութերը ուսումնասիրելուց հետո դատախազը մեկ օրվա ընթացքում որոշում է կայացնում քննիչ դատավորին ցուցմունքների դեպոնացման միջնորդություն

ներկայացնելու վերաբերյալ: Քննիչ դատավորը միջնորդությունը ուսումնասիրում է այն ստանալուց հետո 3 օրվա ընթացքում և ուսումնասիրման արդյունքում պատճառաբանված որոշում է կայացնում միջնորդությունը բավարարելու կամ մերժելու մասին: Միջնորդությունը բավարարելու դեպքում քննիչ դատավորն առաջին իսկ հնարավոր ժամկետն է նշանակում հարցաքննության համար, որի մասին տեղեկացվում են դատախազը, կասկածյալը և նրա պաշտպանը: Քննիչ դատավորի՝ միջնորդությունը մերժելու մասին որոշումը կարող է բողոքարկվել: Ցուցմունքները դեպոնացնելու մասին դատախազի միջնորդությունը քննիչ դատավորի կողմից մերժելը չի խոչընդոտում ցուցմունքները դեպոնացնելու միջնորդությամբ կրկին դիմել դատարան, եթե ծագել են այնպիսի հանգամանքներ, որոնք հիմնավորում են ցուցմունքները դեպոնացնելու անհրաժեշտությունը: Քննիչ դատավորի կողմից տուժողի և վկայի հանցաքննությունը իրականացվում է այն անձանց ներկայությամբ, ովքեր միջնորդել են ցուցմունքների դեպոնացման համար: Կասկածյալը հարցաքննությանը չի հրավիրվում, եթե նրա ներկայությունը հարցաքննությանը կարող է վտանգել տուժողի, վկայի անվտանգությունը: Պաշտպանը կարող է քննիչ դատավորին միջնորդել՝ աջակցելու իրեն անձանց հարցաքննության կանչելու հարցում: Ծանուցում ստացած կասկածյալի չներկայանալը չի խոչընդոտում հարցաքննության իրականացմանը: Հարցաքննությունը չի իրականացվում, եթե ծանուցում ստացած դատախազը կամ պաշտպանը չեն ներկայացել հարգելի պատճառով և նախապես տեղեկացրել են դրա մասին դատարանին: Եթե դատավարության մասնակիցը, ով միջնորդել է հարցաքննություն իրականացնելու մասին, չի ներկայանում հարցաքննությանը կամ քննիչ դատավորին չի ներկայացնում այն անձին, ում հարցաքննության մասին նա միջնորդել է, հարցաքննությունը չի իրականացվում: Հարցաքննության ավարտից հետո քննիչ դատավորը դատական նիստի՝ վկայի ցուցմունքների դեպոնացման մասին արձանագրությունը ուղարկում է դատախազին՝ քրեական գործի նյութերին կցելու համար: Անձինք, ում ցուցմունքները դեպոնացվել են մինչդատական վարույթի ընթացքում, չեն կանչվում դատական նիստին:

Ղազախստանի քր. դատ. օր-ի նախագծում նախատեսված է նաև անչափահաս տուժողի և վկայի հարցաքննության առանձնահատկությունները, ըստ որի՝ դատական նիստին չեն կանչվում և

չեն հարցաքննվում անչափահաս վկան կամ տուժողը, եթե նրանց ցուցմունքները մինչդասական վարույթում քննիչ դատավորի կողմից դեպոնացվել են:

Ինչպես նկատում ենք, նշված երկրներում վկայի ցուցմունքների դեպոնացման հիմքերից է այն, որ վկան կամ տուժողը օբյեկտիվ, այդ թվում՝ հիվանդության պատճառներով, չի կարող ներկայանալ դատաքննությանը: Սակայն, առանձին պետություններում նման դեպքերի համար նախատեսված է ոչ թե ցուցմունքների դեպոնացում, այլ հեռահարցաքննության հնարավորություն: Այսպես, *Խորվաթիայի 2003թ.-ի* քրեական դատավարության ակտի 247-րդ հոդվածի, 248-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ եթե վկան տարիքի, առողջության կամ հաշմանդամության պատճառով չի կարող ներկայանալ դատարան, ապա նա կարող է ցուցմունք տալ իր գտնվելու վայրում: Այդ վկաները կարող են հարցաքննվել տեխնիկական միջոցների կիրառմամբ՝ հարցաքննության տեսաձայնագրմամբ:

*ԱՄՆ-ի քրեական դատավարության դաշնային* կանոնների (2012թ.-ի դեկտեմբերի 1-ի դրությամբ) 15-րդ կանոնի համաձայն՝ մի կողմը կարող է դեպոնացնել ապագա վկայի ցուցմունքները՝ դրանք դատաքննության համար պահպանելու նպատակով: Գատարանը կարող է բավարարել ցուցմունքները դեպոնացնելու մասին կողմի միջնորդությունը բացառիկ հանգամանքների դեպքում՝ ելնելով արդարադատության շահերից: Եթե դատարանը որոշում է դեպոնացնել ցուցմունքները, ապա այն կարող է նաև պահանջել այն վկայից, որի ցուցմունքները դեպոնացվում են, ներկայացնել իր տիրապետության ներքո գտնվող ցանկացած նյութ, ներառյալ ցանկացած գիրք, թերթ, փաստաթուղթ, արձանագրություն, ձայնագրություն կամ որևէ այլ տվյալ:

ԱՄՆ-ի քրեական դատավարության դաշնային կանոններով նախատեսված է, որ *վկան, ով արգելանքի է վերցված* ըստ 18 U.S.C. §3144-ի<sup>4</sup>, կարող է պահանջել դեպոնացնել իր ցուցմունքները՝ դրա վերաբերյալ ներկայացնելով գրավոր միջնորդություն և կողմերին ծանուցելով այդ մասին: Այնուհետև դատարանի հրամանով կարող է իրականացվել ցուցմունքների դեպոնացում, իսկ վկան ազատ է արձակվում դեպոնացման արձանագրությունը երդմամբ ստորագրելուց հետո:

Կանոն 15(c)–ով սահմանվում է վկայի ցուցմունքների դեպոնացմանը մեղադրյալի մասնակ-

ցության կարգը: Կանոններով տարանջատված է վկայի ցուցմունքների դեպոնացմանը կալանավորված մեղադրյալի և ազատության մեջ գտնվող մեղադրյալի մասնակցության առանձնահատկությունները: Այսպես, *կալանավորված մեղադրյալին* վկայի ցուցմունքի դեպոնացմանը պետք է ներկայացնի այն կալանավարի աշխատակիցը, որտեղ պահվում է մեղադրյալը: Մեղադրյալը չի ներկայացվում ցուցմունքների դեպոնացմանը, եթե գրավոր ձևով հրաժարվում է դեպոնացմանը մասնակցելու իրավունքից կամ հեռացվում է դեպոնացման գործընթացից, եթե նախկինում զգուշացվել է դեպոնացման ընթացքում կարգազանց վարքագիծ դրսևորելու անթույլատրելիության մասին, սակայն շարունակվում է դրսևորել նման վարքագիծ:

*Ազատության մեջ գտնվող մեղադրյալը* իրավունք ունի միջնորդել դատարանին մասնակցելու վկայի ցուցմունքի դեպոնացմանը: Եթե կառավարությունը Կանոն 15(d)–ով նախատեսված կարգով<sup>5</sup> *հոգում է դեպոնացմանը մասնակցելու հետ կապված մեղադրյալի ծախսերը*, սակայն մեղադրյալը չի ներկայանում ցուցմունքի դեպոնացմանը, ապա հիմնավոր պատճառի բացակայության դեպքում մեղադրյալը հրաժարվում է ներկա լինելու իրավունքից և այդ իրավունքի հիման վրա դեպոնացում անցկացնելու և դեպոնացված ցուցմունքները օգտագործելու դեմ առարկելու իրավունքից:

Կանոն 15(c) (3)–ով կարգավորվում է առանց մեղադրյալի ներկայության ԱՄՆ-ի տարածքից դուրս գտնվող վկայի ցուցմունքների դեպոնացումը: Այսպես, ԱՄՆ-ի տարածքից դուրս գտնվող վկայի դեպոնացումն առանց մեղադրյալի ներկայության կարող է իրականացվել, եթե դատարանը կոնկրետ գործի հանգամանքներով պարզում է հետևյալը՝

1. ծանր հանցագործություններով քրեական հետապնդման նպատակով վկայի ցուցմունքը կարող է կարեւոր ապացույց համարվել գործի փաստական հանգամանքների հաստատման համար,
2. մեծ հավանականություն կա, որ հնարավոր չի լինի ապահովել վկայի մասնակցությունը դատաքննությանը,
3. վկայի ներկայությունը ԱՄՆ-ում իրականացվող դեպոնացմանը հնարավոր չէ,
4. մեղադրյալը չի կարող ներկա գտնվել այլ երկրում գտնվող վկայի հարցաքննությանը, որովհետև.
  - ա) երկիրը, որտեղ գտնվում է վկան, թույլ չի տա մեղադրյալին ներկա լինել դեպոնացմանը,
  - բ) հնարավոր չէ կալանավորված մեղադրյա-

### ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

լի անվտանգ փոխադրել վկայի գտնվելու երկիր և այնտեղ ապահովել նրա պաշտպանությունը,

զ) ազատության մեջ գտնվող մեղադրյալի համար ոչ մի ողջամիտ պայման չի կարող երաշխավորել նրա ներկայությունը դեպոնացման, դատաքննության կամ դատապարտման ընթացքում,

5. մեղադրյալը ողջամիտ միջոցներով կարող է մասնակցել այլ երկրում գտնվող վկայի ցուցմունքների դեպոնացմանը:

ԱՄՆ-ում քրեական դատավարությունում ցուցմունքների դեպոնացումն իրականացվում է քաղաքացիական դատավարության դաշնային կանոններով սահմանված կարգով, եթե այլ բան նախատեսված չէ քրեական դատավարության դաշնային կանոններով կամ դատարանի որոշմամբ, բացառությամբ.

1) Գեպոնացման հարցաքննության և խաչաձև հարցաքննության ծավալը և ձևը պետք է համապատասխանեն դատավարության ընթացքում թույլատրելի ծավալին ու ձևին:

2) Գեպոնացման ընթացքում կառավարությունը մեղադրյալին և նրա պաշտպանին պետք է տրամադրի իր տիրապետության ներքո գտնվող ցանկացած նյութ կամ վկայի պնդում, որոնց ծանոթանալու հնարավորություն կունենար մեղադրյալը դատաքննության ընթացքում:

Առանձին պետություններում նախատեսված է արգելանքի վերցված մեղադրյալին դատարանի կողմից հարցաքննելու հնարավորություն: Այսպես, Գերմանիայի քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ պարագրաֆի համաձայն՝ մեղադրյալը պետք է անհապաղ ներկայացվի դատարան և հարցաքննվի: Բերման ենթարկելու որոշման հիման վրա նա կարող է ձերբակալվել մինչև բերման ենթարկելու պահից հաջորդ օրվա վերջը: Այս նորմը վերաբերում է ոչ թե մեղադրյալի խոստովանական ցուցմունքների դեպոնացմանը, այլ արգելանքի վերցված անձին դատարան ներկայացնելու և այնտեղ հարցաքննելու մասին, որը նպատակ

է հետապնդում դատարանի կողմից ստուգել արգելանքի վերցնելու իրավաչափությունը:

Այսպիսով, իրավահամեմատական վերլուծության արդյունքում կարելի է կատարել հետևյալ եզրահանգումները.

1. Արտասահմանյան երկրներում ցուցմունքների դատական դեպոնացումն ունի լայն տարածում, ինչով ապահովվում են մի կողմից քրեական արդարադատության արդյունավետությունը, դատաքննության անմիջականության սկզբունքը, մյուս կողմից՝ մեղադրյալի՝ իր դեմ ցուցմունք տված անձի հարցաքննության իրավունքը:

2. Արտասահմանյան երկրներում նախատեսված է առավելապես վկաների և տուժողի ցուցմունքների դատական դեպոնացում, եթե վկան կամ տուժողը օբյեկտիվորեն չեն կարող մասնակցել դատաքննությանը (հիվանդություն, այլ պետությունում գտնվել), կամ նրանց մասնակցությունը դատաքննությանը նպատակահարմար չէ՝ նրանց անվտանգության նկատառումներից ելնելով:

3. Մեղադրյալի խոստովանական ցուցմունքների դեպոնացման ինստիտուտ նախատեսված չէ: Առանձին պետություններում խոսվում է միայն արգելանքի վերցված մեղադրյալին դատարանի կողմից հարցաքննելու հնարավորության մասին, որի նպատակը ոչ թե ցուցմունքների դեպոնացումն է, այլ արգելանքի վերցնելու իրավաչափության դատական գնահատումը:

Ելնելով վերլուծության եզրահանգումներից՝ առաջարկում ենք ՀՀ քր. դատ. օր-ի Նախագծից հանել մեղադրյալի ինքնախոստովանական ցուցմունքների պատշաճությունն ապահովելու նպատակով նրա ցուցմունքների դատական դեպոնացման մասին դրույթները:

<sup>1</sup> Տե՛ս Ղամբարյան Ա., Բաղդասարյան Գ. Գատարանում նախաքննական ցուցմունքների հրապարակումը և ցուցմունքների դատական դեպոնացումը: «Օրինականություն», 2013, թիվ 75, էջեր 37-47:  
<sup>2</sup> Տե՛ս Ииѳопреcc N36.  
<sup>3</sup> Տե՛ս <http://www.zakon.kz/4526068-dose-its-na-proekt-ugolovno.html> (5 ապրիլի 2013թ. դրությամբ):  
<sup>4</sup> Տե՛ս Տվյալ դեպքում խոսքը է գնում վկայի ցուցմունքները դեպոնացնելու նպատակով նրան բերման ենթարկելու մասին:  
<sup>5</sup> Տե՛ս Կանոն 15 (d)-ի համաձայն՝ եթե դեպոնացումն իրականացվել է կառավարության որոշմամբ, ապա դատարանը կարող է, իսկ մեղադրյալի կողմից դեպոնացմանը մասնակցելու ծախսերը վճարելու

անհնարինության դեպքում դատարանը պետք է պահանջի, որ կառավարությունը վճարի հետևյալ ծախսերը՝ (1) դեպոնացմանը մասնակցելու համար մեղադրյալի և մեղադրյալի փաստաբանի երթևեկելու և ապրելու միջոցների հետ կապված ծախսերը, (2) դեպոնացման պատճենի համար կատարվող ծախսերը:

<sup>6</sup> Տե՛ս «Beschuldiger» - կասկածելի անձ, որի նկատմամբ իրականացվում է քրեական վարույթ, սակայն դեռևս նրա նկատմամբ հրապարակային քրեական մեղադրանք չի ներկայացվել և գործով դատաքննություն չի սկսվել:

## РЕЗЮМЕ

### *Судебная депонация показаний предварительного следствия (сравнительно-правовой анализ)*

В результате сравнительно-правового анализа можно прийти к следующим выводам:

1. В иностранных государствах судебная депонация показаний имеет широкую распространенность, чем, с одной стороны, обеспечивается эффективность уголовного правосудия, принцип непосредственности судебного производства, с другой – право обвиняемого допросить лицо, давшее против него показания.
2. В иностранных государствах преимущественно предусматривается возможность судебной депонации показаний потерпевшего и свидетелей, если свидетель либо потерпевший по объективным причинам (болезнь, нахождение на территории иного государства) не могут участвовать в процессе судопроизводства либо их участие во время судопроизводства нецелесообразно, исходя из необходимости обеспечения их безопасности.
3. Не предусмотрен институт депонации признательных показаний обвиняемого. В отдельных государствах говорится лишь о возможности допроса судом взятого под стражу обвиняемого, однако в данном случае целью такого допроса является не депонация показаний, а судебная оценка правомерности взятия лица под стражу.

Исходя из вышеуказанных тезисов, предлагается изъять из проекта уголовно-процессуального кодекса РА положения о судебной депонации показаний обвиняемого с целью установления надежности признательных показаний обвиняемого.

## SUMMARY

### *Judicial deponation of indications of preliminary investigation (comparative and legal analysis)*

As a result of the comparative and legal analysis it is possible to come to the following conclusions:

1. In the foreign states the judicial deponation of indications has prevalence, than, on the one hand, efficiency of criminal justice, the principle of a spontaneity of judicial production is provided, with another – the right accused to interrogate the person which has given against it evidences.
2. In the foreign states possibility of a judicial deponation of indications of the victim and witnesses if the witness or the victim for the objective reasons (an illness, stay in the territory of other state) can't participate in process of legal proceedings is mainly provided or their participation during legal proceedings is inexpedient, proceeding from need of ensuring their safety.
3. The institute of a deponation of grateful indications of the accused isn't provided. In the certain states it is spoken only about possibility of interrogation by court detained accused, however in this case the purpose of such interrogation is not the deponation of indications, and a judicial assessment of legitimacy of a capture of the person under guards.

Proceeding from the above theses, it is offered to withdraw from the draft of the code of criminal procedure of RA of the provision on a judicial deponation of indications accused for the purpose of establishment of reliability of grateful indications of the accused.

**ՌՈՒԶԱՆՆԱ ՀԱԿՈՒՅԱՆ**

ՀՀ վարչական դատարանի դատավոր

**ԻՐԱՎԱՔԱՆԱԿԱՆ ՖԻԿՑԻԱՅԻ ԷՎՈԼՅՈՒՑԻԱՆ  
ԵՎ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ  
ԱՅՆ ՆԵՐԴՆԵԼՈՒ ՈՒՂԻՆԵՐԸ**

Հռոմեական իրավունքն ի սկզբանե հանդիսացել է հին և ազգային նեղ նկարագրով բավականաչափ պարզ համակարգ, սակայն այն զարգացել է Հռոմի հզորացմանը և կյանքի ու հասարակական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց: Այն փոխել է իր բնույթը՝ վերակառուցվելով անհատապաշտության սկզբունքներով, նրա հենաքարերն են դարձել անձի ազատությունը, սեփականության ազատությունը, պայմանագրերի և կտակի ազատությունը:

Տնտեսական հարաբերությունների զարգացման արդյունքում գործարար հարաբերությունների մասնակիցներն էին հանդիսանում տարբեր ազգությունների առևտրականներ, և հռոմեական մագիստրները պարտավոր էին այդ հարաբերությունների ժամանակ ծագող վեճերը լուծելու նպատակով մշակել համապատասխան նորմեր: Հին ազգային հռոմեական իրավունքն այդ նպատակի համար պիտանի լինելու չէր կարող: Անհրաժեշտ էր ամեն տեսակի տեղական և ազգային առանձնահատակություններից զերծ նոր իրավունք, որը կարող էր միատեսակ բավարարել հռոմեացիներին և հույներին, եգիպտացիներին և գալերին, այսինքն՝ գործարար և այլ բնույթի հարաբերությունների բոլոր մասնակիցներին՝ անկախ նրանց ազգությունից: Անհրաժեշտ էր ոչ թե ինչ որ ազգային իրավունք, այլ համաշխարհային, համընդհանուր իրավունք, և հռոմեական իրավունքը ներմուծվում է այդ համընդհանրության սկզբունքով, միջազգային այնպիսի սովորույթներով, որոնք դարձրել մշակվել էին միջազգային հարաբերություններում: Հռոմեական իրավունքը տևական ժամանակով ձևավորված այդ սովորույթներին տվել է իրավաբանական պարզություն, ուժ և կենսունակություն:

Անընդհատ զարգանալով՝ հռոմեական իրավունքը դարձավ ողջ անտիկ աշխարհի համընդհանուր իրավունքը: Արդյունքում՝ բազմաթիվ պետություններ, հռոմեական իրավունքը հարմարեցնելով իրենց սոցիալ-տնտեսական պայմաններին, իրականացրին հռոմեական իրավունքի ռե-

ցեպցիա (reception- փոխառություն):

Ֆրանսիացի հայտնի իրավագետ Ռ.Դավիդի խոսքերով՝ Հռոմեական կայսրությունն ունեցել է փայլուն քաղաքակրթություն, և հռոմեական հանճարն ստեղծել է աշխարհում նախադեպը չունեցող իրավաբանական համակարգ՝<sup>1</sup>:

Հռոմեական իրավունքի բազմաթիվ իրավական եզրույթներ մինչ օրս օգտագործվում են բազմաթիվ երկրների օրենսդրության մեջ: Այդօրինակ երկարակեցության պատճառը դրանց առանձնահատուկ կարևորությունն է ողջ իրավական համակարգի համար: Եվ այդ տեսանկյունից բացառություն չէ իրավաբանական ֆիկցիան. լատիներեն տառացի թարգմանությամբ «ֆիկցիա» նշանակում է հորինվածք, գոյություն չունեցող, անիրական, ոչ ռեալ:

Որպես իրավաբանական տեխնիկայի միջոց, մշակվելով հռոմեացի իրավաբանների կողմից, ֆիկցիան դարձավ հասարակական հարաբերությունները կարգավորող առավել յուրահատուկ գործիքներից մեկը, որը, ձևավորված լինելով հնագույն ժամանակներում, հայտնի ու որոշակի չափով տարածված է ժամանակակից բոլոր իրավական համակարգերում և ոչ միայն չի կորցրել իր նշանակությունը, այլև նկատելի ընդլայնել է կիրառման ոլորտները:

Ֆիկցիայի կիրառումն ի սկզբանե հատուկ է եղել առավելապես հռոմեական մասնավոր իրավունքին, սակայն, հարկ է նշել, որ այն բնորոշ է եղել նաև հանրային իրավունքին: Հռոմեական իրավունքում իրավաբանական ֆիկցիայի հասկացության սահմանում չի տրվել, ո՛չ Գ-այի ինստիտուտներում, ո՛չ Ուլպիանոսի դիգեստներում, ոչ էլ այլ իրավական ակտերում ու հռոմեացի իրավաբանների աշխատություններում տեղ չի գտել իրավաբանական ֆիկցիայի հասկացության նկարագիրը:

Տարբերությ իրավական սահմանումների ու օրենսդրության վերլուծության արդյունքներով *իրավաբանական ֆիկցիան, թերևս, կարելի է բնո-*

րոշել որպես իրավական հնարք, որը ենթադրում է փաստի գոյությունը՝ անկախ դրա իրական լինելուց:

Ֆիկցիայի մասին ամբողջական ու համարժեք պատկերացում կազմելու համար, թերևս, անհրաժեշտ է պարզել դրա ծագման տրամաբանությունը՝ ինչպիսի պայմաններում է ձևավորվել այն, որոնք են եղել դրա՝ իրավունք ներմուծելու շարժառիթներն ու նպատակները, որքանով կարող են սուտը, կեղծիքը, հորինվածքը թույլատրելի համարվել ճշմարտության ու արդարության ոլորտում:

Ֆիկցիան ունի գոյության երկար պատմություն: Առավել վաղ ժամանակաշրջանում ֆիկցիայի ի հայտ գալն իրավունքում հնարավորություն է ընձեռել վերլուծելու այդ երևույթը, դրա արտահայտման սկզբնական ձևավորման տրամաբանական կանոնները:

Ֆիկցիայի դասական տրամաբանության էությունն առավել հստակ նկատելի է դառնում հռոմեական իրավունքում իրավաբանական անձի գաղափարի կայացման ժամանակ: Հին հռոմեական իրավունքը նախատեսում էր իրավունքներ միայն անհատների համար: Մինչդեռ, հռոմեացի իրավաբանները նկատել էին, որ որոշ դեպքերում գույքը չի պատկանում առանձին քաղաքացիների կամ մի խումբ ֆիզիկական անձանց, այլ ամրակցված է միավորումներին, կազմակերպություններին:

Կազմակերպություններին իրավունքներ պատկանելու, քաղաքացիական շրջանառությունում նրանց մասնակցության փաստերը ճանաչելով՝ հռոմեացի իրավաբանները, այդ կազմակերպությունների կարգավիճակի խնդրի լուծումը չգտնելով օրենքներում, ստիպված են եղել փնտրել՝ համեմատություն անցկացնելով քաղաքացիական իրավունքի սուբյեկտների՝ քաղաքացիների, ֆիզիկական անձանց կարգավիճակի հետ և հաստատել, որ կազմակերպությունը գործում է անձի փոխարեն, անձի կարգավիճակով (**personae vice**):

Հռոմեական իրավունքին հայտնի չի եղել «իրավաբանական անձ» հասկացությունը: Կազմակերպության սահմանման համար լատիներենում անգամ չի եղել հատուկ տերմին: Հետագայում հռոմեացի իրավաբանների կողմից մշակվել է կազմակերպության իրավական էությունը: Նրանք կազմակերպությունները համեմատում էին մարդու, ֆիզիկական անձի հետ և նկատում էին, որ կազմակերպությունները գործում են personae vice (անձի փոխարեն, որպես անձ), privatorum loco (առանձին անձանց փոխարեն, առանձին անձանց վիճա-

կում): Դրանում կարելի է տեսնել «իրավաբանական անձի ֆիկցիայի տեսության» սաղմը, որն ի հայտ է եկել միջնադարում և իր տարածումը գտել արտասահմանյան իրավունքի տեսության մեջ<sup>2</sup>:

Փաստորեն, կազմակերպությունների իրավական կարգավիճակի հիմքում դրվել է ֆիզիկական անձանց իրավաբանական բնույթը: Այսպիսով, կազմակերպությունը, չհանդիսանալով ֆիզիկական անձ, գործում էր «որպես թե» ֆիզիկական անձ՝ քաղաքացի, մարդ: Քաղաքացիաիրավական շրջանառության մեջ կազմակերպությունը՝ «որպես թե» ֆիզիկական անձ, հանդիսանում էր համարյա ֆիզիկական անձի կարգավիճակի նոր «երևակայական» հորինվածքի տրամաբանության արդյունք:

Օրենքի օգնությամբ ծագած ֆիկցիան սահմանվել է Կորնելիուսի կողմից **fictio legis Corneliae**: Ցիվիլ իրավունքին (ius civile) համապատասխան իրավունակությամբ օժտված էր միայն Հռոմի քաղաքացու կարգավիճակ ունեցող անձը: Գերի ընկած հռոմեացին դառնում էր ստրուկ՝ կորցնելով ոչ միայն ազատությունը, այլ նաև իրավունակությունն ու Հռոմի քաղաքացիությունը: Հենց այդ պատճառով, եթե անձը մահանում էր գերի եղած ժամանակ, ապա նրա գույքը չէր դառնում ժառանգական և չէր կարող ժառանգվել ո՛չ ըստ օրենքի, ո՛չ ըստ կտակի (կտակը կորցնում էր իր ուժը անձի գերի ընկնելու պահից): Իհարկե, դա արդարացի չէր գերի ընկած անձի ժառանգների համար, այդ իսկ պատճառով Կորնելիուսի օրենքով ներմուծվեց ֆիկցիա (**fictio legis Cornelia**), որի համաձայն՝ գերության ժամանակ մահացածը համարվում էր մահացած գերի դառնալու պահից, այսինքն՝ այն պահից, երբ նա դեռևս համարվում էր ազատ և հանդիսանում էր Հռոմի քաղաքացի:

Ֆիկցիայի նշված տեսակին, որի կիրառման սահմանները հետագայում ընդլայնվեցին, իրենց աշխատություններում անդրադարձել են ռուս իրավագետներ Մ.Բարտոշեկը և Ս.Լ.Մուրոմցևը: «In omnibus partibus iuris is, qui reversus non est ab hostibus, quasi tunc decessisse videtur, cum captus est» - իրավունքի բոլոր ճյուղերի համար կիրառելի էր, որ թշնամիների մոտից չվերադարձած գերին համարվում էր մահացած գերի դառնալու պահից<sup>3</sup>: Այդպիսով, գերի դառնալու պահից անձին մահացած համարելու ֆիկցիան սկսեց կիրառվել ոչ միայն նրանց նկատմամբ, ովքեր մահացել էին գերի եղած ժամանակ, այլ նաև բոլոր գերիների նկատմամբ: Սակայն, եթե գերին հայրենիք էր վե-



**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ**

րադառնում, ապա այդ դեպքում գործում էր մյուս ֆիկցիան. «postliminium fingit eum qui captus est semper in civitate fuisse», ըստ որի՝ պայմանականորեն հիմք էր ընդունվում այն, որ, կարծես թե, նա գերի չէր եղել<sup>4</sup> :

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում իրավաբանական հաջորդ ֆիկցիան. «...receptum est, quotiens per eum, cuius interest condicionem non impleri, fit, quo minus impleatur, ut perinde habeatur, ac si impleta condicio fuisset» - եթե նա, ով շահագրգիռ չէ պայմանի վրա հասնելուն, խոչընդոտում է դրա վրա հասնելուն, պայմանը համարվում է վրա հասած<sup>5</sup> : Սա այն ֆիկցիաներից է, որը, անցնելով բազմադարյա պատմական ճանապարհ, իր արտացոլումն է ստացել տարբեր երկրների քաղաքացիական օրենսգրքերում: Թեև այդ երկրների օրենսդիրները կատարելագործել են նշված ֆիկցիան, այդուհանդերձ դրա իմաստը, ըստ էության, փոփոխության չի ենթարկվել: Այս կարգի ֆիկցիային կարելի է դասել նաև հետևյալ դրույթը. «In omnibus causis pro factumo accipitur id, in quo per alium morae sit, quo minus fiat» - բոլոր վեճերում համարվում է, որ մյուս կողմի ձգձգման պատճառով տեղի չունեցած իրադարձությունն արդեն տեղի է ունեցել<sup>6</sup> :

Ժառանգական հարաբերությունների իրավական կարգավորման ոլորտում ֆիկցիան նույնպես լայնորեն կիրառվել է: Այսպես, կտակի բովանդակությունը մեկնաբանելիս կիրառվել է հետևյալ հասուկ ֆիկցիան. «Quae in testamentum ita sunt scripta, ut intellegi non possint: perinde sunt, ac si scripta non essent» - անհասկանալի բառերը կտակում համարվում են չգրված, կամ, եթե կտակը պարունակում է իրարամերժ կարգադրություններ, դրանք երկուսն էլ կորցնում են իրենց ուժը<sup>7</sup> :

Հին Հռոմում ձևավորված հաջորդ ֆիկցիան, համաձայն որի՝ ցանկացած արարք, որը կատարվում է իր մարմինը պաշտպանելու նպատակով, համարվում է իրավաչափ - «Guod guisgue ob tutelam c-oris rui fecil, iure fecis-se existimatur»<sup>8</sup>, ըստ էության, հանդիսանում է անհրաժեշտ պաշտպանության ինստիտուտի նախատիպը, որը հետագայում փոխառվեց տարբեր երկրների իրավական համակարգերում:

Ինչպես վերը թվարկված, այնպես էլ չհիշատակված իրավաբանական ֆիկցիայի այլ տեսակների վերլուծության արդյունքում կարելի է հետևություն անել այն մասին, որ *հռոմեական իրավունքում իրավաբանական ֆիկցիայի առաջին և հիմ-*

*նական բնորոշ գիծը հանդիսանում է այն, որ ֆիկցիան նախատեսում էր գոյություն ունեցող հանգամանքները ճանաչել որպես գոյություն չունեցող և, ընդհակառակը, գոյություն չունեցողը՝ որպես գոյություն ունեցող:*

Հռոմեական ֆիկցիայի երկրորդ բնորոշ գիծն է հանդիսանում այն, որ դրա կիրառման բոլոր դեպքերում հին հռոմեացի իրավաբանները գիտակցել են ֆիկցիայում պարունակվող դրույթների սուտ, կեղծ, ոչ իրական լինելը:

*Հռոմեական ֆիկցիայի հաջորդ բնորոշ գիծը ֆիկցիաներում պարունակվող կեղծ դրույթների իրավաբանական հերքման անհնարինությունն էր:* Իհարկե, փաստացի կարելի էր ապացուցել, որ գերի ընկած հռոմեացին ողջ է, վնասվածքներով փոխանցված գույքն իրականում վերադարձվել է կամ կտակի մեջ անհասկանալի բառերն իրականում գրվել են, բայց այդ ամենը չի ունեցել որևէ իրավաբանական նշանակություն: Այլ կերպ ասած՝ դատարանը իրավաբանական ֆիկցիայի հիման վրա որոշում ընդունելիս ուշադրություն չէր դարձնում դրանց հակասող, սակայն իրականությանը համապատասխանող ապացույցների վրա:

Այսպիսով, ուսումնասիրելով իրավաբանական ֆիկցիայի վերը նկարագրված օրինակները, կարելի է եզրակացնել, որ հռոմեական իրավունքում դրանք իրականացնում էին ոչ միայն իրավունքով չկարգավորված հասարակական հարաբերությունների վրա իրավական նորմերի տարածման գործառույթ, այլև օգտագործվում էին որպես իրավաբանական տնտեսման միջոց, այսինքն՝ դրանք իրենցից ներկայացնում էին Հին Հռոմի իրավական համակարգում ծագող տարաբնույթ հարցերի առավել արագ և պարզ լուծման օրինական միջոցներ:

Այլ հարց է, որ հռոմեացիներն իրավաբանական ֆիկցիան օգտագործում էին նույնիսկ այնտեղ, որտեղ հնարավոր էր, ավելին՝ արդարացի կլիներ իրավակարգավորումներն իրականացնել նաև առանց դրա: Օրինակ՝ կտակի մեջ անհասկանալի բառերը չգրված համարելու մասին ֆիկցիայի փոխարեն կարելի էր օգտագործել հետևյալ ձևակերպումը. կտակի պայմանների մեկնաբանման ժամանակ ուշադրության չեն արժանանում դրանում պարունակվող անհասկանալի բառերը: Որևէ իրավական դրույթ ձևակերպելու համար «գլուխ կոտրելու» փոխարեն հռոմեացիները պարզապես դիմում էին իրավաբանական ֆիկցիայի օգնությանը:

Ընդ որում, թեև ֆիկցիան լայն տարածում ուներ իրավունքի տարբեր ճյուղերում, այդուհանդերձ իրավական նորմերում երբևէ չի օգտագործվել «ֆիկցիա» տերմինը: Այդ հանգամանքը, սակայն, բնավ չի նսեմացրել ֆիկցիայի դերն ու նշանակությունը կամ մերժել դրա գոյությունը, քանզի բովանդակային կտրվածքով այն հաստատուն կերպով ներդրվել է իրավական համակարգ:

Ինչպես վերը նշվեց, հռոմեական իրավունքում ֆիկցիաները դրսևորվում էին ոչ միայն մասնավոր, այլ նաև հանրային իրավունքում՝ հետևելով հանրահայտ այն բանաձևին, համաձայն որի՝ հանրային իրավունքն է նկատի ունի պետության շահը (ad statum rei romanae spectata): Դրանք հաճախ իրենցից ներկայացնում էին պետության կամայականությունները, ինչպես նաև պետական իշխանության կողմից օգտագործվում էին այս կամ այն քաղաքական որոշումներն էլ կատար անելու նպատակով:

Այսպես, բարոյականության, քաղաքականության և ընտանեկան կյանքի բնագավառներում, ավանդական հռոմեական հիմքերի վերականգնման նպատակով, հռոմեացի քաղաքական գործիչ, պրինցիպատի հիմնադիր Օկտավիան Օգոստոսի նախաձեռնությամբ մշակվեց հատուկ օրենք՝ Հուլիոսի և Պապիի - Պուպիի օրենքները: Այն բաղկացած էր երեք բաժնից: Առաջինը «Անուանության կարգի մասին» Հուլիոսի օրենքն էր, երկրորդը՝ «Շնանալու մասին» օրենքը, և երրորդը՝ «Շքեղության ծախսերի մասին» օրենքը<sup>9</sup>: Նշված նորմատիվ ակտերը խստագույնս սահմանում էին վերին խավերի անուանալու պարտականությունը, իրավունքների սահմանափակումներ չամուսնացածների և անգավակների համար, արտոնություններ երեխա ունեցողների համար («Երեք երեխաների» օրենքը), ընտանիքի գլխի իշխանության ուժեղացում և շնանալու համար խիստ պատիժ:

*Իրավաբանական ֆիկցիան բնորոշ էր ոչ միայն նյութական իրավունքին, այլ նաև այն իր արտացոլումն էր ստացել դատավարական նորմերում:* Հին Հռոմում առավել լայն տարածում ունեին, այսպես կոչված, պրետորական ֆիկցիաները, որոնք իրենց արտահայտությունը ստացան ֆիկտիվ հայցերում: Ֆիկտիվ հայցեր կամ ֆիկցիայով հայցեր (actiones ficticiae) էին կոչվում այնպիսի հայցերը, որոնց բանաձևերում պրետորը հանձնարարում էր դատավորին թույլատրել իրականում գոյություն չունեցող փաստերի գոյությունը կամ, ընդհակառակը, առաջարկում էր գոյություն ունեցող

փաստերը համարել որպես գոյություն չունեցող: Հին Հռոմում ֆիկցիան լայնորեն կիրառվում էր նաև պրետորների<sup>10</sup> կողմից: Նրանք ֆիկցիան օգտագործում էին այն դեպքերում, երբ «խիստ» իրավունքն ընկնում էր ակնհայտ տրամաբանական հակասության մեջ «լավ բարքերի», «խղճի», «արդարության» մասին բնական պատկերացումների հետ:

*Այսպիսով, հռոմեական իրավունքում իրավաբանական ֆիկցիան կարելի է սահմանել որպես առանձնահատուկ հնարք, որը կեղծ դրույթը որպես ճշմարիտ ճանաչելն է. այն չունի հերքման հնարավորություն և իրավաբանորեն հնարավոր չէ հերքել:*

Իրավաբանական ֆիկցիայի առանձնահատկությունը, ըստ իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Ա.Վ.Մարկինի, կայանում է նրանում, որ այն, ըստ էության, իրենից ներկայացնում է նորմատիվ կանոնի վերածված միտումնավոր սուտ, որը թվում է, թե ոչ մի կերպ չի համապատասխանում իրավական արդարության խիստ տրամաբանությանը, և որն անհնար է պատկերացնել առանց ճշմարտության վրա հենվելու, ինչպես էլ այն բնութագրես՝ օբյեկտիվ, իրավաբանական, դատական<sup>11</sup>:

Ժամանակի ընթացքում իրավաբանական գիտության մեթոդների հետ միասին կատարելագործվել են նաև ֆիկցիայի ինստիտուտը և դրա կիրառման ոլորտները: Ի թիվս բազմաթիվ իրավաբարբերությունների, ֆիկցիայի միջոցով կարգավորվող հարաբերությունների թվին դասվեցին նաև գրական և գեղարվեստական ստեղծագործությունների պաշտպանությանն առնչվող հարաբերությունները: Այսպես օրինակ՝ «Գրական և գեղարվեստական ստեղծագործությունների պաշտպանության մասին» 09.09.1886թ. Բերնի կոնվենցիայի<sup>12</sup> 3-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ ստեղծագործությունը համարվում է հրատարակված միաժամանակ մի քանի երկրներում, եթե հրատարակված է եղել երկու կամ ավելի երկրներում առաջին հրատարակումից հետո 30 օրվա ընթացքում: Նշվածով սահմանվում է իրավաբանական ֆիկցիա ստեղծագործության միաժամանակյա հրատարակման վերաբերյալ:

*Ֆիկցիան հանդիպում է նաև միջազգային պայմանագրերում, որոնք հանդիսանում են ոչ միայն միջազգային մասնավոր, այլ նաև միջազգային հանրային իրավունքի աղբյուրներ:* Այսպես, Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին 23.05.1969թ. Վիեննայի կոնվենցիայի 23-րդ հոդ-

**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ**

վածի 2-րդ կետի համաձայն՝ եթե վերապահումն արվել է վավերացման, ընդունման կամ հաստատման ենթակա պայմանագիրը ստորագրելիս, այն պետք է պաշտոնապես հաստատվի վերապահում արած պետության կողմից իր համար այդ պայմանագրի պարտադիր լինելուն իր համաձայնությունն արտահայտելիս: Այդ դեպքում վերապահումը արված է համարվում նրա հաստատման օրը<sup>13</sup> :

Իրավունքի յուրաքանչյուր առանձին ճյուղում ֆիկցիայի կիրառումը կատարում է տարբեր գործառնություններ և իրացնում օրենսդրի քաղաքականությունը տարբեր ոլորտներում:

Որպես օրենսդրական տեխնիկայի հնարք՝ ֆիկցիան փոխարինում է իրականությանը և օգտագործվում է միայն այն դեպքում, երբ մնացած բոլոր միջոցներն ու հնարքներն այլևս ապարդյուն են, իսկ օրենսդիր գործընթացը պետք է հաղթահարի որոշակի դժվարություններ: Հենց դրանում է արտահայտվում ֆիկցիայի բացառիկությունը. այն ստիպում է գոյություն չունեցողն ընդունել որպես գոյություն ունեցող և հակառակը:

*Ֆիկցիայի՝ որպես օրենսդրական տեխնիկայի միջոցի, նշանակությունը կոչված է, որպեսզի համատեղի օրենսդրական քաղաքականության և օրենսդրական տեխնիկայի պահանջները և իրավական կոնստրուկցիաների միջոցով ապահովի իրավական նորմերի տեխնիկական ձևակերպման արդյունավետ միջոցները:*

Թեև ֆիկցիայի հասկացության լեզվաբանական նշանակությունն ունի բացասական իմաստ, այդուհանդերձ չպետք է թերագնահատել ֆիկցիայի դերն ու նշանակությունը իրավունքում: Ֆիկցիայի կարևորագույն նշանակությունը՝ օրենքին ներհատուկ, փաստերի, իրավիճակների, հասարակական հարաբերությունների արդյունավետ կարգավորումն է այն դեպքերում, երբ դրանք դուրս են մնում բնականոն կարգավորումից. դրանք կայունություն են ներմուծում հասարակական հարաբերությունների կարգավորման մեջ, սահմանափակում են չհիմնավորված կամայական որոշումների ընդունման հնարավորությունը, նպաստում են քաղաքացիների իրավունքների պաշտպանությանը, իրավունքի համակարգը դարձնում են առավել դյուրին և տնտեսող:

Ամբողջացնելով վերոգրյալը՝ կարելի է հետևություն անել, որ իրավաբանական ֆիկցիան գոյություն չունեցող փաստ է, որը, սակայն, որոշակի հանգամանքների ազդեցության ուժով օրենսդրի

կողմից ճանաչվում է իրական, գոյություն ունեցող՝ դրա ուժով դառնալով պարտադիր: Ֆիկցիան իրավունքի ձևավորման միջոց է: Այն սահմանում է իրավաբանական նորմ, որը դառնալու է պարտադիր բոլորի համար և հորինված փաստը պաշտպանելու է ցանկացած վիճարկումից:

Այսպիսով, ֆիկցիան հանդիսանում է իրականությանը հակասող իրավաբանական գիտություն, որը գիտակցաբար օգտագործվում է մի շարք իրավաբանական հետևանքների հասնելու համար: Կարելի է ասել, որ ֆիկցիայի կիրառումը հանգեցնում է իրավունքում հորինվածքի ամրապնդմանը և հանդիսանում է օգտակար սուտ: Սակայն, այդ սուտը կանխամտածված սուտ է, սուտ՝ հանում արդարության, քանի որ դրա միջոցով հաստատվում են այնպիսի հանգամանքներ, որոնք ապահովում են իրավաբանական հարաբերությունների արդարացի լուծումը: Ֆիկցիան գոյություն չունեցող երևույթ կամ իրադարձություն է՝ իրավաբանական ընթացակարգերում ճանաչվելով գոյություն ունեցող:

Գտնում ենք, որ հասարակական հարաբերությունների արդյունավետ կարգավորումն ապահովելու առումով իրապես մեծ է իրավունքում ֆիկցիայի նշանակությունը, և ամբողջությամբ իրավացի է Տ.Վ. Կաշանինան՝ ասելով, որ ֆիկցիաներն ունեն բացառապես իրավական նպատակներ, որոնցից ամենակարևորը ձգտումն է կարգ ու կանոնին և արդյունավետությանը<sup>14</sup> :

Ֆիկցիա-նորմեր են պարունակվում քաղաքացիական, քրեական, վարչական իրավունքներում, դատավարական նորմերում, և դրանց միջոցով կարգավորվող հարաբերությունները պարզապես անհնար է պատկերացնել առանց ֆիկցիայի կիրառման:

Քաղաքացիական իրավունքում ամրագրված ֆիկցիայի տեսակներից են, օրինակ՝ որդեգրումը, քաղաքացուն անհայտ բացակայող ճանաչելը, եթե նա իր մասին օրենքով սահմանված ժամկետում տեղյակ չի պահում, քաղաքացուն մահացած ճանաչելը՝ եթե օրենքով սահմանված ժամկետում նրա մասին որևէ տեղեկություն չկա: Բավականին մեծ քանակության ֆիկցիա է պարունակում նաև ժառանգական իրավունքը:

Քրեական իրավունքում արտացոլված ֆիկցիայի տեսակներից են հանդիսանում, օրինակ՝ կարծեցյալ պաշտպանության ֆիկցիան, դատվածության մարման կամ հանման ֆիկցիան: Կան նաև ընդհանուր բնույթի ֆիկցիաներ, սակայն դրանք քիչ են: Այդ ֆիկցիաներից առավել հայտնի

www.lawinstitute.am

է հետևյալը. օրենքի չիմացությունը չի ազատում պատասխանատվությունից: Բավականին տարածված ֆիկցիայի տեսակ է հանդիսանում, այսպես կոչված, սոցիալապես պատասխանատու, միջին ողջամիտ, միջին բարեխիղճ մարդու ֆիկցիան, որի էությունը կայանում է նրանում, որ իրավունքի տարբեր ճյուղերի իրավական նորմերի, այդ թվում նաև քրեաիրավական նորմերի յուրաքանչյուր հասցեատեր ենթադրվում է այնպիսի մարդ, ով և՛ կարող է, և՛ ցանկանում է, և՛ պարտավոր է դրսևորել իրեն այնպես, որպեսզի նրա վարքագիծը չխախտի համընդհանուր ճանաչում ունեցող նորմերը:

Ֆիկցիայի ամրագրումը հատկապես հանրային իրավունքում, հաշվի առնելով իրավունքի այս ճյուղի դերն ու նշանակությունը ինչպես հասարակության և դրա առանձին անհատների, այնպես էլ պետության շահերի համար, հուսալի միջոց է հանդիսանում վարչական մարմինների կամայականություններից և հատկապես անգործությունից անձանց իրավունքները պաշտպանելու առումով և ապահովում այդ իրավունքների պաշտպանությունն արդյունավետ ձևով իրականացնելու պատշաճ երաշխիք:

Վարչական մարմինների հետ հարաբերություններում ֆիկցիայի կիրառման էությունը, որպես կանոն, հանգում է հետևյալին. եթե վարչական մարմինն իրեն ուղղված անձի դիմումով խնդրարկված հարցի առնչությամբ օրենքով սահմանված ժամկետում չի ընդունում որևէ որոշում, ապա դիմողի խնդրանքը համարվում է բավարարված:

Դեռևս 13-րդ դարի Հռոմի վերջին Պապերից մեկը՝ Բոնիֆացի 8-րդը (1294-1303), իր ուղերձներից մեկում արտահայտել է հետևյալ միտքը. «Լռությունը համաձայնության նշան է» (լատ. Silentium videtur confessio), որը հետագայում ներմուծվել է եկեղեցական իրավունք<sup>15</sup>: Հենց այս հանրահայտ արտահայտությունն էլ, ըստ էության, ամփոփվել է մի շարք երկրների, այդ թվում՝ նաև Հայաստանի Հանրապետության հանրային հարաբերությունները կարգավորող օրենսդրությունում կիրառվող ֆիկցիայի մեջ, որի ուժով ակնկալվող վարչական ակտի ընդունված լինելը վարչական մարմնի դրսևորած անգործության ուղղակի հետևանք է:

Ֆիկցիան բավական լայնորեն կիրառվում է նաև դատավարական նորմերում: Դատավարական իրավունքի նորմերում ֆիկցիայի գոյության հարցերին անդրադարձել է ճանաչված դատավարագետ Ի. Չայցևը՝ բերելով մի շարք օրինակներ:

Այսպես, պարտադիր պահանջ է հանդիսանում դատարանի կողմից գործին մասնակցող անձանց դատական նիստի ժամանակի և վայրի մասին ծանուցումը: Հակառակ դեպքում այն դատական ակտն անվերապահորեն բեկանելու հիմք է: Իսկ ինչպե՞ս պետք է վարվել այն դեպքում, եթե գործի քննության ընթացքում շահագրգիռ անձը փոխել է բնակության վայրը՝ այդ մասին չհայտնելով դատարանին: Այդ դեպքում բավարար հիմքեր կան ենթադրելու, որ քաղաքացին խուսափում է դատարանից: Այդպիսի իրավիճակում հնարավոր է և նպատակահարմար միայն մեկ տարբերակ. ծանուցագիրն ուղարկել նախկին հայտնի հասցեով, որից հետո կատարված համարել անձի ծանուցված լինելու դատավարական պարտականության կատարումը և գործը քննել ըստ էության<sup>16</sup>:

Ի. Չայցևի կողմից նկարագրված դատավարական ֆիկցիայի օրինակը տեղ է գտել նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածում, որով կարգավորված են դատական նիստի ժամանակի և վայրի մասին դատավարության մասնակիցների պատշաճ ծանուցման հարցերը: Նշված հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ դատավարության մասնակիցները և նրանց ներկայացուցիչները, ինչպես նաև այլ անձինք պարտավոր են դատարանին հայտնել գործի քննության ընթացքում իրենց հասցեի փոփոխության մասին: Նման հաղորդման բացակայության դեպքում ծանուցագիրն ուղարկվում է նրանց վերջին հայտնի հասցեով և համարվում է հանձնված, թեև ովև հասցեատերն այդ հասցեում այլևս չի բնակվում կամ չի գտնվում:

Դատավարական իրավունքում նկարագրված ֆիկցիայի ամրագրումը փաստորեն հանդիսանում է գործի քննության ընթացքում իրենց ծանուցման հասցեի փոփոխության մասին դատավարության մասնակիցների կողմից դատարանին հայտնելու պարտականությունը չկատարելու իրավական հետևանք:

Ֆիկցիա-նորմ է հանդիսանում նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 8-րդ մասը: Այսպես, օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվելով հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում հայցադիմումի պատասխան ներկայացնելու պատասխանողի պարտականությունը՝ նույն հոդվածի 8-րդ մասում ֆիկցիայի միջոցով օրենսդիրը սահմանել է այն իրավական հետևանքը, որը վրա է հասնում այդ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

պարտականությունը չկատարելու արդյունքում: Համաձայն օրենսգրքի 83-րդ հոդվածի 8-րդ մասի՝ պատասխան չներկայացնելը դատարանը կարող է գնահատել որպես պատասխանողի կողմից հայցվորի վկայակոչած փաստերի ընդունում:

Բավական հետաքրքիր ֆիկցիա է ամրագրված ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 90-րդ հոդվածի 2-րդ մասում, համաձայն որի՝ վարչական վարույթի ընթացքում կողմերի հաշտության համաձայնության գալը համարվում է հայցվորի հրաժարում հայցից:

Ֆիկցիայի հասկացության, իրավունքում ֆիկցիայի կիրառման անհրաժեշտությանն անդրադարձել են այնպիսի հայտնի իրավագետներ, ինչպիսիք են Դ.Ի. Մեյերը, Գ.Ս. Մենը, Գ.Ֆ. Գորմիդոնտովը, Վ.Ի. Կամինսկայան, Վ.Ս. Գորշենկը, Ա. Նաշիցը, Վ.Բ. Իսակովը, Լ.Ա. Գուշակովան, Ա.Պ. Ջայցը, Ռ.Կ. Լոտֆուլիևը:

Ֆիկցիայի վերբերյալ բավական հետաքրքիր դատողություններ է ներկայացրել Ա.Կ. Ռոմանովը «Անգլիայի իրավական համակարգը» վերտառությամբ գրքում՝ բերելով նաև այդ համակարգում կիրառվող ֆիկցիայի օրինակներ: Ռոմանովի կարծիքով, եթե իրավունքում չօգտագործվի ֆիկցիան, իրավաբանորեն անհնար կլինի մարդկանց ժամանակակից տնտեսական գործունեությունը: Չէ՞ որ այն իրականացվում է հիմնականում իրավաբանական անձանց ձևով և նրանց անունից, իսկ վերջիններս ոչ այլ ինչ են, քան իրավաբանական ֆիկցիա: Իրավաբանական ֆիկցիաները կիրառվում են նրա համար, որ իրավունքը չհակասի արդարության պահանջներին, իսկ իրավական նորմերի կիրառման պրակտիկան չգրկվի ողջամտությու-

նից<sup>17</sup>:

Ամփոփելով սույն աշխատանքում ներկայացված նյութը՝ հանգում ենք այն եզրակացության, որ *ֆիկցիան՝ որպես իրավաբանական հնարք, հաստատում է որևէ փաստի գոյությունը՝ անկախ դրա իրական լինելուց, հանդիսանում է իրավական կարևոր ինստիտուտ և անհրաժեշտ է իրավական կանխատեսելի կարգավորում իրականացնելու նկատառումով:*

Հավելենք նաև, որ իրավունքի ֆիկցիան ոչ թե իրավունքի անկատարության, բարդ իրավիճակներում առավել պարզունակ լուծումներ գտնելու և իրավունքի համընդհանուր սկզբունքներն անտեսելու արդյունք է, այլ նշված արժեքներին առավել համահունչ իրավակարգավորումներ ներմուծելու ցուցիչ: Ինչ խոսք, որոշակի դեպքերում, այդ թվում ապացուցողական գործընթացների կատարելագործմանը զուգահեռ, հնարավոր են նաև այդ ինստիտուտի կիրառման շրջանակների աստիճանական նեղացման միտումներ, սակայն դրանով բնավ չի նսեմացվում իրավունքի զարգացման արդի փուլում նշված ինստիտուտի արժեքը:

<sup>1</sup> Տե՛ս Рене Давид. Основные правовые системы современности. М., 2003. С. 31.

<sup>2</sup> Տե՛ս Новицкий И.Б. Римское право. Изд. 6-е, стереотипное. – М., 1997. С. 60.

<sup>3</sup> Տե՛ս Бартошек М. Римское право. Понятия. Термины. Определения. М., 1989. С. 384.

<sup>4</sup> Տե՛ս Муромцев С.Л. Гражданское право Древнего Рима. М., 1883. С. 35-36.

<sup>5</sup> Տե՛ս Бартошек М. Римское право. Понятия. Термины. Определения. М., 1989. С. 386.

<sup>6</sup> Տե՛ս Бартошек М. Римское право. Понятия. Термины. Определения. М., 1989. С. 395.

<sup>7</sup> Տե՛ս Бартошек М. Римское право. Понятия. Термины. Определения. М., 1989. С. 429.

<sup>8</sup> Տե՛ս Бартошек М. Римское право. Понятия. Термины. Определения. М., 1989. С. 388.

<sup>9</sup> Տե՛ս <http://saratov.bezformata.ru/listnews/yuliya-i-papiya/12336269/>

<sup>10</sup> Տե՛ս Պետական պաշտոնյա Հին Հռոմում, առաջացել է լատիներեն praetor, praec-ire բառից և նշանակում է գնալ առաջ, առաջնորդել:

<sup>11</sup> Տե՛ս Маркин А.В. Фикции в Римском праве: Логическая и правовая целесообразность, Вектор науки ТГУ. N 2(16), 2011. С. 243.

<sup>12</sup> Տե՛ս Бюллетень международных договоров. 2003. N 9. С. 5.

<sup>13</sup> Տե՛ս Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության Գերագույն սովետի տեղեկագիր. 1986. N 37, С. 11.

<sup>14</sup> Տե՛ս Կաշանինա Կ.Վ. Юридическая техника: учебник. 2-е издание, пересмотренное, НОРМА ИНФРА – М, 2011. С. 202.

<sup>15</sup> Տե՛ս Նշված արտահայտության հնարավոր աղբյուրը ենթադրաբար հանդիսացել է հին հույն պոետ-դրամատուրգ Սոփոկլեսի (մ.թ.ա 496-406թ.թ.) «Տրաքինոիհները» դրամայի աֆորիզմից, որում հերոսը հարցնում է. «Մի՞թե դու չես հասկանում, որ լռությամբ դու համաձայնում ես մեղադրողի հետ», տե՛ս - [http://dic.academic.ru/dic.nsf/dic\\_wingwords/1535/%D0%9C%D0%BE%D0%BB%D1%87%D0%B0%BD%D0%B8%D0%B5](http://dic.academic.ru/dic.nsf/dic_wingwords/1535/%D0%9C%D0%BE%D0%BB%D1%87%D0%B0%BD%D0%B8%D0%B5)

<sup>16</sup> Տե՛ս Զայցև Ի. Правовая фикция в гражданском процессе // Российская юстиция. 1997. N 1. С. 35.

<sup>17</sup> Տե՛ս Романов А.К. Правовая система Англии: Учеб. Пособие. 2-ое изд., испр. М.: Дело, 2002. С. 87-88.

**Օգտագործված գրականություն**

1. Давид Р. Основные правовые системы современности. М., 2003. էջ 31.
2. Маркин А.В. Фикции в Римском праве: Логическая природа и правовая целесообразность, Вектор науки ТГУ. N 2(16), 2011. С. 243.
3. Новицкий, И.Б. Римское право. Изд. 6-е, стереотипное. – М., 1997. С. 60.
4. Бартошек М. Римское право. Понятия. Термины. Определения. М., 1989. С. 384, 386, 388, 395, 429.
5. Муромцев С.Л. Гражданское право Древнего Рима. М., 1883. С. 35-36.
6. Бюллетень международных договоров. 2003. N 9. С. 5.
7. Կաշանինա Կ.Վ. Юридическая техника: учебник. 2-е издание, пересмотренное, НОРМА ИНФРА – М, 2011. С. 202.
8. Романов А.К. Правовая система Англии: Учеб. Пособие. 2-ое изд., испр. М.: Дело, 2002. С. 87-91.
9. Զայցև Ի. Правовая фикция в гражданском процессе // Российская юстиция. 1997. N 1. С. 35.
10. Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության Գերագույն սովետի տեղեկագիր. 1986. N 37, էջ 11:

**Իրավական ակտեր**

ՀՀ վարչական դատավարության օրենսգիրք:

**Էլեկտրոնային կայքէջ**

1. [http://dic.academic.ru/dic.nsf/dic\\_wingwords/1535/%D0%9C%D0%BE%D0%BB%D1%87%D0%B0%BD%D0%B8%D0%B5](http://dic.academic.ru/dic.nsf/dic_wingwords/1535/%D0%9C%D0%BE%D0%BB%D1%87%D0%B0%BD%D0%B8%D0%B5)
2. <http://saratov.bczformata.ru/listnews/yuliya-i-papiya/12336269/>

**РЕЗЮМЕ**

***Эволюция юридической фикции и способы ее внедрения в систему отечественного права***

Статья “Эволюция юридической фикции и способы ее внедрения в систему отечественного права” посвящена изучению, одной из институтов современной правовой системы, имеющий наиважнейшее научное значение - истории возникновения, эволюции юридической фикции и способам ее внедрения в систему отечественного права.

Автор в статье проанализировал наиболее ключевые аспекты эволюции отмеченного института, их историко-правовое значение и выявил наиболее существенные факторы, влияющие на вышеуказанную эволюцию, а также с помощью некоторых частных примеров показал не только теоретическое, но и практическое значение данного института.

**SUMMARY**

***The evolution of the legal fiction and its ways of investment into the national legal system***

“The evolution of the legal fiction and its ways of investment into the national legal system” article is devoted to one of the institutions of the legal system which has a great topical and scientific significance-the research of the questions related to the origin of the fiction history, the evolution of the fiction and the possible ways of its investment into the national legal system.

In the article, the author had analyzed the key aspects of the above mentioned evolution of the fiction, its historical-legal significance and had discovered the main factors having great importance on that evolution, had showed not only theoretical, but also practical significance through some private examples.

**ՏԻԳՐԱՆ ԶՈՉԱՐՅԱՆ**

ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության նորմատիվ ապահովման բաժնի պետ, ԲՀԾ 1-ին դասի խորհրդական ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի դասախոս, քաղաքական գիտությունների դոկտոր, դոցենտ



**ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱՆՈՍՈՒԹՅՈՒՆԸ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԵՆՔՈՒՄ**

Համաշխարհային պատմության փորձը վկայում է, որ որքան սահմանափակ են երկրի նյութական ու մարդկային պաշարները, տնտեսական ու քաղաքական հնարավորությունները, այնքան դրա ռազմական ու քաղաքական ղեկավարությունը բժախնդորեն է մոտենում ստեղծված ռազմաքաղաքական իրադրության գնահատմանն ու ճիշտ կանխատեսմանը, հնարավոր փոփոխություններին ու զարգացման հավանական հեռանկարներին, այնքան հրատապ են դառնում երկրի ազգային շահերին ու անվտանգությանը սպառնացող վտանգները ժամանակին բացահայտելու և դրանք չեզոքացնելու արդյունավետ համակարգի մշակումն ու գործադրումը:

Նախկին խորհրդային մյուս հանրապետությունների հետ գրեթե միաժամանակ, սակայն առավել անբարենպաստ պայմաններում ձեռնամուխ լինելով ազգային բանակի ստեղծմանը՝ Հայաստանը կարողացավ աներևակայելի կարճ ժամանակահատվածում ստեղծել կարգապահ ու մարտունակ զինված ուժեր, որոնք ներկայումս իրենց մարտական պատրաստակամության մակարդակով, բարոյահոգեբանական վիճակով առաջիններից են ԱՊՀ-ում, իսկ Հարավկովկասյան տարածաշրջանում համարվում են ամենամարտունակն ու առաջավորը<sup>1</sup>: ՀՀ ՁՈՒ առանձին ստորաբաժանումներ, մասնակցելով բազմազգ բազմաթիվ գործարժություններին, ցուցադրել են բարձր մարտական վարպետություն՝ արժանանալով օտարազգի մասնագետների բարձր գնահատականներին ու դրվատանքներին: Այսօր, միանշանակ, կարելի է ասել, որ անցած տարիներին հաջողվել է ստեղծել մի բանակ, որը մի կողմից համապատասխանում է պետության իրական հնարավորություններին, մյուս կողմից այսօր ընդունակ է ապահովելու պետության տարածքային անձեռնմ-

խելիությունն ու անկախությունը:

Հայաստանի բանակը ստեղծվեց ու կազմավորվեց պատերազմի բովում, երբ վտանգված էին ՀՀ սահմաններն ու Արցախը: Տարերայնորեն ձևավորված ինքնապաշտպանական ջոկատները ռազմի դաշտում ստացան իրենց մարտական մկրտությունը և դարձան ապագա կանոնավոր բանակի հիմքը: Հայոց բանակի ստեղծումն ու պատմությունն անքակտելիորեն կապված են հայոց պետականության ստեղծման պատմական իրողության հետ, քանզի պետություն և բանակ հարաբերությունները փոխկապակցված են, և դժվար է պատկերացնել մեկն առանց մյուսի: Հայոց բանակն իր կայացման ճանապարհին անցավ դժվարին ու առանցքային մի քանի փուլ: Հիմնարար գործընթացների ու իր առջև դրված խնդիրների տեսանկյունից բանակի անցած ուղին ՀՀ ներկայիս Նախագահ Սերժ Սարգսյանը 2002 թվականին բաժանեց երեք ժամանակաշրջանների՝

1988 թվականի փետրվար – 1992 թվականի մայիս, երբ դարաբաղյան շարժման ակտիվացման և հայ-ադրբեջանական հարաբերությունների ծայրաստիճան սրման պայմաններում Հայաստանի և ԼՂ բնակչության ռազմական անվտանգության ապահովումը դարձավ ավելի քան հրատապ,

1992 թվականի հունիս – 1994 թվականի մայիս, երբ անկախ Հայաստանի Հանրապետությունը, ԼՂՀ-ի հետ միասին գտնվելով չհայտարարված, բայց փաստացի պատերազմի մեջ Ադրբեջանի Հանրապետության հետ, միաժամանակ ձեռնամուխ եղավ նաև Ազգային բանակի ստեղծմանը,

1994 թվականի հունիս – 2002 թվական, որը կարելի է անվանել բանակաշինության, կայուն զարգացման, զորքերի մարտունակության բարձրացման, կարգապահության ամրապնդման, սպայական անձնակազմի պատրաստման ու վերա-

www.lawinstitute.am

պատրաստման, ինչպես նաև բանակ-հասարակություն հարաբերություններում առկա անջրպետի տարեցտարի վերացման փուլ, երբ հաստատված զինադադարից հետո երկրի իշխանությունները հնարավորություն ստացան արդեն խաղաղ պայմաններում ջանքերը կենտրոնացնել բանակի՝ որպես պաշտպանական ամբողջական համակարգի վերջնական ձևավորման, բոլոր անհրաժեշտ ստորաբաժանումներն ստեղծելու ու զարգացնելու ուղղությամբ<sup>2</sup>:

Այս փուլերից յուրաքանչյուրը, լինելով Հայոց բանակի պատմության կարևոր օղակ, առանձնանում է իր յուրահատկություններով, զարգացման տրամաբանությամբ, տվյալ ժամանակում գոյություն ունեցող իրողություններով և մինչև իսկ հոգեբանությամբ: Գիշտ չի լինի դրանցից որևէ մեկը որակել որպես ավելի բարդ, քանզի դրանք համատեղելի չեն մի շարք առումներով. նույնական չեն ժամանակները, քաղաքական իրողությունները, առկա ռեսուրսները: Օրինակ, 1988 թվականից մինչև 1992 թվականի մայիս ամիսն ընկած ժամանակահատվածի հիմնական առանձնահատկությունն ու բնորոշիչը ինքնաբուխ հայրենասիրությունն էր, ավելի խիստ, թերևս՝ տարերայնությունը:

Իսկ 1992 թվականի հունվարի 28-ին կառավարությունն ընդունեց «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության մասին» որոշումը՝ դրանով իսկ հայտարարելով հայոց ազգային բանակի ստեղծման իրավական հիմքը: Նորաստեղծ նախարարության ենթակայությանը հանձնվեցին ներքին գործերի նախարարության միլիցիայի պարեկապահակային գունդը, հատուկ նշանակության օպերատիվ գունդը, քաղաքացիական պաշտպանության գունդը և հանրապետական զինվորական կոմիսարիատը: Քիչ ավելի ուշ հիմնվեց պաշտպանության նախարարության կենտրոնական ապարատը՝ գլխավոր շտաբը, վարչություններն ու առանձին բաժինները: 1992 թվականի մայիսին պաշտպանության նախարարությունը սկսեց առաջին զորակոչը հանրապետության տարածքում՝ հիմք դնելով բանակը ժամկետային զինծառայողներով համալրելու կայուն ավանդույթին:

«Ո՛չ պատերազմ, ո՛չ խաղաղություն» իրավիճակում, երբ խաղաղության ճակատագիրը մեծապես դրվեց արդյունավետ ռազմական և արտաքին քաղաքականության նպատակային հենքում, զինված ուժերը, ինչպես և մարտական գործողությունների ժամանակ, պետք է շարունակելին ամեն կերպ

նպաստել այս անգամ արդեն երկրի ռազմական անվտանգության ապահովմանն ուղղված պետական քաղաքականության գործընթացին<sup>3</sup>, ինչը և մինչ օրս բավականին իրատեսական տարբերակներով կազմակերպվում է: Եվ որպես այդպիսին, զինված ուժերի կառուցվածքի հետագա կատարելագործման, ինչպես նաև ՀՀ պետական սահմանի հուսալի պաշտպանությունը կազմակերպելու, դեկավարումը համակարգելու, մարտական պատրաստականությունը բարձրացնելու նպատակով մի քանի ուղղություններով ստեղծվեցին բանակային գորամիավորումներ՝ համախմբելով համապատասխան տարածաշրջանների գորամասերի գործունեությունը: Կազմավորվեցին կենտրոնական ապարատի վարչությունները, բաժիններն ու ծառայությունները, կայացան հրետանու, հակաօդային պաշտպանության, օդուժի զորատեսակները, կազմավորվեցին հետախուզության, կայի, ինժեներական գործերը, որոնք կատարեցին և մինչ օրս վստահաբար իրականացնում են իրենց առջև դրված հանձնարարականները ինչպես պատերազմական գործողությունների ժամանակ, այնպես էլ խաղաղ պայմաններում:

Մարտական պատրաստականությունն ու մարտունակությունն ընդգրկել են զինված ուժերի կյանքի ու գործունեության բոլոր ոլորտները: Այս առումով առաջնային են ցանկացած պահի զինված ուժերի՝ խաղաղ ժամանակաշրջանի վիճակից պատերազմականի կազմակերպված անցման, ինչպես նաև մարտական առաջադրանքները կատարելու նպատակով մշտական տեղակայման վայրերից արագ և հակառակորդի հետախուզական միջոցներից աննկատ դուրս գալու խնդիրները: Այս առումով բանակաշինության երրորդ փուլը բավականաչափ հագեցած է ջոկից մինչև մարտական գորամիավորման մակարդակով հաստիքային զենք ու զինամթերքի օգտագործմամբ պլանային բազմաթիվ ուսումնամարզական, ճամբարադաշտային հրամանատարաշտաբային հավաքներով: Բանակը չի կարող հզոր լինել նաև առանց սպառազինության նոր տեսակների, առանց զենք-զինամթերքի, վառելիքաքսուքային նյութերի, սննդամթերքի և իրային ապահովության միջոցների զգալի պաշարների: Անցած տարիների իրադարձությունները վստահություն են ներշնչում, որ նույնիսկ ծանրագույն տնտեսական պայմաններում տվյալ հարցերը ևս հնարավոր է հաջողությամբ լուծել:

Ռազմական տեսության գրեթե բոլոր հեղինակները միահամուռ նշում են, որ չափազանց դժ-



## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

վար է ռազմական գործողություններին զուգընթաց զբաղվել բանակաշինությամբ<sup>4</sup> : Այդուհանդերձ, հայ ժողովրդին հաջողվեց համատեղել այս երկու դժվարին խնդիրների իրագործումը և խիզախ ու անձնվեր զինված ջոկատներից կատարել անցում կանոնավոր զինված ուժերի:

Ռազմական անվտանգության ապահովման գործում Հայաստանի Հանրապետությունը կարևորում է ազգային և միջազգային երաշխիքների ստեղծումն ու ամրապնդումը: Ռազմական անվտանգության ապահովման ազգային երաշխիքը մարտունակ, ժամանակակից սպառազինությամբ, մարտական ու բարոյահոգեբանական բարձր պատրաստվածությամբ, Հայաստանի Հանրապետության ինքնիշխանությունն ու տարածքային ամբողջականությունը պաշտպանելու ունակ, ռազմական անվտանգության սպառնալիքների կանխմանն ու լիակատար չեզոքացմանը պատրաստ, փոխգործակցելի և քաղաքացիական վերահսկման ներքո գտնվող ՀՀ զինված ուժերն են: Ուստի, հզոր զինված ուժեր ունենալը ներկայիս աշխարհաքաղաքական իրողության պայմաններում Հայաստանին պարտադրված առաջնահերթություն է, իսկ մարտունակ, ռազմական սպառնալիքների լիակատար չեզոքացմանը և ռազմական անվտանգության ապահովման խնդիրների լուծմանը մշտապես պատրաստ զինված ուժերի առկայությունը պետության գերխնդիրն է<sup>5</sup>:

Հայաստանի զինված ուժերը քանակական առումով մեծաթիվ չեն, ոչ-ոքի չեն սպառնում, միաժամանակ մարտունակ են, կարգապահ, կառավարելի: Փորձագիտական վերլուծությունն ու անգամ պարզ համեմատությունը ցույց են տալիս, որ նման գնահատականները բնավ էլ ուռճացված չեն, այլ՝ իրողության հաստատում: «Որակն ընդդեմ քանակի» սկզբունքը կարևոր նշանակություն ունեցավ նաև այն իմաստով, որ կիրառվեց բանակաշինության և զինված ուժերի զարգացման բոլոր ասպեկտներում՝ ռազմատնտեսական, բարոյահոգեբանական, զինվորական անձնակազմի զարգացվածության, ճակատամարտում հնարամիտ ու անսպասելի որոշումներ ընդունելու և դրանք իրականացնելու կարողության ապահովման գործընթացներում<sup>6</sup>:

Առանց գունազարդելու Հայաստանի զինված ուժերի իրական վիճակը, ընդունելով դրանում առկա բոլոր թերությունները, բացթողումներն ու իրավախախտման փաստերը՝ միաժամանակ պետք է ընդունենք նաև, որ այն այսօր հասարակության

ամենակենսունակ օրգանիզմներից է: Երկրի պաշտպանության ոլորտի ղեկավարության կողմից մշտապես ձեռնարկվում են կտրուկ, հաճախ ոչ միանշանակ ընկալվող միջոցառումներ՝ եղած բացթողումներն ու իրավախախտումները հնարավոր նվազագույն մակարդակին հասցնելու, բանակի մարտունակությունն ավելի բարձրացնելու ուղղությամբ:

Ռազմական ոլորտի բարեփոխումների կարևորագույն մասը բուն զինված ուժերի վերակառուցումն է, որը ներառում է զորքերի և կառավարման մարմինների հետագա կառուցվածքային կատարելագործումը, զինված ուժերի մարտական կարողությունների, ազդարարման և կառավարման համակարգի օպերատիվության և կայունության բարձրացումը, ժամանակակից կատարելագործված զինատեսակներով բանակի սպառազինության համալրումը:

Յուրաքանչյուր բանակի վերակառուցման գլխավոր օբյեկտն ու սուբյեկտը նախևառաջ զինձառայողներ են՝ որպես զինված ուժերի առաջնային և կարևորագույն տարր, ավանդույթների, փորձի, մարտական կարողությունների ու բարոյական ոգու կրող: Ուստի, անհրաժեշտ է բարեփոխումների գործընթացում ապահովել նրանց ընտրության, պատրաստման, տեղաբաշխման, հոգևոր ու գաղափարական դաստիարակության, մասնագիտական կատարելագործման, սոցիալական ապահովման այնպիսի համակարգ, որի միջոցով հնարավոր լինի ձևավորել նոր որակի հայ զինվորականին՝ հայրենիքին անսահման մվիրված, ընդհանուր և ռազմական խոր գիտելիքներով ու բարձր կուլտուրայով, ինքնուրույն որոշումներ ընդունելու ունակ: Հատուկ դեր է հատկացվում սպայական կորպուսին, որի համար ծառայությունը դառնում է կյանքի ուղեկից, կենսակերպ, հասարակական և ֆիզիկական գոյության միջոց ու նպատակ:

Հայ սպան պետք է լինի ազգային գաղափարախոսության կրողը, տարածողը, մարմնացումը: Միաժամանակ, նա պետք է հասարակության կողմից ընկալվի որպես կրթվածության, ազնվության, պատվախնդրության խորհրդանիշ: Պետությունն ու հասարակությունը պետք է պայմաններ ստեղծեն, հնարավորություն տան բանակին շուտափույթ ազատվել բոլոր նրանցից, ովքեր բանակ են մտել ոչ թե սրտի կանչով, հայրենիքին ծառայելու մղումով, այլ տաքուկ անկյուն գտնելու, բարձր թոշակ ստանալու ակնկալիքով: Զինվորական համագեւտը նույնպես պետական դրոշին համարժեք

խորհրդանիշ է, և դրա անհարգի կրումը հավասարազոր է հանցագործության՝ ընդդեմ պետական խորհրդանիշների: Եվ հակառակը, պետության կողմից զինվորականների բարձր գնահատումը միշտ էլ վճռականություն ու եռանդ է հաղորդում նրանց, զորեղ ազդակներ տալիս բանակաշինության գործընթացի կատարելագործման համար, որի իմաստով խաղաղ պայմաններում զինվորականների սխրանքները չպետք է զիջեն մարտադաշտում կատարվածին: Բարեփոխումների համատեքստում երկրի ռազմական ոլորտի ղեկավարությունը շարունակելու է զարգացնել պատերազմի և ժամանակի փորձությունը բռնած լավագույն ավանդույթները՝ զինված ուժերը դիտարկելով որպես հայ ժողովրդի կյանքի, պետության բարգավաճման ու սերունդներին հզոր հայրենիք ժառանգելու երաշխավոր<sup>7</sup>:

Հայ զինվորականի բարոյահոգեբանական պատրաստվածության հիմքը հավատքի, ազգային գաղափարախոսության և բարոյական համամարդկային արժեքների վրա խարսխված գաղափարականությունն է: Հիրավի, գաղափարի զինվորն անպարտելի է: Բայց գաղափարները կենսունակ են դառնում միմիայն ազգային պարտքը ճանաչելով, ընդունելով և աննկուն կամքով դրանք իրագործելով: Ուրեմն, ժողովրդի հետ միասին վերաբերելով բանակի անցած ճանապարհին ու կայացման փորձը, դրանք հմտորեն փոխկապակցելով աշխարհի առաջատար բանակների չափանիշներին և արմատավորելով ազգային գաղափարախոսության հիմնադրույթները՝ հարկավոր է վերջնականապես ձևավորել «Հայոց ազգային բանակի» գաղափարներն ու ավանդույթները, որպեսզի ավելի արդյունավետ առաջ մղվեն արտաքին ու ներքին թշնամիների դեմ «համահայկական հաղթական հակապատերազմի» գաղափարը:

Պաշտպանական բարեփոխումների գործընթացում առանձնակի ուշադրություն պետք է դարձնել նաև զինված ուժերում զինվորական ծառայության նյութական խրախուսման հարցերին: Միաստություն և կարճատեսություն է այսօր մտածել, որ շուկայական հարաբերությունների պայմաններում սպայի ծառայության հիմնական խթանիչը միայն ծառայողական խանդավառությունն է ու հայրենասիրական մղումը: Զինծառայողների վարձատրությունը այսօր այնքան էլ չի համապատասխանում զինվորական-ծառայողական գործառույթների բարդությանը, կարևորությանը, լարվածությանը, ծառայողական պարտականությունների հատուկ

բնույթին, ինչը բավականին հարվածում է զինվորական ծառայության վարկանիշին և որակյալ կադրերով զինված ուժերի համալրման գործընթացին: Զինծառայողի մարտունակությունը սկսվում է ընտանիքից, որի պարագայում, իհարկե, անթույլատրելի է զինծառայողին սոցիալական ծանր բեռի տակ թողնելը: Ռազմական անվտանգության ապահովման համակարգում անթույլատրելի է սոցիալական վիճակից, տիրող անարդարությունից դժգոհ, ծառայության նկատմամբ անտարբեր «հայրենիքի պաշտպանի» առկայությունը:

Քաղաքացին պետք է ձգտի զինծառայող դառնալ ոչ թե այն պատճառով, որ չի գտնում իր տեղը քաղաքացիական կյանքում, այլ որովհետև զինվորական ծառայությունը պատվաբեր է և ունի բարձր սոցիալական կարգավիճակ: Միաժամանակ, բանակը պետք է հնարավորություն ունենա ընտրելու արժանավորին, լավագույնին, ընդունակին և ոչ թե զինված ուժերի շարքերը համալրվի առաջին պատահաձով: Հենց այդ իսկ նկատառումներով էլ պետությունը պետք է ձեռնարկի բոլոր միջոցները, որպեսզի զինվորականի մասնագիտությունը համարվի գրավիչ, պատվաբեր և նախընտրելիներից մեկը: Որպես օրինակ կարելի է նշել, որ Ռ. Ռեյզանի՝ ԱՄՆ-ի նախագահ ընտրվելու նախաշեմին սպայի մասնագիտությունը իր վարկանիշով ԱՄՆ-ում նախընտրելի մասնագիտությունների ցանկում գտնվում էր հինգերորդ տասնյակում, իսկ նրա կառավարման վերջին տարում բարձրացավ երկրորդ տեղը:

Ռազմարվեստի, ռազմական գիտության ու տեխնիկայի զարգացման արդի մակարդակը, ինչպես նաև Հայաստանում հանրակրթական համակարգի առկա դժվարությունները թելադրում են, որ ապագա զինվորականի պատրաստման գործընթացում պետք է շեշտադրվի ռազմական թեքումով դպրոցների դերակատարությունը: Այդ հաստատությունների սաները ընդհանուր միջնակարգ կրթության հետ միասին արդեն ունենում են նաև միջնակարգ ռազմական կրթություն, ֆիզիկապես, մտավորապես ու հոգեբանորեն պատրաստված են հետագա ուսման և ծառայության համար: Այդ շրջանավարտների հիմնական մասը (բարձր առաջադիմություն ցուցաբերողները) միանգամից կրթությունը շարունակելու է բարձրագույն ռազմաստիճանական հաստատություններում:

Առաջիկա ժամանակաշրջանում պետք է ունենալ զինվորական կադրերի պատրաստման այնպիսի կատարյալ համակարգ, որը, մի կողմից, լրիվ

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

բավարարի զինված ուժերի պահանջարկը՝ ամբողջությամբ օրակարգից հանելով դրսում կադրերի պատրաստման անհրաժեշտությունը (իհարկե, խոսքը չի գնում առանձին նեղ մասնագիտությունների գծով սահմանափակ թվով մասնագետների պատրաստմանը, որի իրականացումը տեղում տնտեսապես աննպատակահարմար է), մյուս կողմից, իր որակական բարձր մակարդակի շնորհիվ ԱՊՀ-ի և արտասահմանյան որոշ երկրներից Հայաստանում կադրեր պատրաստելու շահագրգռություն և ցանկություն առաջ բերի: Անհրաժեշտ է նաև կատարելագործել կադրերի նշանակման, որակավորման և առաջխաղացման համակարգը, որպեսզի բանակային միջավայրում իսպառ բացառվի հովանավորչությունը, ծառայության անհրաժեշտ բոլոր որակներին լիարժեք չհամապատասխանող անձանց առաջխաղացումը, զինծառայողների շրջանում մշտապես խրախուսվի ինքնակատարելագործման, մասնագիտական որակավորման բարձրացման ձգտումը: Դրա համար էլ փորձառու, երիտասարդ և եռանդուն զինվորական մասնագետների ներդաշնակ զարգացումը՝ հայ զինվորականության լավագույն ավանդույթների պահպանմամբ և բազմապատկմամբ, հանդիսացել և միշտ էլ հանդիսանալու է ՀՀ զինված ուժերի բարեփոխումների անհրաժեշտ ուղեկիցը, քանզի հայոց բանակը կարող է լինել հզոր և մարտունակ՝ միայն վերջինիս կազմում ունենալով զինվորականի պատիվը պահող ու պաշտող նվիրյալներ: Ներկայումս ՀՀ զինված ուժերի զարգացման հիմնական ուղենիշներում հատկապես կարևորվում է զինվորականության բարոյահոգեբանական որակների բարելավումը՝ առաջնային նշանակություն տալով այն զինծառայողի կերպարին, ով առաջնորդվում է էթիկական նորմերով, ի նպաստ գործի՝ լիարժեքորեն օգտագործում է իրեն տրված իրավունքները և հստակորեն կատարում իր պարտականությունները<sup>8</sup>:

Ամփոփելով կարելի է փաստել, որ անցյալ դարավերջին անկախացած Հայաստանը երկրաշարժային ավերի ու տնտեսական շրջափակման պայմաններում կարողացավ դիմակայել ադրբեջանա-

կան ագրեսիային, փառահեղ հաղթանակ տանել ու նրան պարտադրել զինադադար: Չնայած առկա հարաբերական խաղաղությանը՝ մեր երկրի ինքնիշխանությանն ու ժողովրդի գոյությանը սպառնացող մարտահրավերները չնվազեցին: Տարածաշրջանում առկա են հակասություններ, երկրները որդեգրել են անվտանգության ու պաշտպանական տրամագծորեն տարբեր ռազմավարություններ, վարում են տարբեր դաշինքների և ուժային կենտրոնների հարելու քաղաքականություն: Հայաստանի համար մտահոգիչ է Թուրքիա-Ադրբեջան ռազմավարական դաշինքը՝ Հայաստանի ազգային անվտանգության շահերը վտանգող քաղաքականությամբ: Ադրբեջանն ակնհայտորեն գերռազմականանում է, վարում հայատյաց քաղաքականություն, ձգտում հակամարտության ուժային լուծման:

Աշխարհաքաղաքական արդի իրողությունները և հայ ազգի ու նրա պետականության առջև ծառայած մարտահրավերները ՀՀ զինված ուժերի որակական առավելության ամրապնդման և դրա հարատևորեն բազմապատկման պահանջ են առաջադրել: Անհամեմատ սակավաթիվ ռեսուրսները ստիպողաբար առաջին տեղ են մղում «փոքր ուժերով՝ մեծ խնդիրներ» սկզբունքն իրականացնելու, մարդկային գործոնը կատարելության հասցնելու, տվյալ դեպքում՝ ազգային հավատքով, գաղափարով ու բարոյականությամբ տոգորված հայ զինվորականի ձևավորման խնդիրը: Ազգային գաղափարախոսությունը հայ զինվորականությանը հոգեպես ու զիտակցորեն շաղկապող, ազգի ավանդական նկարագրից բխող նպատակները, վարքը և գործունեությունը սահմանող գաղափարների ու արժեքների համակարգ է, առանց որի որևէ պետություն իր զինվորական ուժով չի կարող պահպանել կենսունակությունը գոյության անհաշտ պայքարում:

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի շնորհավորական խոսքը ՀՀ անկախության 20-ամյակի առթիվ ՀՀ զինված ուժերի գորահանդեսի ժամանակ, 21.09.2011թ. // [www.president.am](http://www.president.am)

<sup>2</sup> Տե՛ս Սարգսյան Ս. Բանակը մեր ժողովրդի և պետության անվտանգության գրավականն է, Եր., Ամարաս, 2002, էջ 10-11:

<sup>3</sup> Տե՛ս Օհանյան Ս. 21-րդ դարի բանակը, Եր., Տիգրան Մեծ, 2007, էջ 107:

<sup>4</sup> Տե՛ս Օստանկով В.И. Военная безопасность России в начале 21-ого столетия, М., Издательский дом ВЕЧЕ, 2007. С. 72.

<sup>5</sup> Տե՛ս ՀՀ Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Արթուր Բաղդասարյանի ուղերձը ՀՀ ՊՆ կողմից ներկայացված «Պաշտպանության ռազմավարական վերանայման 2011-2015թթ. ծրագրի» վերաբերյալ // [www.mil.am](http://www.mil.am)

<sup>6</sup> Տե՛ս Այվազյան Ա. Հիմնատարներ Հայաստանի ազգային անվտանգության հայեցակարգի, Մաս 1, Եր., 2003, էջ 102-103:

<sup>7</sup> Տե՛ս Օհանյան Ս. 21-րդ դարի բանակը, Եր., Տիգրան Մեծ, 2007, էջ 257:

<sup>8</sup> Տե՛ս Օհանյան Ս. Հայկական բանակի 20-ամյա տարեգրությունը /համառոտ ուրվագիծ/, Եր., 2012, էջ 327:

#### РЕЗЮМЕ

##### *Национальная идеология в основе создания и деятельности Вооруженных Сил Республики Армения*

Национальная идеология армии это система идей и ценностей, сознательно и духовно объединяющих военных. Вооруженные силы Армении не очень большие в количественном смысле, но боеспособные, дисциплинированные и контролируемые. Армянский офицер должен быть носителем и распространителем национальной идеологии. Одновременно, он должен восприниматься общественностью как символ честности и образованности. Идеологическая основа армянского военного это постоянная готовность к защите Родины, основанная на вере и человеческих ценностях.

#### SUMMARY

##### *The national ideology in the base of establishment and operation of Armed Forces of the Republic of Armenia*

The national ideology of the army is the system of ideas and values consciously and spiritually uniting the militarists. The Armed Forces of Armenia quantitative terms is not manifold, do not threaten anybody, but are capable, precise and controllable. The Armenian officer should be the bearer and disseminator of the national ideology. At the same time, he must be perceived by the public as the symbol of honesty and education. The national ideological basis of the Armenian militarist is the permanent preparedness for defense of homeland anchored on the faith and universal values.

**ԱՆԻ ԱՏԵՓԱՆՅԱՆ**

Եվրասիա միջազգային համալսարանի իրավագիտության  
ֆակուլտետի իրավագիտության ամբիոնի դասախոս,  
իրավաբանական գիտությունների թեկնածու

**ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Բորսային առևտրի կազմակերպման հա-  
մաշխարհային փորձը մշակել է ապրանքային բոր-  
սաների երեք մոդել: Առաջին մոդելի երկրներում  
բորսաները ստեղծվում են մասնավոր սեփակա-  
նության հիման վրա և իրենցից ներկայացնում են  
ոչ պետական կազմակերպություններ, մեկ այլ  
երկրներում բորսային առևտուրը գլխավորում է  
պետությունը, և բորսաները ունեն պետական կազ-  
մակերպությունների կարգավիճակ: Երրորդ պե-  
տություններում թույլատրվում է վերոնշյալ երկու  
մոդելների էլեմենտների միավորումը, այսինքն՝  
ապրանքային բորսաները հանդես են գալիս որպես  
մասնավոր-պետական կազմակերպություններ՝  
իրենց գործունեության մեջ պետական խիստ սահ-  
մանափակ միջամտությամբ<sup>1</sup>:

Բորսային գործունեության կարգավորումը  
իրենցից ներկայացնում է բորսայի աշխատանքների  
կանոնակարգում և բորսային գործարքների կնքում  
սահմանված կանոնների և պահանջների հիման  
վրա: Բորսային գործունեության զարգացումը ունի  
երկու պատմականորեն ձևավորված ուղղություն-  
ներ.

- 1) պետության կողմից կարգավորում (պե-  
տական կարգավորում),
- 2) բորսաների և շուկայի այլ մասնակիցնե-  
րի կողմից կարգավորում (բորսային շուկա-  
յի ինքնակարգավորում):

Բորսային գործունեության պետական վե-  
րահսկողությունը կառուցվում է հետևյալ սկզբունք-  
ների հիման վրա.

- 1) հանրային օգտակարություն,
- 2) բորսային սակարկությունների թափան-  
ցիկություն և հրապարակայնություն,
- 3) վստահություն,
- 4) ինքնակարգավորում,
- 5) բորսային առևտրի մասնակիցների իրա-  
վունքների երաշխիքներ<sup>2</sup>:

Բորսային գործունեության կարգավորումը կոնկ-

րետ միջոցների և հնարքների համակցություն է  
բորսայի աշխատանքների որոշակի կանոնա-  
կարգման և բորսային գործարքների կնքման կա-  
պակցությամբ սահմանված կանոնների և պա-  
հանջների հիման վրա: Բորսային գործունեության  
կարգավորման նպատակը հանդիսանում է բորսա-  
յին շուկայի արդյունավետության և բալանսավոր-  
ման, կայունության ապահովումը<sup>3</sup>:

Դիտարկելով բորսային գործունեության  
կազմակերպահրավական հիմքերը՝ անհրաժեշտ է  
ընդգծել երեք ասպեկտներ.

- 1) բորսային գործունեությունը կարգավո-  
րող նորմատիվ ակտերը,
- 2) բորսայի իրավական վիճակը (կարգավի-  
ճակը),
- 3) ապրանքային բորսայի ինստիտուցիո-  
նալ կառուցվածքը:

Ընդ որում, բորսային առևտուրը կարգա-  
վորվում է տնտեսագիտական օրենքներով, իսկ  
բորսային գործունեությունը (բորսային առևտրի  
իրականացմանը ուղղված բորսայի աշխատանքը  
և նրա կառուցվածքը)՝ նորմատիվ ակտերով:  
Իրենց կազմով նորմատիվ ակտերը բաժանվում են  
պետականի և ներբորսայականի:

Բորսային գործունեությունը կարգավորող  
պետական նորմատիվ ակտերը հնարավորություն  
են տալիս իրականացնել բորսայի գործունեության  
նկատմամբ ընթացիկ վարչական վերահսկո-  
ղությունը, կանոնակարգել ինչպես բորսային, այն-  
պես էլ բորսային առևտրի բոլոր մասնակիցների  
իրավունքները և պարտականությունները, կանխել  
մոնոպոլացումը և սեփականության դեմ ուղղված  
հանցագործությունները: Պետությունը ստեղծում է  
նաև բորսայի կայացմանը նպաստող որոշակի  
նորմատիվ բազա:

Ներբորսայական նորմատիվ փաստաթղ-  
թերը յուրաքանչյուր բորսա մշակում է ինքնուրույն,  
սակայն մի շարք փաստաթղթերի մշակման մեջ

նկատվում է որոշակի ընդհանուր մոտեցում: Այդ փաստաթղթերն են հանդիսանում հիմնադրման պայմանագիրը, բորսայի կանոնադրությունը և բորսային առևտրի կանոնները<sup>4</sup>:

Բորսային գործունեության պետական կարգավորումը իրականացվում է հենց բորսայի հարկման միջոցով, ինչպես նաև նրանում այն գործառնություններից հարկեր գանձելով, որոնք կատարվում են բորսայում, իսկ բորսային գործունեության կարգավորման պատմականորեն ձևավորված մյուս սկզբունքը, բացի պետականից, հանդիսանում է նաև ինքնակարգավորումը<sup>5</sup>: Սակայն, ինչպես արդարացիորեն նշում են որոշ մասնագետներ, ինքնակարգավորման ուղղվածությունը չի բացառում պետության ազդեցությունը, որը դրսևորվում է բորսայի աշխատանքի նկատմամբ վերահսկողության մեջ, ինչպես նաև նրանց գործունեության միասնական իրավական հիմքը ստեղծող ընդհանուր օրենսդրական նորմերի մշակման մեջ<sup>6</sup>:

ՀՀ-ում ապրանքային բորսաների գործունեության պետական կարգավորմանը նվիրված է «Ապրանքային բորսաների մասին» ՀՀ օրենքի<sup>7</sup> (այսուհետ՝ Օրենք) 29-րդ հոդվածը, որտեղ խոսվում է ապրանքային բորսաների գործունեության կարգավորում իրականացնող պետական լիազորված մարմնի մասին (էկոնոմիկայի նախարարություն): Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ բորսաների գործունեության կարգավորումն իրականացնող պետական լիազորված մարմինը իրականացնում է բորսայի և բորսային միջնորդների գործունեության լիցենզավորումը, նպաստում է բորսաների գործունեության կատարելագործմանը, օժանդակում է բորսային անհատ ձեռներեց միջնորդների մասնագիտական պատրաստմանն ու վերապատրաստմանը, կազմակերպում է բորսաների գործունեության ուսումնասիրում, մշակում է բորսային գործունեությանը վերաբերող մեթոդական ցուցումներ, առաջարկություններ է ներկայացնում ՀՀ կառավարությանը բորսաների մասին օրենսդրության կատարելագործման հարցերի վերաբերյալ:

Օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ պետական լիազորված մարմինն իրավասու է.

- մերժել կամ հետաձգել բորսայի և բորսային միջնորդների գործունեության լիցենզավորումը այն դեպքում, եթե բորսայի հիմնադիր փաստաթղթերը հակասում են սույն օրենքի պահանջներին,

- սույն օրենքի և ՀՀ օրենսդրության ակտերի այլ պահանջները խախտելու դեպքում նախագրուցացնել բորսաներին և բորսային առևտրի մասնակիցներին,

- ՀՀ օրենսդրության պահանջները խախտած բորսաների և բորսային առևտրի մասնակիցների նկատմամբ օրենքով նախատեսված պատժամիջոցներ կիրառելու նպատակով դատարան կամ պետական արբիտրաժ<sup>8</sup> ներկայացնել համապատասխան նյութեր,

- անհրաժեշտության դեպքում ներկայացուցիչներ (դիտորդներ) ուղարկել բորսա՝ բորսային սակարկություններին ներկա լինելու,

- բորսայի անդամների ընդհանուր ժողովներին և բորսայի կառուցվածքային ստորաբաժանումների (սեկցիաների, բաժինների, բաժանմունքների) անդամների ընդհանուր ժողովներին խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցելու համար:

Ինչպես կարելի է նկատել, Օրենքի 29-րդ հոդվածը առաջին հերթին ուշադրություն է դարձնում լիցենզավորման վրա՝ որպես բորսային գործունեության պետական կարգավորման ձև:

Լիցենզավորումը գործընթաց է՝ կապված լիցենզիա տրամադրելու, լիցենզիաների գործողության ժամկետը երկարացնելու, վերականգնելու, լիցենզիայի գործողությունը կասեցնելու և դադարեցնելու հետ: Լիցենզիան պաշտոնական փաստաթուղթ է, որ հաստատում է իրավունքը՝ զբաղվելու լիցենզավորման ենթակա գործունեությամբ, ինչպես նաև այդ իրավունքը հաստատող պաշտոնական փաստաթուղթ («Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի<sup>9</sup> 3-րդ հոդված): Համաձայն 2002 թվականի դեկտեմբերի 5-ի «Բորսային (ոչ ֆոնդային) առևտրի կազմակերպման գործունեության լիցենզավորման կարգը և բորսային (ոչ ֆոնդային) առևտրի կազմակերպման գործունեության լիցենզիայի ձևը հաստատելու մասին» N 2019 ՀՀ Կառավարության որոշման<sup>10</sup> (այսուհետ՝ Որոշում 1) 8-րդ կետի՝ բորսային (ոչ ֆոնդային) առևտրի կազմակերպման գործունեության լիցենզավորման, լիցենզիայի գործողությունը կասեցնելու կամ դադարեցնելու մասին եզրակացություններ տալու նպատակով ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարությունում (ներկայիս էկոնոմիկայի նախարարությունում) ստեղծվել է հանձնաժողով (լիցենզավորող հանձնաժողով), որն առաջնորդվում է

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի և իր գործունեությանն առնչվող ՀՀ այլ օրենքների դրույթներով և գործում է սույն կարգի պահանջներին համապատասխան:

Բորսային (ոչ ֆոնդային) առևտրի կազմակերպման գործունեության իրականացման համար լիցենզիաները տրվում են բարդ ընթացակարգով, անժամկետ: Որոշում 1-ի 10-րդ կետի համաձայն՝ հայտատուն լիցենզավորման նպատակով օրենքի համաձայն ներկայացնում է.

- ա) լիցենզիա ստանալու մասին հայտ,
- բ) իրավաբանական անձի կանոնադրության և պետական գրանցման վկայականի պատճենները,
- գ) պետական տուրքի վճարման անդորրագիրը,
- դ) տնօրենի կրթության վկայականի պատճենը:

Օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ լիցենզիա ստանալու համար բորսային հիմնադիրները պետական լիազորված մարմին ներկայացնում են.

- դիմում,
- հիմնադիր պայմանագիր (սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների դեպքում),
- բորսային կանոնադրությունը և բորսային առևտրի կանոնները:

Պետական լիազորված մարմինը տալիս է լիցենզիա կամ գրավոր մերժում այն՝ Օրենքում նշված փաստաթղթերի ստացման օրվանից երեսուն օրվա ընթացքում: Սահմանված ժամկետում պետական լիազորված մարմնի կողմից լիցենզիա չտալը կամ լիցենզիա տալը մերժելը բորսայի հիմնադիրների կողմից կարող է գանգատարկվել դատական կարգով:

Որոշում 1-ի 16-րդ կետի համաձայն՝ լիցենզիայի գործողությունը դադարեցվում է.

- ա) Օրենքի 30-րդ հոդվածով նախատեսված դեպքերում,
- բ) եթե չեն ապահովվում լիցենզիայում նշված պայմանները,
- գ) եթե խախտվում են սույն կարգի պահանջները,
- դ) օրենքով նախատեսված այլ դեպքերում:

Օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ պետական լիազորված մարմինը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն է կրում բորսաների կամ բորսային միջ-

նորդների գործունեության լիցենզիայի տալը անհիմն մերժելու կամ այն տալու՝ օրենսդրությամբ սահմանված ժամկետը խախտելու դեպքերում:

Անհրաժեշտ է նշել, որ մինչև 2000 թվականը ՀՀ-ում գործում էր 1994 թվականի մարտի 13-ի «Ապրանքային բորսաների և բորսային միջնորդների գործունեության կարգավորման մասին» N 115 ՀՀ Կառավարության որոշումը<sup>11</sup> (այսուհետ՝ Որոշում 2), որը, մեր տեսանկյունից, առավել լավ և բազմակողմանի էր կարգավորում ապրանքային բորսաների և բորսային միջնորդների լիցենզավորման հետ կապված հարաբերությունները, քան Որոշում 1-ը:

Մեր կողմից առաջարկվում է ապրանքային բորսաների նկատմամբ գործածության մեջ դնել Որոշում 2-ը՝ այն համապատասխանեցնելով ապրանքային բորսաների ներկայիս վիճակին, նախատեսելով նրանում ինչպես մասնագիտացված, այնպես էլ ունիվերսալ ապրանքային բորսաների լիցենզավորման կարգ: Գտնում ենք, որ ապրանքային բորսաների լիցենզավորման կարգի օրենսդրական ամրագրումը անհրաժեշտ է դրանց հետագա արդյունավետ զարգացման համար:

Բորսային լիցենզավորումը պետության վերահսկողությունն է բորսային գործունեության ոլորտում գործող օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ՝ գործող օրենսդրությունը և բորսաների կազմակերպական կարգավիճակին համապատասխան, սահմանված կանոններով բորսային առևտրի իրականացման համար ֆիզիկական կամ իրավաբանական անձին հատուկ թույլտվություն (լիցենզիա) տրամադրելու միջոցով<sup>12</sup>:

Օրենքի 23-րդ հոդվածի համաձայն՝ բորսային միջնորդներն իրավունք ունեն իրականացնելու բորսային միջնորդություն պետական լիազորված մարմնի կողմից լիցենզիա ստանալուց հետո: Անհրաժեշտ է նշել, որ այստեղ հակասություն է առաջանում Օրենքի և Որոշում 1-ի միջև, քանի որ Որոշում 1-ի 1-ին կետի համաձայն՝ սույն կարգով սահմանվում է ՀՀ-ում իրավաբանական անձանց կողմից (ոչ ֆոնդային) առևտրի կազմակերպման գործունեության լիցենզավորման կարգը՝ համաձայն «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի պահանջների: Անդրադառնանք «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքին, որի 43-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված է լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների ցանկը, սակայն դրանում ապրանքային բորսան հիշատակված չէ, միայն

www.lawinstitute.am

առևտրի բաժնում նշվում է, որ լիցենզավորման է ենթակա արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 71021000, 710221000, 710231000 ծածկագրերին դասվող բնական՝ մշակված կամ չմշակված, բայց չշրջանակված կամ չամրացված ավաստների առուվաճառքը, ներմուծումը, արտահանումը և փոխադրումը: Ստացվում է, որ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքը, որին հղում է կատարում Որոշում 1-ը իրականում բացառում է ապրանքային բորսաների և նրա միջնորդների լիցենզավորումը ՀՀ-ում: Բացի այդ, Որոշում 1-ը, ընդունվել է ավելի ուշ, քան «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքը, ինչի արդյունքում օրենսդրի անուշադրությունը գարմանք է առաջացնում:

Մեկ դիտարկում ևս. «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ «ՀՀ կառավարության որոշումները չպետք է հակասեն ՀՀ Սահմանադրությանը, ՀՀ օրենքներին ...»: Տվյալ դեպքում այդ հակասությունը ակնհայտ է և խառնաշփոթ է առաջացնում: Մի կողմից Օրենքի ուժով ապրանքային բորսան չի կարող իրականացել բորսային գործունեություն, և բորսային միջնորդը՝ բորսային միջնորդություն, քանի դեռ չեն լիցենզավորվել, մյուս կողմից՝ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի ուժով ապրանքային բորսաները և նրանց միջնորդները լիցենզավորման ենթակա չեն<sup>13</sup>, բայց մինչ օրս գործում է և ուժի մեջ է նրանց լիցենզավորման կարգը սահմանող Որոշում 1-ը: Հետևաբար, վերոնշյալ խառնաշփոթից խուսափելու համար առաջարկում ենք կամ ուժը կորցրած ճանաչել Որոշում 1-ը, կամ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքում նախատեսել ապրանքային բորսաների և նրանց մասնակիցների պարտադիր լիցենզավորման պահանջ:

Անդրադառնալով Լիցենզավորող հանձնաժողովին, որի իրավասությունները սահմանափակվում են միայն լիցենզավորման գործընթացով: Չնայած նրան, որ Օրենքի ուժով պետական լիազորված մարմինը, բացի լիցենզավորումից, օժտված է նաև բազմաթիվ այլ՝ բավականին լուրջ իրավասություններով, դրանք զուտ ձևական բնույթ են կրում: Այստեղ հարց է առաջանում. եթե ոչ կառավարությանն առընթեր, ոչ էլ ապրանքային բորսային առընթեր ապրանքային բորսաների գործունեության պետական կարգավորում իրականացնող մարմին չկա, ապա ո՞վ է իրականացնում Օրենքում նշված մնացած իրավասությունները: Մասնավորապես, Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ

պարբերության համաձայն՝ բորսաների գործունեության կարգավորումն իրականացնող պետական լիազորված մարմինը առաջարկություններ է ներկայացնում ՀՀ կառավարությանը բորսաների մասին օրենսդրության կատարելագործման հարցերի վերաբերյալ, որը շատ կարևոր է: Սա հանդիսանում է ապրանքային բորսաների գործունեության կարգավորման կարևորագույն բացերից մեկը:

Մեկ այլ օրինակ ևս. պետական իրավասու մարմինը իրավասու է անհրաժեշտության դեպքում՝ ներկայացուցիչներ (դիտորդներ) ուղարկել բորսա՝ բորսային սակարկություններին ներկա լինելու համար (Օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ պարբերություն): Բորսային առևտրի իրականացման ինքնակարգավորման սկզբունքը ենթադրում է (և դա նախատեսված է օրենքով), որ պետական իշխանության և կառավարման մարմինները չեն կարող միջամտել բորսաների գործունեությանը, բացառությամբ բորսաների կողմից օրենքի և ՀՀ օրենսդրության այլ ակտերի խախտման դեպքերի (Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին կետ): Սակայն, եթե պրակտիկայում ապրանքային բորսաների գործունեության պետական կարգավորում իրականացնող մարմինը բացակայում է, ապա ո՞վ է վերահսկելու բորսային օրենսդրության խախտման դեպքերը: Եթե լիցենզավորող հանձնաժողովի (որը փաստացի ոչ ոքի չի լիցենզավորում) գործունեությունը հանգում է միայն լիցենզիաներ տրամադրելուն և դրանց գործողությունը կասեցնելուն, ապա ստացվում է, որ ապրանքային բորսաների գործունեության նկատմամբ վերահսկողություն և պետական կարգավորում, որպես այդպիսին, չկա: Մեր կարծիքով, սա կոպիտ սխալ է: Ապրանքային բորսաների գործունեության պետական կարգավորման և վերահսկողության բացակայությունը կարող է և հանգեցնում է ոչ միայն բորսային օրենսդրության, բորսային առևտրի, նրա մասնակիցների իրավունքների և օրինական շահերի խախտմանը, այլև իրավախախտողների կողմից անպատժելիության զարգացմանը: Մեր կարծիքով, պետական լիազորված մարմնի ձևավորումը անհրաժեշտ պայման է ՀՀ-ում բորսային գործունեության բարենպաստ զարգացման համար, մասնավորապես բորսային առևտրի իրականացման բարենպաստ պայմաններ ստեղծելու, ինչպես նաև այս ոլորտում առողջ տնտեսական մրցակցություն ապահովելու համար:

www.lawinstitute.am



- <sup>1</sup> Տե՛ս Жилинский С.Э. Предпринимательское право. М.: Норма, 2002. С. 490.
- <sup>2</sup> Տե՛ս Исаков Р.Р., Ладных В.К. Биржевое дело. Тамбов. ТГУ имени Державина Г.Р., 1997. С. 6.
- <sup>3</sup> Տե՛ս Чинарева О.И. Биржевая торговля. Воронеж. ВГЛТА, 2005. С. 24.
- <sup>4</sup> Տե՛ս Воловик А.М., Голда З.К. Основы биржевой деятельности. М.: Финансы и статистика, 1994. С. 33.
- <sup>5</sup> Տե՛ս Каменева Н.Г. Организация биржевой торговли. М.: ЮНИТИ. 1998, С. 84.
- <sup>6</sup> Տե՛ս Кашеварова С.В. Государственное регулирование биржевой деятельности. Дисс. канд. экон. наук. М.: 1996. С. 39.
- <sup>7</sup> Տե՛ս «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 08.08.2001թ., Հայաստանի Հանրապետություն, N26/158
- <sup>8</sup> Տե՛ս «Պետական արբիտրաժ» եզրույթը սխալ է օգտագործված, ներկայումս պետական արբիտրաժ գոյություն չունի: Արբիտրաժների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքով, իսկ այդ եզրույթի պահպանությունը հետևանք է այն բանի, որ մինչ օրս «Ապրանքային բորսաների մասին» ՀՀ օրենքում կոնստրուկտիվ փոփոխություններ չեն կատարվել:
- <sup>9</sup> Տե՛ս «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 08.08.2001թ., ՀՀՊՏ N26/158:
- <sup>10</sup> Տե՛ս «Բորսային (ոչ ֆոնդային) առևտրի կազմակերպման գործունեության լիցենզավորման կարգը և բորսային (ոչ ֆոնդային) առևտրի կազմակերպման գործունեության լիցենզիայի ձևը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության որոշում՝ ընդունված 05.12.2002թ., Հայաստանի Հանրապետություն, N 2019:
- <sup>11</sup> Տե՛ս «Ապրանքային բորսաների և բորսային միջնորդների գործունեության կարգավորման մասին» ՀՀ Կառավարության որոշում՝ ընդունված 13.03.1994թ., Հայաստանի Հանրապետություն, N 115:
- <sup>12</sup> Տե՛ս Каменева Н.Г. Организация биржевой торговли. М. ЮНИТИ, 1998. С. 83.
- <sup>13</sup> Տե՛ս Անհրաժեշտ է նշել, որ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 94-րդ հոդվածի 4-րդ կետի երկրորդ պարբերության համաձայն՝ մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը, միևնույն մարմնի ընդունած և ուժի մեջ մտած *հավասար իրավաբանական ուժ ունեցող* իրավական ակտերի միջև հակասությունների դեպքում գործում են *ավելի ուշ ուժի մեջ մտած* իրավական ակտի նորմերը: Հարկ ենք համարում անդրադառնալ ապրանքային բորսաների գործունեության ոլորտը կարգավորող երեք նորմատիվ ակտերի ընդունման ամսաթվերին. նույնպես զարմանք է առաջացնում օրենսդրի դիրքորոշումը: Որոշում 1-ը ընդունվել է 05.12.2002թ., «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքը՝ 03.04.2002թ.: Նույն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 94-րդ հոդվածի 4-րդ կետի երկրորդ պարբերության ուժով գործում է «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքը, որով լիցենզավորում չի նախատեսվում, հետևաբար անիմաստ է դառնում Որոշում 1-ի ընդունումը:

## РЕЗЮМЕ

**Государственное регулирование деятельности товарных бирж в РА**

В статье анализируются ряд теоретических и практических вопросов, которые связаны с осуществлением государственного регулирования деятельности товарных бирж в РА. Автором проводится сравнительный анализ действующих на территории РА нормативных актов, которые регулируют вышеуказанную отрасль. В статье представляется позиция законодателя об осуществлении контроля над товарными биржами со стороны соответствующего уполномоченного органа. Автор приходит к выводу, что, несмотря на то обстоятельство, что на территории РА действует соответствующее регулирующее данную сферу нормативно-правовое поле, оно довольно противоречиво, а также конкретно над деятельностью товарных бирж государственное регулирование не осуществляется, поскольку соответствующий уполномоченный государственный орган отсутствует.

**Ключевые слова:** Товарная биржа, биржевая деятельность, государственное регулирование, государственный уполномоченный орган, правительство, контроль, лицензирование.

## SUMMARY

**Public regulation of activity of commodity exchanges in RA**

The article examines a number of theoretical and practical issues which are connected with realization of state regulation of activity of commodity exchanges in RA. The author presents a comparative analysis of operating in the territory of Armenia normative acts which regulate the above mentioned area. The article presents the position of the legislator about realization of control over commodity exchanges by the appropriate authorized organ. The author comes to the conclusion that, in spite of the fact that in the territory of the RA acts appropriate normative-legal field, that regulates that area, it is quite controversial, and public regulation specifically above activity of commodity exchanges is not realized, because appropriate authorized public organ is absent.

**Keywords:** Commodity exchange, exchange activity, public regulation, authorized public organ, government, control, licensing.

## ԱՐՄԵՆ ԱՍԱՏՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի դասախոս,  
իրավաբանական գիտությունների թեկնածու



### ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿԵՆՍԱԳՈՐԾՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻԻ ՏԵՍԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

Իրավական կարգավորումը և իրավունքը մարդկային, հասարակական ֆենոմեններ են: Իրավունքը ստեղծվում է մարդկանց կողմից, գործում է մարդկանց միջոցով և մարդկանց համար: Իրավունքը նման չէ այսպես կոչված ֆիզիկական, բնական ուժերին, որոնք գոյություն ունեն մարդու գործողություններից անկախ: Իրավունքը կարգ է՝ սահմանված մարդկանց կողմից, իրենց համար: Իր գործողություններում մարդը ենթարկվում է պատճառահետևանքային օրենքին կամ գործում է ազատ, կամայականորեն: Ըստ պատճառականության կամ ազատության տեսության՝ իրավունքը ստեղծվում է ոչ թե անկախ, այլ մարդու գործունեության միջոցով, նրա միջնորդությամբ<sup>1</sup>: Հետևաբար, մարդկության պատմության մեջ իրավունքի գոյության և գործողության հիմքերը կապված են մարդու էության հետ: Իսկ մարդն իր էությամբ «կենսասոցիալական հոգևոր» էակ է: «Մարդը՝ որպես էակ, ընդունակ է ակտիվորեն գործելու, հարմարվելու հանգամանքներին կամ փոխելու դրանք իր կարիքներին համապատասխան, ստեղծելու բնության մեջ գոյություն չունեցող առարկաներ, իր շուրջը ձևավորելու հատուկ արհեստական միջավայր՝ քաղաքակրթություն, և ժամանակ առ ժամանակ այն ավերելու, որպեսզի նորից իր իսկ ուժերով ձեռնարկի դրա վերստեղծումը և կատարելագործումը: Այսպիսով, մարդու՝ որպես էակի, հիմնական տարրերից առանձնահատկությունը այլ կենսաբանական էակներից կայանում է նրանում, որ մարդու գոյությունը միաժամանակ ընթանում է բնության մեջ, հասարակության մեջ և մշակույթում<sup>2</sup>: Բնության մեջ մարդը բնական էակ է և ապրում է բնական օրինաչափություններով, հասարակության մեջ սոցիալական էակ է և գործում է հասարակական օրենքներին (ներառյալ իրավական) համապատասխան, իսկ մշակույթում որպես հոգևոր իդեալական արժեքների ամբողջություն, մարդն ապրում է հոգևոր կյանքով: Մարդու գոյության և էության այս երեք կողմերը՝ կենսաբանակա-

նը, հասարակականը և իդեալականը, անխզելի են ու անբաժան: Դրանք՝ որպես մարդկության գոյության եռամիասնական կողմեր, փոխալայնմանավորված և փոխկապակցված են՝ փոխազդելով միմյանց վրա: Հասարակական կյանքում մարդը գործում է իր էության այդ երեք անխզելի նորմերին համապատասխան: Ամեն ինչ սկսվում է իրավական իդեալից՝ որպես հոգևոր աշխարհի երևույթ: Ձևավորվելով որպես իդեալ՝ իրավական գաղափարները ունեն զուտ բնական և հասարակական արժանույթ: Այդ սխեմայով է զարգանում հասարակական կյանքը արդեն մի քանի հարյուրամյակ, եթե այդ իդեալը ներկայացնենք որպես բնական իրավունքի տեսություն: Մարդու կենսաբանական (բնական) էությունը հիմք տվեց մշակելու բնական իրավունքի տեսությունը որպես իդեալ: Այդ իդեալն իր իրականությունն ու պաշտոնական ամրագրումն ստացավ իրավունքի դրական աղբյուրներում (օրենքներում): Սակայն, միևնույն է, այդ իդեալը՝ որպես անհրաժեշտություն, դեռևս մնում է որպես չիրացված հնարավորություն, նորմատիվ բնույթ ունեցող իդեալի տեքստ, քանի դեռ չի վերածվել իրականության և իրավակարգի:

Հասարակական կյանքի իրավական համակարգի գործողության ընթացքում իրավունքի գոյության այդ երեք կերպերը՝ իդեալը, նորմը և իրականությունը, ունեն տարբեր հասցեատերեր: Իդեալը մշակում են հոգևոր արժեքների կրողները: Օրենսդրի խնդիրն է ապահովել այդ իդեալի, օրինակ՝ բնական իրավունքի կատեգորիաների վերածումը դրական իրավունքի՝ արտահայտված նորմատիվ ակտերում: Իրավական կյանքի հաջորդ շրջան ենթադրում է անցում պոզիտիվ-իրավական նորմերից իդեալի կենսագործման, իրացման, կիրառման: Ցանկացած իրավական համակարգի ձևավորման և կայացման սկզբում իրավական իդեալը առաջին շարքում է՝ որպես տեսություն: Այն դեռևս ընդամենը իդեալ է, երազանք: Սակայն, իրավական իդեալը՝ որպես նորմատիվ-արժեքային անհրաժեշտ

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

կերպար, ունի բարձրագույն, կատարյալ ձև: Այդ իդեալը համարվում է մարդու ընդունակության դրսևորում. մտքով, պատկերացումով, երազանքով դուրս գալ արդեն իսկ առկա «գոյի» շրջանակներից, ինչը գերազանցում է գոյություն ունեցող սովորական իրավական նորմերից: Իրավական իդեալն ունի նպատակային բնույթ և ընդունակ է հեղաշրջելու իրավագիտակցությունը և դրա միջոցով իրավական կյանքն ու համակարգը: Իրավական իդեալը, որ համապատասխանում է սոցիալական շահերին և սկզբնապես գոյություն ունի միայն իրավագիտակցության մեջ, իր ձևական և քաղաքակիրթ արտահայտությունն է գտնում իրավաբանական օրենքում: Իրավական իդեալը՝ որպես օրենքների տեքստում շարադրված կայուն նորմերի համակարգ, հասարակության համար երաշխիք է անվերջ փոփոխությունների, անկայունության և անորոշության դեմ, որովհետև հասարակական կյանքի ձգտումներից մեկն էլ կայուն կողմորոշիչներն են: Եթե չլինեին մարդկանց փոփոխականությունը և շահերի բախումը, ապա չէր լինի նաև իդեալին իրավական նորմատիվ ձև տալու անհրաժեշտությունը: Սակայն ինքը՝ օրենքի նորմը, ըստ էության, նույնպիսի իդեալական կառույց է: Չէ՞ որ հենց ինքը՝ նորմատիվ ձևը (օրենքը), դեռ իրական կյանքը չէ, այլ ընդամենը փաստաթուղթ, տեքստ, որ ուղղված է ապագային, այսինքն՝ միայն օրենքի հրապարակմամբ մենք չունենք այն, ինչ որ կա, այլ ընդամենը այն, ինչ որ պետք է լինի:

Այսպիսով, որպեսզի այդ «պետք է լինի»-ն դառնա իրականություն, այսինքն՝ իրական կյանքը ընթանա օրենքի նախանշած հունով, անհրաժեշտ են նոր ջանքեր՝ ուղղված դրական իրավունքի կենսագործմանը: Օրենքով ամրագրված իդեալը ինքնին չի երաշխավորում իրավակարգի գոյություն՝ օրենքին համապատասխանող հարաբերություն: Սա հասարակական կյանքի օրինաչափություններից է, որովհետև «մարդիկ որպես կանոն մտածում են մի բան, ասում այլ բան, անում երրորդը (և բոլորը՝ տարբեր կերպ): Ինչպես օրենքի բառերը չեն գործում առանց այն գիտակցելու, այնպես էլ իրավական պատկերացումները միայն նախանշում են անհրաժեշտ վարքագծի հնարավոր ուղիները, սակայն չեն պարունակում բավարար կամային ազդակներ դրանց իրականացման համար»<sup>3</sup>: Հետևաբար, իրավունքը իր գոյությամբ արժեքավոր է ոչ թե այնքանով, որ գոյություն ունի օրենքում և նույնիսկ իրավագիտակցությունում (որպես գիտելիք և պատկերացում), այլ որքանով որ կենսագործ-

ված է մարդկանց գործողություններում և վարքագծում, հասարակական հարաբերությունների կենդանի շրջանառության մեջ՝ վերածվելով արդեն կարգավորված փաստի՝ իրավակարգի:

Ինչպես և ցանկացած իրավական ակտի, այնպես էլ օրենքի ընդունումը, հռչակումը գործի սկիզբն է. խնդիրը կյանքում այն կենսագործելն է: Օրենսդրության իրականացումը ֆիզիկական և իրավաբանական անձանց այնպիսի վարքագիծ, գործողություն և գործունեություն է, որոնցում կյանքում կենսագործվում են իրավական կարգադրագրերը: Ի տարբերություն այլ սոցիալական նորմերի իրականացման (սովորույթ, բարոյականություն և այլն)՝ օրենսդրության իրականացումն ունի իր յուրահատկությունները, որոնք բխում են իրավասահմանումների բնույթից: Այդ սահմանումները պետք է կենսագործել կյանքում՝ ստեղծելով իրական հնարավորություն իրավական իրականության:

Բնական իրավունքը որպես իդեալ են ներկայացնում բազմաթիվ գիտնականներ: Համաձայն բնական իրավունքի տեսության հետևորդների՝ բնական իրավունքը կատարելագործման կոչ է դրական իրավունքի համար, բայց ոչ միայն կատարելագործման կոչ, այլ նաև այդպիսի կատարելագործման պահանջ: Բնական իրավունքը հանդես է գալիս որպես իդեալ, որին պետք է ձգտի գործող իրավունքը իր զարգացման պատմական ճանապարհին: Ակնհայտ է, որ մարդկային բանականությունից բացի ոչ այլ ինչ ի վիճակի չէ որոշելու և ձևակերպելու այդպիսի իդեալը<sup>4</sup>: Այդպիսի իդեալին հասնելու համար բնական իրավունքը պետք է տա արտաքին ազատության բնութագիրը իր ծավալով և բովանդակությամբ, ինչպես նաև որոշի նորմերին ներկայացվող և սահմանափակող պահանջները: Այսպիսի հասկացությամբ բնական իրավունքը՝ որպես իդեալ, ոչ մի կերպ չի հակասում իրավունքի բնորոշմանը. «Իրավունքը արտաքին ազատությունն է՝ ներկայացված և սահմանափակված նորմով»:

Այսպիսով, փիլիսոփայական մոտեցման դեպքում մարդկային հասարակության իրավական համակարգի կայացումը մեծապես կախված է իրավական իդեալից (ծրագրից, տեսությունից), որը, անցնելով պոզիտիվացման գործընթացը, վերածվում է նորմատիվ ձև ունեցող իրավական պահանջների (տեքստի): Որպես այդպիսին՝ այդ պոզիտիվ իրավական ձևը դեռևս իրականություն չդարձած հնարավորություն է՝ չկենսագործված իրական կյանքում: Հետևաբար իրավական համա-

կարգի շարժումը պետք է շարունակվի՝ իրավական նորմատիվ ձևեր կյանքում կենսագործելու և այդպիսով իդեալը իրականություն դարձնելու համար: Այս ամբողջ շղթան, ըստ էության, իրավունքի կենսագործունեությունն է, որի վերջնական նպատակը

իրավական, իդեալին համապատասխանող իրավակարգի հաստատումն է:

<sup>1</sup> Տե՛ս Կորկուով Մ. Մ. Лекции по общей теории права. Спб., юридический центр пресс, 2003. С.341.

<sup>2</sup> Տե՛ս Բачинин Զ. Ա. Сальников В. П. Философия права. Краткий словарь. Спб., Издательство “Лан”, 2000. С. 360.

<sup>3</sup> Տե՛ս Լейст Օ. Է. Сущность права. Проблемы теории и философии права. М., ИКО “Зерцало-М”, 2002. С.270.

<sup>4</sup> Տե՛ս Եգորով Ս. Ն. Аксиоматические основы теории права. Спб., Изд. “Лексикон”, 2001. С. 92.

## РЕЗЮМЕ

### *Теоретические подходы к проблеме реализации права*

В статье подвергнута анализу теория причинности или свободы, согласно которому право создается посредством человеческой деятельности, в связи с сущностью человека. Человек как “биосоциальное духовное” существо отличается от других биологических существ тем, что его существование одновременно протекает в природе, в обществе и в культуре. В природе человек живет согласно естественным закономерностям, в обществе согласно общественным законам (включая правовые), а в культуре как носитель духовных идеальных ценностей. Указанные три стороны бытия и сущности человека тесно связаны и неотделимы. Эти триединные аспекты человеческого существования взаимосвязаны, взаимообусловлены и находятся во взаимодействии. В общественной жизни человек функционирует в соответствии с данными неотделимыми нормами. Формируясь как идеал, правовые идеи имеют природные и социальные корни, которые реализуются и официально закрепляются в позитивных источниках права ( в законах).

В заключении статьи отмечается, что право в своем существовании ценно тем, что реализуется в человеческих действиях, их поведении, в общественных отношениях, воплощаясь в урегулированный факт – правопорядок.

## SUMMARY

### *Theoretical approaches to the problem of the law realization*

In the article were analyzing the theory of causality or freedom, according to which the law created through human activity, through his intermediation connected with the basis of human nature. Distinguishing feature of a man as a “biosocial spiritual” being from other biological beings is that human existence comes at the same time in nature, society and culture. In nature man is a natural being and lives by natural laws, in the community it is a social being, and acts in accordance with public law (including - legal), and in culture, as the integrity of the spiritual ideal values, a man lives with spiritual life. These three aspects of human existence are inseparable. They, as three unified aspects of human existence, are interdependent and interrelated and influence each other. In public life, a person acts in accordance with these three inseparable norms. Formed as an ideal, the legal ideas have purely natural and social roots that derive their implementation and formalization in positive sources of law (the laws).

The conclusion of the article is that the law is valuable for it’s materialization in the actions and behavior of the person, in public relations, embodied in already settled fact – law and order.

### ՄԱՐԹԱ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ

ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Արաբկիրի բաժնի ավագ իրավախորհրդատու, ոստիկանության մայոր, Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի իրավունքի և քաղաքականության ինստիտուտի քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի ամբիոնի հայցորդ



## ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵՒԱՅԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿԵԼՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Ընտանիքը հասարակության զարգացման փուլերում սոցիալական կառուցվածքի անհրաժեշտ տարրն է հանդիսացել: Ընտանիքը ցանկացած քաղաքակրթության գոյատևման անհրաժեշտ պայմանն է, պետականության առաջնային հիմքը: Այս կապակցությամբ ընտանիքի պաշտպանությունը իրավունքի տարբեր ճյուղերի նորմերով պայմանավորված է ոչ միայն մասնավոր անձանց շահերով, այլ նաև պետության ընդհանուր շահերով: Ընդ որում, օրենսդիր խնդիրը միտված է ոչ թե առանձին անձի որևէ շահի ապահովմանը, այլ ընտանիքի՝ որպես կարևորագույն սոցիալական ինստիտուտի, ձևավորման, նրա կայուն զարգացման ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունների պաշտպանությունն է:

Համաձայն 1989թ. «Երեխաների իրավունքների մասին» կոնվենցիայի՝ ցանկացած անչափահաս օժտված է մի շարք իրավունքներով և ազատություններով, այդ թվում՝ ծնողների կողմից դաստիարակման և խնամքի իրավունքով: Ինչպես արդարացի նշում է Ա.Մ. Նեչաևան ընտանիքը երեխայի բնական միջավայրն է, որտեղ դրվում են մարդու հոգևոր և ֆիզիկական առողջության զարգացման նախադրյալները: Ընտանիքում են ձևավորվում երեխայի ֆիզիկական և հոգևոր կարողությունները, իրավական դաստիարակության հիմքերը<sup>1</sup>:

Ժամանակակից հասարակական կյանքի իրողությունները ցույց են տալիս, որ, որպես կանոն, ծնողները լիարժեք կատարում են իրենց երեխայի դաստիարակության պարտականությունները, հոգ են տանում նրանց ֆիզիկական դաստիարակության, հոգևոր աշխարհի զարգացման, պատշաճ կրթության ապահովման, իրավական և դաստիարակության այլ խնդիրներով: Դրանց կողքին, ցավով պետք է շեշտել, որ մեր հասարակությունը ձերբազատված չէ այնպիսի ծնողներից, որոնք անտարբեր են իրենց երեխաների ճակատագրի

հանդեպ, նրանց համար չեն ապահովում մինիմալ պայմաններ ֆիզիկական և հոգևոր զարգացման, հասարակության լիիրավ անդամ ձևավորելու համար: Բացի թվարկածից, գոյություն ունեն ծնողներ, որոնք զուրկ են ծնողական զգացմունքներից, մտագոհված չեն իրենց երեխաների ճակատագրով և հաճախ շահագործում են նրանց աշխատանքը, ներգրավում հանցագործության և հակահասարակական այլ արարքների կատարման մեջ:

Ընտանիքում երեխայի լիիրավ ապրելու և պատշաճ դաստիարակման իրավունքը կարգավորվում և պաշտպանվում է ոչ միայն ազգային օրենսդրությամբ, այլև միջազգային պայմանագրերով: Դաստիարակման գործընթացը սկսվում է երեխայի ծնվելու պահից և շարունակվում է երկար տարիներ: Ընտանիքում «երեխան ձեռք է բերում սոցիալական շփման առաջնային հմտությունները, ձևավորվում են բնավորության հիմնական գծերը, որոնք մեծ մասամբ որոշում են նրա հետագա ճակատագիրը»: Ծնողների և այլ անձանց կողմից երեխաների դաստիարակության պարտականությունները չկատարելու արդյունքում «դժվարանում է երեխայի բնականոն զարգացումը, մեծանում է նյարդահոգեբանական խանգարումների վտանգը»: Ընտանիքում կոնֆլիկտային մթնոլորտի պայմաններում երեխաների մոտ միայնակության և հուզական օտարման զգացում է առաջանում, ինչը դեռահասների մոտ հոգեկան խանգարումների պատճառ կարող է հանդիսանալ<sup>2</sup>:

Ժամանակակից հասարակության թերևս ամենաանպաշտպան զանգվածը երեխաներն են, որոնց իրավունքների և շահերի պաշտպանությունը հանդիսանում է ՀՀ Սահմանադրության գերակա սկզբունքներից մեկը: Սահմանադրության 36-րդ հոդվածն ուղղակի սահմանում է ծնողների պարտականությունը՝ հոգ տանել իրենց երեխաների դաստիարակության, առողջության, լիարժեք ու ներդաշնակ զարգացման և կրթության համար:

www.lawinstitute.am

Ծնողական պարտականությունները չկատարելու, դրանք ոչ պատշաճ կատարելու համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված է իրավական պատասխանատվություն:

Հայաստանի Հանրապետությունում երեխաների դաստիարակության հարցերը կարգավորվում են նախ և առաջ ՀՀ ընտանեկան օրենսգրքով, որի 41-րդ հոդվածի համաձայն՝

- յուրաքանչյուր երեխա ունի ընտանիքում ապրելու և դաստիարակվելու (որքան դա հնարավոր է), իր ծնողներին ճանաչելու, նրանց հոգատարությանն արժանանալու, նրանց հետ համատեղ ապրելու իրավունք, բացառությամբ այն դեպքերի, երբ դա կարող է հակասել նրա շահերին,

- երեխան ունի նաև իր ծնողներից դաստիարակություն ստանալու, իր շահերի ապահովության, համակողմանի զարգացման, իր մարդկային արժանապատվությունը հարգելու, ինչպես նաև ֆիզիկական, մտավոր, հոգևոր լիարժեք զարգացման համար անհրաժեշտ կենսապայմաններ ունենալու իրավունք:

Օրենսգրքում ամրագրված է այն սկզբունքը, համաձայն որի՝ ծնողական իրավունքները չեն կարող իրականացվել երեխաների շահերին հակառակ: Երեխաների շահերի ապահովումը պետք է լինի ծնողների հիմնական հոգածության առարկան: Ծնողական իրավունքներն իրականացնելիս նրանք իրավունք չունեն վնաս պատճառելու երեխաների ֆիզիկական և հոգեկան առողջությանը, նրանց բարոյական զարգացմանը: Երեխաների դաստիարակության եղանակները պետք է բացառեն նրանց նկատմամբ քամահրական, դաժան, կոպիտ, մարդկային արժանապատվությունը նսեմացնող վերաբերմունքը, վիրավորանքը կամ շահագործումը (ՀՀ ընտանեկան օրենսգրքի 53-րդ հոդված): Այս դեպքում ծնողների նկատմամբ կիրառվում է ՀՀ ընտանեկան օրենսգրքով նախատեսված պատասխանատվության միջոցները, մասնավորապես՝ ծնողական իրավունքների զրկելը (ՀՀ ընտանեկան օրենսգրքի 59-րդ հոդված), ծնողական իրավունքների սահմանափակումը (ՀՀ ընտանեկան օրենսգրքի 63-րդ հոդված):

Ծնողների կամ նրանց փոխարինող անձանց կողմից անչափահաս երեխաների դաստիարակության և ուսուցման պարտականությունները չարամտորեն չկատարելը, անչափահասների կողմից թմրամիջոցներ օգտագործելն առանց բժշկի նշանակման կամ նրանց կողմից այլ իրավախախտումներ կատարելը, հասարակական վայրերում մինչև տասնվեց տարեկան դեռահասների հարբած վիճակում երևալը, ինչպես նաև նրանց կողմից ոգե-

լից խմիչքներ օգտագործելը առաջացնում է ծնողների և նրանց փոխարինող անձանց վարչական պատասխանատվություն:

Բացի ծնողներից, դաստիարակչական ֆունկցիաներով օժտված են նաև անչափահասների համար տարբեր մասնագիտացված հիմնարկությունների աշխատակիցները (նախակրթական համալիրների, միջնակարգ դպրոցների աշխատակիցները և այլն), որոնք տվյալ պարտականությունները կատարում են՝ ելնելով իրենց կանոնադրական ու ծառայողական պարտականություններից: Վերջին տասնամյակում նշված հիմնարկությունների անձնակազմերի կողմից անչափահասների դաստիարակության պարտականությունները չկատարելու և վերջիններիս նկատմամբ դաժան վերաբերմունքի դեպքեր են արձանագրվել<sup>3</sup>:

Երեխաների դաստիարակության պարտականությունների կատարումը կարգավորվում է նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, համաձայն որի՝ խնամակալները և հոգաբարձուները պարտավոր են հոգալ իրենց խնամարկյալների ապրուստը, ապահովել նրանց խնամքն ու բուժումը, կրթությունը և դաստիարակությունը, պաշտպանել նրանց իրավունքներն ու շահերը (38-րդ հոդված):

Երեխայի դաստիարակությանը վերաբերվող օրենսդրական պահանջների ապահովման երաշխիքներից մեկը ՀՀ քրեական օրենսգրքով երեխայի դաստիարակության պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար քրեական պատասխանատվության սահմանումն է (ՀՀ քրեական օրենսգրքի 170-րդ հոդված). մասնավորապես պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից հարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

Չնայած նրան, որ նշված հանցակազմը ՀՀ քրեական օրենսդրության մեջ նորամուծություն է (2003թ.), քրեաիրավական վիճակագրության տվյալները վկայում են, որ տվյալ հանցագործության դինամիկան զրոյական է, քանի որ համաձայն ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի տվյալների՝ 2003թ-ից առ այսօր ՀՀ քրեական օրենսգրքի 170-րդ հոդվածով քրեական գործի հարուցման դեպքեր չեն արձանագրվել:

Ակնհայտ է, որ Հայաստանի Հանրապետությունում նշված բնույթի գրանցված հանցագոր-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ծությունների ցուցանիշները չեն արտահայտում այդ հանցագործությունների իրական պատկերը, քանի որ այս բնույթի հանցագործություններն ունեն լատենտայնության բարձր մակարդակ, ինչը պայմանավորված է նրանով, որ այդ հանցագործություններից տուժածները անչափահասներ են, որոնք կամ չեն գիտակցում իրենց նկատմամբ կատարված գործողությունների հանցավոր բնույթը, կամ իրենք իսկ շահագրգիռ են, որպեսզի չբացահայտվեն համապատասխան դեպքերը:

ՌԴ քրեական օրենսգրքում համանման հոդվածի գոյությունը ոչ միայն դարձել է գործող, այլ նաև հաճախակի են անձինք ենթարկվում քրեական պատասխանատվության: Այսպես, 1997թ. Ռուսաստանում գրանցվել է այս տեսակի 1313 հանցագործություն, 1999թ.-ին՝ 2116<sup>4</sup>:

Մեր կարծիքով, համանման արարքները տարածված են նաև մեր հանրապետությունում, ինչի վկայությունն են անչափահասների կողմից կատարվող արձանագրված հանցագործությունների դեպքերը (2012թ. ընթացքում Երևան քաղաքում կատարվել է 202 հանցագործություն՝ 2011թ. 179-ի դիմաց, այսինքն՝ հանցագործությունների թիվը 23 դեպքով աճել է):

Նշված հոդվածի դիսպոզիցիան հստակ ընկալելու նպատակով անդրադառնանք «դաստիարակություն» հասկացությանը: Մեր կարծիքով, «դաստիարակությունը» կայանում է հետևյալում.

1. անչափահասի առողջության ապահովումը, ինչը նրա լիարժեք և բազմակողմանի զարգացման կարևորագույն նախադրյալ է հանդիսանում, քանի որ ՀՀ Սահմանադրության 38-րդ հոդվածը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք ունի օրենքով սահմանված եղանակներով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք: Առողջապահության բոլոր հաստատություններում մինչև 7 տարեկան երեխաները բժշկական օգնություն ստանում են անվճար հիմունքներով: Երեխայի առողջ աճը ապահովելու նպատակով ծնողները և այն անձինք, որոնց վրա դրված է երեխային դաստիարակելու պարտականությունը, պարտավոր են նրան ապահովել սննդով, բարենպաստ պայմաններ ստեղծել կենցաղի և հանգստի համար,

2. դաստիարակության բաղկացուցիչ մասն է կազմում կրթությունը: ՀՀ Սահմանադրության 39-րդ հոդվածը սահմանում է կրթություն ստանալու իրավունքը, միաժամանակ ամրագրում է հիմնական ընդհանուր կրթության պարտադիր լինելը: Երեխաների դաստիարակությանն ու կրթությանը վերաբերող բոլոր հարցերը ծնողները լուծում են

փոխադարձ համաձայնությամբ՝ ելնելով երեխաների շահերից և հաշվի առնելով տասը տարին լրացած երեխայի կարծիքը:

Ծնողի կամ նրանց փոխարինող անձանց պարտականությունները ունեն մի շարք առանձնահատկություններ, որոնք են.

- ծնողները սեփական երեխաների նկատմամբ ունեն հավասար իրավունքներ և կրում են հավասար պարտականություններ,

- ծնողական պարտականությունները ժամանակի մեջ սահմանափակ են: Դրանք ավարտվում են երեխայի չափահաս դառնալուն պես, բացառությամբ այն դեպքերի, երբ ծնողները պարտավոր են իրենց անաշխատունակ չափահաս երեխաների մասին հոգ տանել (ՀՀ ընտանեկան օրենսգրքի 73-րդ հոդված),

- ծնողների պարտականությունների իրականացումը պետք է պահպանի երեխայի շահերի գերակայությունը,

- ծնողները բոլոր այլ անձանց հանդեպ ունեն իրենց երեխաներին դաստիարակելու նախապատվության իրավունք:

ՀՀ քրեական օրենսգրքի 170-րդ հոդվածի համաձայն՝ հանցագործության օբյեկտ են հանդիսանում երեխայի դաստիարակության և խնամքի իրավունքը ապահովող հասարակական հարաբերությունները: Վերլուծելով քրեաիրավական նորմի բովանդակությունը՝ գալիս ենք այն եզրահանգման, որ երեխայի դաստիարակության պարտականությունների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը արդեն իսկ քրեորեն պատժելի արարք է: Ստացվում է, որ մենք կարող ենք պատասխանատվության ենթարկել, օրինակ, ծնողին, որը երեխայի հետ համատեղ չի բնակվում և բացարձակապես չի մասնակցում նրա դաստիարակությանը, անգամ եթե երեխան դաստիարակվում և խնամք է ստանում մյուս ծնողի կամ այլ անձանց կողմից: Հանցագործության որակման համար առաջին հերթին անհրաժեշտ է հաստատել տուժողի՝ անչափահաս երեխայի մեղադրյալից կախվածությունն ու անմիջական կապը: Այն կարող է արտահայտվել նրանում, որ հանցագործության սուբյեկտը և երեխան միասին են բնակվում, հանցագործության սուբյեկտը հանդիսանում է երեխայի միակ խնամակալն ու դաստիարակը, հանցագործության սուբյեկտն ու երեխան մշտապես փոխադարձ կապի մեջ են գտնվում միմյանց հետ: Ամեն դեպքում, այդ կապը պետք է շարունակական բնույթ կրի, որպեսզի այդ ժամանակահատվածում որոշվի մեղադրյալի ու երեխայի միջև եղած կապի բնույթը, այդ կապի բա-

ցասական ազդեցությունը, երեխայի զարգացմանը չնպաստելը, նրա նկատմամբ հոգ չտանելը, նրան սննդով, հագուստով չապահովելը, առողջ միջավայր չստեղծելը, ընտանեկան ջերմություն չտալը և այլ բազում հանգամանքներ:

Քրեական օրենսգրքի 170-րդ հոդվածի չկիրառումը պայմանավորված է նաև հետևյալ հանգամանքով. համեմատական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 170-րդ հոդվածի բովանդակությունը (արարքի օբյեկտիվ կողմը) կարծես թե կրկնում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 178-րդ հոդվածի բովանդակությունը: Վերջինս ուղղակի նշում է, որ ծնողների կամ նրանց փոխարինող անձանց կողմից անչափահաս երեխաների դաստիարակության և ուսուցման պարտականությունները չարամտորեն չկատարելը, անչափահասների կողմից թմրամիջոցներ օգտագործելն առանց բժշկի նշանակման կամ նրանց կողմից այլ իրավախախտումներ կատարելը առաջացնում են տուգանքի նշանակում ծնողների կամ նրանց փոխարինող անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկի չափով: Նույն հոդվածի 2-րդ մասը վարչական պատասխանատվություն է սահմանում ծնողների կամ նրանց փոխարինող անձանց համար՝ հասարակական վայրերում մինչև տասնվեց տարեկան դեռահասների հարբած վիճակում երևալու, ինչպես նաև նրանց կողմից ոգելից խմիչքներ օգտագործելու համար, որն առաջացնում է տուգանքի նշանակում՝ աշխատավարձի քառասնապատիկի չափով:

Այստեղ խնդիրը կայանում է նրանում, որ երկու օրենսգրքերը արարքի բնորոշումը տալով, չեն հստակեցրել այն տարբերիչ հատկանիշները, որոնք հիմք կհանդիսանան մեկ դեպքում անչափահաս երեխաների դաստիարակության և ուսուցման պարտավորությունները չկատարելը համարելու քրեորեն պատժելի արարք, իսկ երկրորդ դեպքում՝ այդ արարքը զնահատելու որպես վարչական զանցանք:

Համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 170-րդ հոդվածի 2-րդ մասի՝ նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը պետք է զուգորդվի անչափահասի նկատմամբ դաժան վերաբերմունքով: Մեր կարծիքով, դաժան վերաբերմունքը անողորմ, անգութ, անխիղճ վերաբերմունքն է 18 տարին չլրացած անձի նկատմամբ: Վերաբերմունքը ինչ-որ բանի նկատմամբ ենթադրում է արարքների ամբողջ

չականություն, որոնք կարող են արտահայտվել ինչպես գործողությամբ, այնպես էլ անգործությամբ: Արարքների այսպիսի համակարգը արտացոլում է սուբյեկտի դրսևորած վարքը, որը բնութագրվում է դաստիարակության պարտականությունները չկատարելով:

Հանցագործության օբյեկտիվ կողմը բաղկացած է երկակի արարքների ամբողջականությունից. երեխային դաստիարակելու պարտականությունը չկատարելուց և այդ պարտականությունների կատարման նկատմամբ դրսևորած անգործությունից, իսկ նշված պարտականության ոչ պատշաճ կատարումը արդեն որոշակի գործողության կատարում է ներկայացնում, որը ոչ միայն բավարար չէ, այլ իր բովանդակությամբ և դրսևորման ձևով բացասաբար է անդրադառնում անչափահասի հոգևոր աշխարհի ձևավորման վրա, չի ապահովում նրա ֆիզիկական հարմունիկ զարգացումը, չի բավարարում նրա զարգացմանը՝ կյանքի մարտահրավերները ընկալելու, դրանց հաղթահարման ելքերը գտնելու և հաղթահարելու համար: «Պարտականությունների չկատարումը» միաժամանակ ենթադրում է դաստիարակչական գործընթացին ոչ լիարժեք մասնակցություն, ինչպես նաև դաստիարակելու պարտականությունների մասնակի կատարումը ծնողի կամ այն անձի կողմից, ում վրա դրված է երեխայի դաստիարակության պարտականությունը. կամ մանկավարժի կամ ուսումնական, բուժական կամ դաստիարակչական հաստատության այլ աշխատողների կողմից, ինչպես նաև նշված գործողությունները ինչ-որ չափով կատարելը՝ զուգորդված երեխայի նկատմամբ դաժան վերաբերմունքով: «Չկատարումը» իրենից ներկայացնում է անչափահասին դաստիարակելու գործողությունների չկատարումը, այն միջոցների չձեռնարկումը, որոնց կատարման պարտականությունը ստանձնել էր անձը: Երեխայի դաստիարակության պարտականությունների ոչ պատշաճ կատարումը ծնողների կամ նրանց հավասարեցված անձանց ձևական, աղճատված, հաճախ կանխամտածված թերի իրականացումն է:

Երեխային դաստիարակելու պարտականությունների չկատարումը, որը զուգորդված է անչափահասի նկատմամբ դաժան վերաբերմունքով, կազմում է ՀՀ քրեական օրենսգրքի 170-րդ հոդվածի 2-րդ մասի՝ որպես որակյալ դարձնող հանգամանքի բովանդակությունը:

Գ. Ելիսեևը նշում է, որ «դաժան վերաբերմունքը» երեխաների նկատմամբ ֆիզիկական բռնությունն է, ֆիզիկական պատիժը, սեքսուալ բռ-



ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

նությունը, հոգեկան բռնությունը, երեխայի շահերի արհամարհումը<sup>5</sup> : Կարծում ենք, որ «դաժան վերաբերմունք» հասկացության այս բացատրությունը ընդունելի չէ, քանի որ քրեական իրավունքի դրույթներից ելնելով՝ ֆիզիկական բռնությունն ու ֆիզիկական պատիժը թերևս միևնույն հասկացությունն են, սակայն սեքսուալ բռնությունը ինքնուրույն գնահատականի արժանի հանգամանք է, քանի որ դրա համար քրեական օրենսդրությունն այլ մոտեցում է դրսևորում՝ այդ արարքը նախատեսելով այլ հողվածում, սահմանելով դրա համար համապատասխան պատժատեսակ և պատժաչափ:

Կարծում ենք, որ նպատակահարմար է 170-րդ հողվածը համալրել մեկ այլ որակյալ դարձնող նորմով, մասնավորապես՝ երկու և ավելի անչափահասների նկատմամբ վերլուծվող հանցագործության կատարման դեպքում սահմանելով խիստ պատիժ:

Հարկ է նշել նաև այն, որ հատկապես մեծ է այն արարքների հանրային վտանգավորության աստիճանը, որոնք ուղղված են ակնհայտ անօգնական վիճակում գտնվող անչափահասների դաստիարակության պարտականությունները չկատարելուն: Դրանց թվին պատկանում են այն անձինք, ովքեր ունեն հոգեկան տկարամտություն կամ հոգեկան խանգարումներ, ինչի արդյունքում վերջիններս օբյեկտիվորեն գրկված են ճիշտ ընկալելու իրենց հետ կատարվածը: Այս հանգամանքներից նպատակահարմար ենք գտնում հաշվի առնել որպես տվյալ հանցակազմը որակյալ դարձնող հատկանիշ:

Այս հանցագործության սուբյեկտիվ կողմը բնութագրվում է դիտավորությամբ: Դիտավորության բովանդակությունը կազմում է մեղավորի կողմից անչափահասի դաստիարակման պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման և նրա նկատմամբ դաժան վերաբերմունքի հանրային վտանգավորության գիտակցումը: Առանձին գիտնականների պնդումները, թե տվյալ հանցագործությունը կարող է անգուշությամբ կատարվել, մեր կարծիքով, անհիմն են, քանի որ երեխային դաստիարակելու պարտականությունը չկատարելը կարող է առկա լինել միայն անուղղակի դիտավորությամբ:

Հանցագործության սուբյեկտները հատուկ են. դրանք անչափահասների դաստիարակման համար պատասխանատու անձինք են: Անչափահասին դաստիարակելու պարտականությունը դրված է ծնողների (ՀՀ ընտանեկան օրենսգրքի 51-րդ հողված), որդեգրողների (ՀՀ ընտանեկան օրենսգր-

քի 112-րդ հողվածի 1-ին մաս), խնամակալների (ՀՀ ընտանեկան օրենսգրքի 134-րդ հողվածի 1-ին մաս), խնամատարների, մանկավարժների կամ ուսումնական, բուժական կամ դաստիարակչական հաստատության այլ աշխատողների վրա:

Անձին ՀՀ քրեական օրենսգրքի 170-րդ հողվածով պատասխանատվության ենթարկելիս անհրաժեշտ է հաստատել այն հիմքը, որի համաձայն նա պարտավոր էր դաստիարակել երեխային, ինչպես նաև սահմանել նրա կողմից այդ պարտականությունը կատարելու սուբյեկտիվ հնարավորությունը: Այն, ինչպես հայտնի է, կախված է մի շարք գործոններից՝ անձի ֆիզիկական և հոգեկան հատկանիշներից, արարքի կատարման պահին նրա առողջական վիճակից, գիտելիքների մակարդակից, հոգևոր հարստությունից, դաստիարակության աստիճանից և այլն :

Մանկության պաշտպանության ոլորտում, հանցավորության դեմ պայքարում իրավապահ մարմինների կարևորագույն խնդիրն է անչափահասների դեմ ուղղված հանցագործությունների բացահայտումն ու կանխարգելումը: Կարևոր նշանակություն ունի պրոֆիլակտիկ աշխատանքը ինչպես անչափահասների, այդպես էլ նրանց ծնողների կամ վերջիններիս փոխարինող անձանց, մանկավարժական անձնակազմերի և բոլոր այն անձանց հետ, ում վստահված է անչափահասների դաստիարակությունը:

ՀՀ ոստիկանության՝ անչափահասների գործերով ստորաբաժանումներն իրենց ֆունկցիոնալ պարտականություններն իրականացնելիս առաջնորդվում են ՀՀ ՆԳՆ 08.08.1996թ. թիվ 633 հրամանով, որի 6.4 կետի համաձայն՝ անչափահասների ծնողներին կամ նրանց փոխարինող անձանց անչափահասների գործերով ստորաբաժանումը վերցնում է պրոֆիլակտիկ հաշվառման, ինչի հիմք հանդիսանում է երեխաների դաստիարակությամբ զբաղվելու պարտականություններից չարամտորեն խուսափելը և իրենց հակահասարակական վարքագծով անչափահասների կողմից իրավախախտումների կատարմանը նպաստելը:

Ներկայումս Երևան քաղաքի վարչությանը ենթակա ոստիկանության բաժինների՝ անչափահասների գործերով բաժանմունքներում պրոֆիլակտիկ քարտային հաշվառման մեջ գտնվում է թվով 6 ծնող, որոնց հետ մշտապես անհատական պրոֆիլակտիկ աշխատանքներ են իրականացվում: Սակայն, վերլուծելով ոստիկանության նշված ստորաբաժանումների կողմից այս ուղղությամբ իրականացվող աշխատանքները և ՀՀ ոստիկանության

www.lawinstitute.am

ինֆորմացիոն բաժնի կողմից տրամադրված տվյալները, գալիս ենք այն եզրահանգման, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 178-րդ հոդվածը բացարձակապես չի կիրառվել վերջին տասնամյակում, ուստի անհրաժեշտ է համապատասխան աշխատանքներ իրականացնել, որպեսզի նշված նորմը սկսի աշխատել և վարչական իրավախախտումներ թույլ տվող ծնողները կամ նրանց փոխարինող անձիք ենթարկվեն վարչական պատասխանատվության՝ նրանց կողմից թույլ տրվող նմանատիպ երևույթները բացառելու նպատակով, առավել ևս, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքը (224-րդ հոդվածը) սահմանում է 178-րդ հոդվածով ՀՀ ոստիկանության քննելու և վարչական տույժ նշանակելու իրավասությունը:

Կարևորվում է նաև պրոֆիլակտիկ աշխատանքների իրականացումը ընտանիքների հետ: Իրականում իրավապահ մարմինները չեն կարող բացահայտել ծնողների կողմից երեխային դաստիարակելու պարտականությունների չկատարման բոլոր դեպքերը: Հետևաբար, անհրաժեշտ է ուսումնական հաստատությունների (հանրակրթական դպրոցների, մանկապարտեզների, հատուկ ուսումնական հաստատությունների և այլն) անձնակազմերի հետ սերտ համագործակցություն հաստատել, ինչը հաճախ չի հաջողվում՝ ելնելով արդեն իսկ ձևավորված ազգային կարծրատիպից, թե իբր ոստիկանության հետ համագործակցությունը կարող է բացասաբար ազդել ուսումնական հաստատության հեղինակության վրա:

<sup>1</sup> Տե՛ս Нечаева А. М. Семейное право. Курс лекций. 2-е изд. - М., 2001. С. 155.  
<sup>2</sup> Տե՛ս Кумановская А. Л. Права и обязанности родителей по воспитанию детей в семейном праве РФ. - Дис. канд. юрид. наук. - М., 2005. С.36.  
<sup>3</sup> Տե՛ս <http://webcache.googleusercontent.com/search?q=cache:E1xu4I4sWsAJ:7or.am/archives/15489>  
<sup>4</sup> Տե՛ս Пудовочкин Ю.Е. “Ответственность за преступления против несовершеннолетних”, СПб, 2002. С.185.  
<sup>5</sup> Տե՛ս Елисеев Д. Жестокое обращение с детьми как проблема современного общества//www.prof.msu.ru  
<sup>6</sup> Տե՛ս Кудрявцев В.Н. Объективная сторона преступления, М., 1960. С.65.

**Օգտագործված գրականության ցանկ**

1. ՀՀ քրեական օրենսգիրք:
2. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք:
3. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք:
4. Нечаева А. М. Семейное право. Курс лекций. 2-е изд. М., 2001 Кумановская А. Л. Права и обязанности родителей по воспитанию детей в семейном праве РФ. Дис. канд. юрид. наук. М., 2005.
5. Пудовочкин Ю.Е. “Ответственность за преступления против несовершеннолетних”. СПб, 2002.
6. Елисеев Д. Жестокое обращение с детьми как проблема современного общества//www.prof.msu.ru

**РЕЗЮМЕ**

**Уголовная ответственность за неисполнение обязанностей по воспитанию несовершеннолетнего**

В статье обсуждается проблема неисполнения обязанностей по воспитанию родителями или иными лицами, на которых возложены эти обязанности, а равно педагогом или другим работником образовательного, воспитательного, лечебного учреждения. Представлены статистические данные касательно возбуждения уголовных дел по ст.170 УК РА, сделаны соответствующие выводы и предложения по активизации работ, направленных на обнаружение признаков обсуждаемого состава преступления, а также совершенствования вышеуказанной нормы.

**SUMMARY**

**Criminal liability for non-fulfillment of obligations of upbringing minors**

This article discusses the problem of not performing by the parents or other responsible entities, such as teachers, officers of educational, child and patient care institutions, of the obligations of upbringing and educating the children. The article also reflects the statistical data on commencement of prosecution on the basis of Article 170 of Criminal Code of RA, makes conclusions and suggestions for revealing the components of the described crime, as well as the improvement of the mentioned Article.

## ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Եվրոպական ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի դատավարական իրավունքի ամբիոնի ասպիրանտ

### ՀԱՏՈՒԿ ՎԱՐՈՒՅԹԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Քաղաքացիական դատավարության օրենսդրությունը, հայցային վարույթի գործերից բացի, դատական իրավասության է հանձնել նաև հատուկ վարույթի գործերի քննությունն ու լուծումը (ՔԳՕ 27-36<sup>1</sup> գլուխներ): Այդ գործերից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատկությունները, բայց բոլորն էլ օժտված են մեկ ընդհանուր հատկանիշով, որը դրանց էականորեն տարբերակում է ինչպես հայցային, այնպես էլ հատուկ հայցային վարույթների գործերից: Հատուկ վարույթի գործերում շահագրգռված անձանց միջև բացակայում է դատարանի քննությանը ենթակա (նրա լուծմանը հանձնված) իրավունքի մասին վեճը: Դրա համար էլ այդ վարույթն անվանվում է նաև «ոչ հայցային» կամ «միակողմանի» վարույթ<sup>2</sup>:

Որպեսզի մշակվեն և կատարելագործվեն հատուկ վարույթի ընդհանուր դրույթները, ինչպես նաև ճշգրտորեն որոշվի՝ որքանով է տեղին հատուկ վարույթի շրջանակներում գործերի այս կամ այն կատեգորիայի գոյությունը, անհրաժեշտ է ճիշտ հասկանալ հատուկ վարույթի էությունը: «Քանի որ դատավարություններից յուրաքանչյուրը բնորոշվում է դատական գործընթացի որոշակի առանձնահատկություններով, համապատասխան դատավարության տեսակին՝ այս կամ այն գործի դասման հարցերի ճիշտ որոշումը ունի էական նշանակություն»: Այս տեսանկյունից անհրաժեշտ է առավելազույնս ճշգրիտ իմանալ, թե ինչ իմաստ են ներդնում «դատավարության տեսակ» հասկացության մեջ օրենսդիրը, ընթացակարգային գիտությունը և դատական պրակտիկան, ինչպիսի նշաններով է դատավարության մեկ տեսակը տարբերվում մյուսից, և ինչպիսիք են առանձնահատկությունները, որոնք բնութագրում են «քաղաքացիական դատավարության յուրաքանչյուր ինքնույույն տեսակը»:

Հետազոտության օբյեկտի էության ընկալման եղանակներից մեկը հանդիսանում է նրա համեմատությունը իրեն նման այլ օբյեկտի հետ: Համեմատությունը օգնում է հասկանալ հետազոտման օբյեկտի էությունը վերջինիս բնորոշ գծերի բացահայտմամբ, որոնք տարբերում են նրան իրեն

նման այլ օբյեկտներից: Հատուկ վարույթի ընկալումը իրեն մերձակա իրավական ինստիտուտների համեմատության միջոցով հնարավոր է քաղաքացիական դատավարությունների այլ տեսակների հետ համեմատության ուղիով: Նման համադրման ընթացքում հաստատվում են առանձնահատկությունները, որոնք բնորոշ են հատկապես հատուկ վարույթին, դարձնում են վերջինիս տարբեր քաղաքացիական վարույթների այլ տեսակներից և որոշում նրա հատուկ դերը քաղաքացիական ընթացակարգային իրավունքում: Նաև նման համեմատության ընթացքում կհաստատվեն հատուկ և քաղաքացիական դատավարությունների այլ տեսակների համար առավել բնորոշ ընդհանուր նշանները, որոնք կօգնեն լավագույնս հասկանալ հատուկ վարույթի էությունը քաղաքացիական գործերի վարույթների այլ տեսակների էության միջոցով:

Ներկայումս քաղաքացիական դատական վարույթների տեսակների քանակների վերաբերյալ առկա են տարբեր տեսանկյուններ<sup>3</sup>:

Միևնույն ժամանակ, ըստ քանակության դիտարկված ավանդական և առավել տարածված քաղաքացիական դատավարության տեսակներից հանդիսանում են՝ հայցային վարույթները, հանրային իրավահարաբերությունների գործերի վարույթները և հատուկ հայցային վարույթները: Այսպես, կարգադրային վարույթում չեն կիրառվում քաղաքացիական դատավարության բոլոր կանոնները, քանի որ չկա վերջինիս հիմնական փուլը՝ դատական քննությունը, ինքն իրեն «դատական որոշման հանձնումը, ըստ էության, չի հանդիսանում դատավարություն: Միևնույն ժամանակ բոլոր պահանջները, ըստ որոնց հանձնվում է որոշումը, պոտենցիալ հանդիսանում են հայցային»<sup>4</sup>: Երրորդական դատարանների վճիռների վիճարկման գործերի և երրորդական դատարանների վճիռների հարկադիր կատարման թերթիկների հանձնման վարույթները և այն վարույթները, որոնք կապված են դատավարական և այլ մարմինների վճիռների կատարման հետ, կարգավորում են դատական կամ երրորդ մարմինների նախկինում կայացված վճիռ-

www.lawinstitute.am

ների հետ կապված վարույթները, այսինքն՝ գործերի հետ, որոնք նախկինում արդեն քննվել են: Այդ իսկ պատճառով նշված վարույթները ըստ իրենց բնույթի առավել մոտ են նախկինում կայացված դատական վճիռների վերանայման վարույթներին. վերաքննիչ, վճռաբեկ և ըստ նոր բացահայտված հանգամանքների:

Դրա հետ կապված՝ առավել ընդունելի է ներկայանում Մ.Ս. Շաքարյանի տեսանկյունը, ըստ որի՝ քաղաքացիական դատավարությունը բաղկացած է երեք տեսակներից՝ հայցային վարույթ, վարույթ ըստ գործերի, որոնք ծագել են հանրային իրավահարաբերություններից, հատուկ վարույթներ: Ըստ ցուցված պատճառի՝ տվյալ աշխատանքում հատուկ վարույթի էության բացահայտման համար իրականացվում է վերջինիս համեմատությունը հայցային վարույթի և ըստ հանրային իրավահարաբերությունից գործերի վարույթների հետ:

«Քաղաքացիական գործերի քննման դատական կարգի տարանջատումը վարույթի տեսակների՝ կախված հետևյալ չափանիշներից՝ դատական պաշտպանության առարկա, դատական գործունեության նպատակներ, պաշտպանության եղանակ»<sup>5</sup>: Դրա հետ կապված հատուկ վարույթի գործերի համեմատությունը քաղաքացիական դատավարության այլ տեսակի գործերի հետ առաջին հերթին անհրաժեշտ է իրականացնել ելնելով ցուցված չափանիշներից: Միևնույն ժամանակ, չափանիշների բերված թվարկումը պահանջում է հատակեցում, որի վերաբերյալ խոսք կզգնա հետագայում:

Հատուկ վարույթի գործերի հիմնական առանձնահատկության գլխավոր գիծ, որը սահմանում է վերջինիս մնացյալ տարբերակիչ հատկանիշների առկայությունը և հնարավորություն է տալիս սահմանազատել այն հայցային վարույթի և հատուկ հայցային վարույթի գործերից, որոնք ծագել են քաղաքացիաիրավահարաբերություններից, հանդիսանում է հատուկ վարույթի գործերի քննության ժամանակ իրավունքի վերաբերյալ վեճի բացակայությունը:

Համապատասխան բացատրություններ դրա վերաբերյալ տալիս է, օրինակ, Ռ.Գ. Գերագույն դատարանը<sup>6</sup>: Օրինակ, քաղաքացիների կողմից որոշակի չափի աշխատավարձի ստացման փաստի հաստատման դեպքում միջին ամսական աշխատավարձի առավել շահավետ տարբերակից կենսաթոշակի հաշվարկման իրավունքի վերաբերյալ վեճի ծագումը պետք է լուծվի հայցային կարգով: Միևնույն ժամանակ, հեղինակների մեծամաս-

նության կողմից նշվում է, որ հատուկ վարույթում դատական գործունեության նպատակներ հանդիսանում են քաղաքացիական իրավահարաբերությունների մասնակիցների օրինական շահերի պաշտպանությունը որոշակի իրավաբանական փաստերի հաստատման ուղիով: Դրանում է կայանում հատուկ վարույթի գործերի հիմնական տարբերությունը հայցային վարույթների գործերից: Հայցային գործերի դիտարկման ժամանակ լուծվում է քաղաքացիական իրավունքի վերաբերյալ վեճը, հայցային վարույթի գոյության նպատակը հանդիսանում է քաղաքացիական սուբյեկտիվ իրավունքի պաշտպանությունը, իսկ հատուկ վարույթի գործերում իրականացվում է օրինական շահերի անուղղակի պաշտպանություն, որը հանդիսանում է քաղաքացիական դատավարության նշված տեսակի գոյության նպատակը: Այսինքն՝ ըստ հատուկ վարույթի՝ գործերի դատական պաշտպանության առարկան օրինական շահերն են, դատավարական գործունեության նպատակը նշված շահի պաշտպանությունն է, պաշտպանության եղանակը՝ որոշակի պայմանների ստեղծում նշված շահի բավարարման համար:

Ինչ վերաբերվում է հատուկ վարույթի գործերում ցանկացած այլ վեճի առկայության հնարավորությանը, ապա անհրաժեշտ է նշել, որ Ի. Ռ-ապոպորտը իր ժամանակին արտահայտել է միտք փաստերի անվիճելի բնույթի վերաբերյալ, որոնք հաստատվում են ըստ հատուկ վարույթի գործերի դատարանի կողմից: Դրա հետ կապված նա պնդում էր, որ, եթե հատուկ վարույթի կարգով գործի դիտարկման ժամանակ որևէ մեկը «հայտարարում է դատարանին այս կամ այն ձևով հաստատված փաստի հավաստիության վիճարկման մասին, ապա ազգային դատարանը, չպահանջելով նրանից ապացույցների ներկայացում, դադարեցնում է վարույթը հատուկ կարգով..., որը կապված է հատուկ վարույթի էության հետ որպես անվիճելի վարույթ»:

Ի. Ռ-ապոպորտի տեսանկյունը՝ հատուկ վարույթում փաստի վերաբերյալ վեճի չդիտարկումը, աջակցվել է նաև Պ.Ֆ. Ելիսեյինի և Ա.Ա. Մալնիկովի կողմից: Իրենց դիրքորոշման հիմնավորվածության վերաբերյալ նրանք բերում են փաստարկներ, որ դիմողի և շահագրգիռ անձի միջև փաստի վերաբերյալ վեճի ծագման դեպքում ըստ հատուկ վարույթի գործերի՝ անխուսափելի պետք է ծագի վեճ իրավունքի վերաբերյալ: Նրանց կարծիքով, «մաքուր ձևով» փաստի վերաբերյալ վեճը առանց իրա-

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

վունքի վերաբերյալ վեճի հարաբերակցության անհնարին է, քանի որ դժվար է պատկերացնել, որ դիմողը և շահագրգիռ կողմը կվիճաբանեն փաստի վերաբերյալ՝ չշոշափելով դա պայմանավորող իրավունքները:

Բերված տեսանկյունի հետ կարելի է չհամաձայնել, քանի որ ոչ բոլոր դեպքերում քաղաքացիական գործի վարույթի բոլոր մասնակիցերը, որոնք ներգրավված են դրանում մասնակցության այլ շահագրգիռ անձի որակով, անպայման կվիճարկեն դիմողի իրավունքները, որոնք բխում են դիմողի հաստատում պահանջող փաստից: Առաջինը, նման իրավիճակ հնարավոր է, երբ ըստ գործի վարույթի, որը քննվում է դատարանի կողմից հատուկ վարույթի կարգով, շահագրգիռ անձ հանդես է գալիս կառավարության մարմինը, որի նկատմամբ դիմողի մոտ որոշակի փաստի հաստատման դեպքում, ծագում է իրավունք, օրինակ՝ նպաստի ստացման իրավունք՝ խնամակալի մահվան հետ կապված:

Հատուկ վարույթի կարգով դատարանը հաստատում է քաղաքացիների կամ կազմակերպությունների անձնական կամ գույքային իրավունքների ծագման, փոփոխման կամ դադարեցման հիմք հանդիսացող իրավաբանական փաստերի առկայությունը կամ բացակայությունը, քաղաքացու որոշակի իրավական վիճակը կամ նրան պատկանող իրավունքը: Հատուկ վարույթի կարգով կայացված վճիռը, որով հաստատվում է իրավաբանական փաստը կամ անձի որոշակի իրավական վիճակը կամ էլ նրա որևէ իրավունք, դիմողի համար միայն անհրաժեշտ պայմաններ է ստեղծում ոչ դատական մարմիններում իր անձնական կամ գույքային իրավունքներն իրացնելու համար: Այդ վարույթի կարգով կայացված վճիռը, օրինակ, կարող է հաստատված փաստից բխող իրավունքները ձևակերպելու (կենսաթոշակ նշանակելու, ժառանգության իրավունքի վկայագիր տալու, անգործունակի նկատմամբ խնամակալություն սահմանելու և այլն) համար պետական մարմիններին դիմելու հիմք ծառայել: Հատուկ վարույթի գործերով թեկուզև նյութական իրավունքի մասին վեճ չի քննվում, բայց քանի դեռ դատարանն այդ վարույթի կարգով չի հաստատել քաղաքացիների և կազմակերպությունների անձնական կամ գույքային իրավունքների ծագման, փոփոխման կամ դադարեցման հիմք հանդիսացող (իրավաբանական նշանակություն ունեցող) փաստերը, քաղաքացու որոշակի իրավական վիճակը կամ նրան պատկանող իրա-

վունքը, նրանք (քաղաքացիները և կազմակերպությունները) չեն կարող իրականացնել այդ հանգամանքներից բխող, դրանց հետ անմիջականորեն կապված իրենց սուբյեկտիվ իրավունքը (իրավունքները): Եթե մինչև դրանց հաստատումը նյութական հարաբերությունները, քաղաքացու կամ կազմակերպության նյութական իրավունքները սուկ ենթադրվում են, ապա նշված փաստերի, քաղաքացու որոշակի իրավական վիճակի կամ նրան պատկանող իրավունքի հաստատումից հետո դատարան դիմած կոնկրետ անձի և այլ (անորոշ թվով) անձանց միջև ծագում, փոփոխվում կամ դադարում են սուբյեկտիվ իրավունքներ ու պարտականություններ: Օրինակ, եթե դատարանը հատուկ վարույթի կարգով դեռևս քաղաքացուն անգործունակ կամ սահմանափակ գործունակ չի ճանաչել, ապա շահագրգռված անձինք չեն կարող իրականացնել քաղաքացու այդ իրավական վիճակից բխող իրենց իրավունքներն ու պարտականությունները, ասենք՝ խնամակալություն կամ հոգաբարձություն սահմանել, խնամակալի անունից կամ սահմանափակ գործունակի կողմից հոգաբարձուի համաձայնությամբ գործարքներ կնքել և այլն:

Երկրորդ. լիարժեք հնարավոր է այնպիսի իրավիճակ, երբ ըստ հատուկ վարույթի գործի՝ այլ շահագրգիռ անձ, դիսպոզիվության սկզբունքի ուժով, ով պարտավոր չէ իրավունքի վերաբերյալ վիճարկել, կվիճարկի համապատասխան փաստի առկայությունը՝ ենթադրելով, որ այն գոյություն չունի: Այդ ժամանակ ըստ գործի վարույթի ցուցված մասնակիցը հետագայում ինքը կհամոզվի հակառակում, այսինքն՝ համապատասխան փաստի առկայության մեջ, և չի ցանկանա վիճարկել դիմողի՝ տվյալ փաստից «բխող» իրավունքը: Եթե ճիշտ ընդունվեն Ի. Ռ-ապոպորտի, Պ.Ֆ. Ելիսեյինի և Ա.Ա. Մելնիկովի տեսակետները, ապա անհրաժեշտ է ընդունել, որ իմաստ չունի հատուկ վարույթի գործերի առավել տարածված կատեգորիայի գոյությունը փաստերի հաստատման վերաբերյալ, որոնք ունեն իրավական նշանակություն:

Համանման կարծիք է արտահայտվել նաև Ա.Ն. Աբրամովի կողմից: Դրա էությունը կայանում է նրանում, որ հատուկ վարույթի գործերի քննման ժամանակ «դատարանի խնդիրը կայանում է անվիճարկելի, միակողմանի կարգով հաստատված փաստերի հիման վրա և գույքային իրավունքի նորմաներին համապատասխան հաստատելը դիմողի սուբյեկտիվ քաղաքացիական իրավունքները: Այս դեպքում դատարանի գործունեությունը հայտնի

իմաստով համանման է նոտարային մարմինների գործունեության հետ, քանի որ երկու դեպքերում էլ առկա է, ըստ շահագրգիռ անձի դիմումի, անվիճարկելի կարգով այս կամ այն սուբյեկտիվ իրավունքների հաստատում որևէ կողմից վեճի բացակայության դեպքում: Միևնույն ժամանակ, տարբերությունը նոտարական մարմնի և դատարանի գործունեության մեջ կայանում է նրանում, որ նոտարական մարմինը հաստատում է դիմողի իրավունքները ակնառու փաստերի հիման վրա առանց այդ փաստերը հաստատող ապացույցի ստուգման և հետազոտության»<sup>9</sup>:

Գործող ԲԴՕ-ն նախատեսել է դատարանի կողմից հատուկ վարույթի կարգով քննվող գործերի հետևյալ վարույթները.

- 1) իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատումը,
- 2) երեխային որդեգրելը (դատերագրելը),
- 3) քաղաքացուն անհայտ բացակայող ճանաչելը և քաղաքացուն մահացած հայտարարելը,
- 4) քաղաքացուն անգործունակ ճանաչելը, քաղաքացու գործունակությունը սահմանափակելը,
- 5) գույքը տիրագործել ճանաչելը,
- 6) քաղաքացիական կացության ակտերի գրառումների անճշտությունները պարզելը,
- 7) ըստ ներկայացնողի կամ օրդերային կորցրած արժեթղթերով հավաստված իրավունքները վերականգնելը,
- 8) անչափահասին լրիվ գործունակ ճանաչելը (եմանսիպացիա),
- 9) քաղաքացուն հոգեբուժական ստացիոնարում հարկադրաբար տեղավորելը,
- 10) հարկադիր կատարողի դիմումով կողմերի հաշտության համաձայնության հիման վրա դատարանի օրինական ուժի մեջ մտած վճիռը վերանայելը,

11) վճարման կարգադրություն արձակելը<sup>10</sup>:

Ինչպես երևում է վերը թվարկվածներից, հատուկ վարույթում դատական քննության առարկա են հանդիսանում և պաշտպանության ենթակա են քաղաքացիների ու կազմակերպությունների<sup>10</sup> օրենքով պահպանվող տարբեր շահեր, ուստի այդ վարույթի գործերը տարբեր են նաև իրենց բնույթով: Այսպես, դիմողը շատ դեպքերում խնդրում է հաստատել իր անձնական կամ գույքային իրավունքների ծագման, փոփոխման կամ դադարեցման հիմք հանդիսացող իրավաբանական փաստերը: Երբեմն էլ նա դատարան է դիմում ԲԿԱԳ մարմ-

նում կատարված գրառումների անճշտությունները պարզելու համար, կամ դիմողը հասնում է կորցրած արժեթղթի նկատմամբ իր իրավունքը վերականգնելուն և այլն: Սակայն, այդ բոլոր տարբերություններով հանդերձ, ինչպես արդեն նշել ենք, հատուկ վարույթի բոլոր գործերի համար ընդհանուրն այն է, որ այդ գործերով դատական մարմինների իրավասությանը ենթակա իրավունքի մասին վեճեր չեն քննվում:

Պաշտպանության ենթակա օբյեկտի բնույթով և իրավունքի մասին վեճի բացակայությամբ էլ պայմանավորված են հատուկ վարույթի գործերի հարուցման, քննության և լուծման դատավարական առանձնահատկություններն ու դրանցով կայացված վճիռների կատարման կարգը:

Հատուկ վարույթը բնորոշվում է հետևյալ հատկանիշներով.

ա) այստեղ իրավունքի մասին վեճ չկա, քանի որ դիմողն այլ անձանց որևէ նյութաիրավական պահանջ չի ներկայացնում: Ճիշտ է, հատուկ վարույթի վերջնական նպատակը նույնպես նյութական իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն է, բայց այդ նպատակն այս վարույթում իրականացվում է ոչ թե խախտված կամ վիճարկվող իրավունքը վերականգնելու կամ որոշակի պաշտոնատար անձանց ոչ ճիշտ գործողությունները վերացնելու, ինչպես դա կատարվում է հայցային և հատուկ հայցային վարույթներում, այլ իրավաբանական փաստերի առկայությունը կամ բացակայությունը, քաղաքացիների որոշակի իրավական վիճակը, քաղաքացիների կամ կազմակերպությունների այս կամ այն իրավունքը հաստատելու միջոցով, որի հիման վրա դիմողը հնարավորություն է ստանում այլ՝ ոչ դատական, մարմիններում իրացնել իր իրավունքներն ու օրինական շահերը,

բ) հատուկ վարույթին բնորոշ է ոչ թե վեճի բացակայությունն ընդհանրապես, այլ դատական մարմինների քննությանն օրենքով հանձնված իրավունքի մասին վեճի բացակայությունը: Օրենսդիրն այդպես է սահմանել, որովհետև իրավունքի մասին վեճերը դատարանը քննում է հայցային վարույթի կարգով: Հենց դրա համար էլ ԲԴՕ 103-րդ հոդվածի 4-րդ ենթակետում սահմանված է, որ դատարանը դիմումը թողնում է առանց քննության, եթե իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման կամ ըստ ներկայացնողի և օրդերային կորցրած արժեթղթերով հավաստված իրավունքները վերականգնելու մասին դիմումը քննելիս վեճ է ծագել իրավունքի մասին: Դատա-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

րանն այդպես է վարվում, օրինակ, ժառանգություն ստանալու նպատակով անձի՝ ուրիշի խնամքի տակ գտնվելու կամ վնասի հատուցում ստանալու նպատակով դժբախտ պատահարի փաստի հաստատման ժամանակ, քանի որ ժառանգության շուրջը ծագած վեճի կամ վնասի հատուցման պահանջի քննության հետ միաժամանակ հայցային վարույթում կարող են հաստատվել նաև այդ փաստերը: Սակայն, գործը հատուկ վարույթի կարգով քննության առնելիս երբեմն այնպիսի վեճ է ծագում, որի լուծումն օրենսդիրն ընդհանրապես չի հանձնել դատական մարմինների քննությանը, ուրեմն և՛ նրանց լուծմանը: Նման դեպքերում դատարանը չի կարող դիմումը թողնել առանց քննության և ստիպված է շարունակել հատուկ վարույթի կարգով գործի քննությունը, քանի որ, եթե նա չհաստատի, ասենք, քաղաքացու կամ կազմակերպության իրավունքների հիմք հանդիսացող փաստը, քաղաքացու որոշակի իրավական վիճակը, ուրիշ որևէ մարմին չի կարող անել այդ, և նրանք կգրկվեն իրենց իրավունքները հետագայում իրացնելու հնարավորությունից: Այսպես, եթե դատարանը քաղաքացուն չճանաչի անհայտ բացակայող կամ նրան մահացած չհայտարարի և դիմումը թողնի առանց քննության, ապա քանի որ այլ մարմիններ իրավասու չեն անելու այդ, շահագրգռված անձինք (քաղաքացու ամուսինը, այլ ժառանգներ և այլն), կգրկվեն անհայտ բացակայողի հետ ամուսնությունը լուծելու, մահացած ճանաչված քաղաքացու գույքը ժառանգելու և այլ հնարավորություններից: Կամ, եթե կենսաթոշակ ստանալու նպատակով անձի՝ ուրիշի խնամքի տակ գտնվելու փաստի հաստատման ժամանակ վեճի դեպքում դատարանը դիմումը թողնի առանց քննության, ապա շահագրգռված անձը չի կարող իրականացնել կենսաթոշակ ստանալու իր իրավունքը, քանի որ սոցիալական ապահովության մարմինը կամ որևէ այլ մարմին իրավասու չեն հաստատել այդ փաստը: Իսկ առանց այդ փաստը հաստատող վճռի հնարավոր չէ նշանակել կենսաթոշակ:

Ըննարկվող հարցի հետ կապված պետք է նշել, որ ՔԴՕ-ն հատուկ վարույթի գործերի քննությանը վերաբերող ընդհանուր դրույթներ գրեթե չի սահմանել: Նշվել է միայն, որ այդ գործերը քննվում են դատավարության ընդհանուր կանոնների համաձայն, այն բացառություններով ու լրացումներով, որոնք սահմանված են ՔԴՕ 28-36-րդ գլուխներով (հոդվ. 164): Մյուս կողմից, ՔԴՕ 103-րդ հոդվածը, որը կարգավորում է հայցային և ոչ թե հա-

տուկ վարույթի առանձնահատկությունները, սահմանել է, որ դատարանը դիմումը թողնում է առանց քննության, եթե իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման կամ ըստ ներկայացնողի և օրդերային կորցրած արժեթղթերով հավաստված իրավունքները վերականգնելու մասին դիմումը քննելիս վեճ է ծագել իրավունքի մասին: ՔԴՕ 104-րդ հոդվածի 4-րդ կետում արդեն սահմանվել է, որ հայցը կամ դիմումն առանց քննության թողնելու համար հիմք ծառայած հանգամանքները վերանալուց հետո հայցվորը կամ դիմողը իրավունք ունի կրկին դիմել դատարան: Անհասկանալի է, թե ինչպես կարող է վերանալ հատուկ վարույթի մասնակիցների միջև ծագած իրավունքի մասին վեճը, եթե նույն կամ մեկ այլ դատարան հայցային վարույթի կարգով չի լուծում այն: Երկրորդ. պարզ չէ, թե դիմողը կրկին դատարան է դիմում նորից հատուկ վարույթի, թե՞ արդեն հայցային վարույթի կարգով: Եվ, ամենակարևորը, ի՞նչ նպատակով է օրենսդիրն առանձնացրել միայն իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման և արժեթղթերի նկատմամբ իրավունքները վերականգնելու հատուկ վարույթները: Չէ որ իրավունքի մասին վեճեր կարող են ծագել նաև հատուկ վարույթի բոլոր կատեգորիայի գործերով: Օրինակ՝ անչափահասին հատուկ վարույթի կարգով լրիվ գործունակ ճանաչելու դեպքում նրա ծնողները (որդեգրողները, հոգաբարձուն), խնամակալության և հոգաբարձության մարմինը կարող են քաղաքացիաիրավական վեճ հարուցել, կամ գույքը տիրագուրկ ճանաչելու գործերով այլ քաղաքացիներ և կազմակերպություններ կարող են նույնպիսի վեճ հարուցել այդ գույքն իրենց պատկանելու մասին և այլն:

Հատուկ վարույթում իրավունքի մասին վեճեր թույլատրվում են միայն այն փաստերի դատական հաստատման դեպքում, որոնք նա ստիպված է հաստատել այդ վարույթում, որովհետև այդ փաստերը միշտ չէ, որ ակնհայտ են դատարանի համար: Թե չէ փաստերի գոյության մասին դատարանում միշտ էլ կարող են հակասական կարծիքներ արտահայտվել, և դատարանը դրա առկայության կամ բացակայության մեջ համոզվելու համար պետք է ապացույցների ստուգման և համադրման միջոցով կարողանա պարզել շահագրգռված անձանց դատողություններում արտահայտված հակասությունները: Օրինակ՝ քաղաքացուն անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչելու գործերով նա պետք է հրավիրվի դատարան և իրա-

վունք ունի վիճարկել հոգեկան խանգարման, ոգելից խմիչքներ կամ թմրեցուցիչ նյութեր չարաշահելու կամ մոլեխաղերով հրապուրվելու հանգամանքները: Այնպես որ դատարանը հատուկ վարույթում պետք է լուծի փաստի մասին ծագած վեճը, բայց հենց որ այն վերաճեց իրավունքի մասին դատարանին ենթակա, նրա լուծմանը հայցային վարույթի կարգով հանձնված վեճի, նյութաիրավական որևէ պահանջի, պետք է դիմումը թողնի առանց քննության և գործին մասնակցող անձանց բացատրի վերը նշված նրանց իրավունքը,

զ) հատուկ վարույթում դատարանի լուծմանը ենթակա իրավունքի մասին վեճ չկա, ուստի այստեղ չկան նաև հակադիր շահերով օժտված կողմեր՝ հայցվոր ու պատասխանող, չկա երրորդ անձ: Այստեղ կան միայն դիմողներ (ՔԴ-Օ 27-րդ հոդվ.) և շահագրգռված այլ անձինք: Իրավունքի մասին վեճի և կողմերի բացակայությամբ է պայմանավորված նաև այն, որ հատուկ վարույթում չի կարող հակընդդեմ հայց հարուցվել, ոչ պատշաճ կողմի փոխարինում կատարվել, հաշտության համաձայնություն կնքվել, իսկ տնօրինչականության և մրցակցության սկզբունքներն այստեղ գործառում են սահմանափակ ծավալով՝ միայն փաստի առկայության կամ բացակայության շուրջ,

դ) հատուկ վարույթում նաև հայց չկա, քանի որ չկան իրենք՝ կողմերը: Այստեղ դիմողը որևէ մեկի դեմ նյութաիրավական պահանջ չի ներկայացնում, ուստի վարույթը հարուցվում է ոչ թե հայցադիմումով, այլ դիմումով, որի բովանդակության առանձնահատկությունները յուրաքանչյուր կատեգորիայի գործով որոշված է ՔԴ-Օ 28-36-րդ գլուխներում: Այստեղ կիրառելի չեն հայցային վարույթին յուրահատուկ այնպիսի ինստիտուտներ, ինչպիսիք են հայցերի միացումը և անջատումը, հայցային վաղեմությունը, հայցն ընդունելը, հայցից հրաժարվելը, հայցը մերժելը, միջնորդ դատարանին դիմելը, վճռի կատարման շրջադարձումը և այլն,

ե) հատուկ վարույթի գործերով օրենքը հիմնականում սահմանում է այն անձանց շրջանակը, ում դիմումներով կարող է գործ հարուցվել դատարանում (ՔԴ-Օ 165, 168, 174, 194, 202-րդ հոդվածներ),

զ) դատարանը հատուկ վարույթում քաղաքացիաիրավական վեճեր չի քննում, ուստի նա իրավաբանական փաստերի հաստատման հիման վրա, որպես կանոն, չի կիրառում նյութական իրավունքի նորմերը, հետևություններ չի անում դիմողի խնդրանքով հաստատված փաստերից բխող իրա-

վունքների ու պարտականությունների մասին: Այդ փաստերի հիման վրա իրավունքների հարցը լուծում են այլ՝ սոցիալական ապահովության, զինվորական, նոտարական, ՔԿԱԳ, խնամակալության ու հոգաբարձության և այլ մարմինները: Ըստ որում, հատուկ վարույթի կարգով կայացված օրինական ուժի մեջ մտած վճիռները պարտադիր են այդ փաստերից բխող սուբյեկտիվ իրավունքների հարցը լուծող կամ այդ փաստերը գրանցող մարմինների համար: Օրինակ, եթե դատարանը հաստատել է անձի՝ հանգուցյալի խնամքի տակ գտնվելու փաստը, ապա նոտարական գրասենյակը, օրենքով սահմանված մյուս հանգամանքների առկայության դեպքում, պարտավոր է այդ անձին տալ ժառանգության իրավունքի վկայագիր: Սակայն, վճռի օրինական ուժի բացառիկության և կատարելիության հատկանիշներն այստեղ ավելի նեղ են, քան հայցային վարույթում, որովհետև գործին մասնակից չդարձած յուրաքանչյուր անձ իրավունք ունի դատարանի կողմից հաստատված դիմողի իրավունքների մասին փաստից բխող նյութական վեճ հարուցել հայցային վարույթի կարգով:

Այնուամենայնիվ, հատուկ վարույթի որոշ գործերով դատարանը ոչ միայն հաստատում է որոշակի փաստը, այլև համապատասխան իրավական հետևություններ է անում իր կողմից հաստատված փաստերից: Օրինակ՝ գույքը տիրազուրկ է ճանաչում և այն ի սեփականություն է հանձնում տիրապետող անձին (ՔԴ-Օ 188-րդ հոդվ.), կամ հաստատում է ըստ ներկայացնողի կամ օրդերային փաստաթուղթը կորցնելու փաստը, այն ճանաչում է անվավեր և համապատասխան կազմակերպությանը պարտավորեցնում է դրա փոխարեն տալ նոր փաստաթուղթ (ՔԴ-Օ 199-րդ հոդվ.) և այլն: Սա պայմանավորված է նրանով, որ նշված դեպքերում իրավունքի պաշտպանությունը հայցային վարույթի կարգով տեղի ունենալ չի կարող, որովհետև հատուկ վարույթում բացակայում է իրավունքի մասին վեճը, իսկ շահագրգռված անձն էլ որևէ մեկի դեմ որևէ պահանջ չի ներկայացնում:

Այսպիսով, քաղաքացիական դատավարության հատուկ վարույթը առաջին գործերի քննության այնպիսի դատավարական, կարևորը, իրավունքի մասին դատարանի քննությանը ենթակա վեճի բացակայությամբ. ուղղված է ֆիզիկական և իրավաբանական օրենքով պահպանվող և իրավական բնույթ ունեցող օրինական պաշտպանությանը:



- <sup>1</sup> Տե՛ս Պետրոսյան Ռ.Գ. Քաղաքացիական դատավարություն. դասագիրք բուհերի համար: Երևան 2012, էջ 441:
- <sup>2</sup> Տե՛ս Чечот Д. М. Неисковые производства. М., 1973.
- <sup>3</sup> Տե՛ս Вукот М.А. Гражданский процесс России: учебник ( Под редакцией д.ю.н., проф. Вукот М.А. М.: Юристъ, 2004. С.32-34 (автор главы - Исаенкова О.В.); Треушников М.К. Гражданский процесс. Учебник / Под редакцией Треушникова М.К. М: Городец, 2003. С.31-32 (автор главы - Треушников М.К.); Осокина Г.Л. Гражданский процесс. Общая часть / Осокина Г.Л. М.: Юристъ, 2003. С.83-89; Власов А.А. Гражданское процессуальное право: Учебник / Власов А.А. М.: Велби, 2004. С.29-30; Шакарян М.С. Гражданское процессуальное право: Учебник/ Под редакцией Шакарян М.С. М.: Проспект, 2003. С.23-24 (автор главы- Шакарян М.С.).
- <sup>4</sup> Տե՛ս Шакарян М.С. Там же. С.24 (автор главы - Шакарян М.С.).
- <sup>5</sup> Տե՛ս Шакарян М.С. Նշվ. աշխ. էջ 23-24:
- <sup>6</sup> Տե՛ս Обзор судебной практики Верховного Суда РФ за первый квартал 2005 года// Бюллетень Верховного Суд РФ 2005, N10, С. 22.
- <sup>7</sup> Տե՛ս Рапопорт И. Судебное установление фактов // Социалистическая законность. 1946. N1-2. С.37, 42.
- <sup>8</sup> Տե՛ս Елисейкин П.Ф. Судебное установление фактов, имеющих юридическое значение / Елисейкин П.Ф. М.: Юридическая литература 1973, С.24-28; Мельников А.А. Особое производство в советском гражданском процессе/ Мельников А.А. М., 1964. С.12-16.
- <sup>9</sup> Տե՛ս Абрамов С.Н. Судебное установление юридических фактов / Абрамов С.Н. М.: Юридическое издательство Министерства юстиции СССР, 1 948. С.5.
- <sup>10</sup> Տե՛ս Պետրոսյան Ռ.Գ. Նշվ. աշխ. էջ 442:

## РЕЗЮМЕ

*Особенности особого производства*

В статье рассматриваются проблемы применения основных принципов права, на которых базируется гражданско-процессуальное законодательство, в гражданском производстве. Автором рассматривается вопрос более глубокого изучения состояния применения принципов гражданско-процессуального права именно в сфере особого производства.

## SUMMARY

*The Peculiarities of Special Production*

The article deals with the problem of using the principles of law on which the civil procedure legislation in civil production is based. The author raises the problems of deeper investigation of using principles in civil-procedure law mainly in the sphere of special production.

**ԱՐՏԱՇԵՍ ԲԱՍԵՆՑՅԱՆ**

ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ,  
ձգաբանական փորձաքննությունների բաժնի պետ

**ՎԼԱԴԻՄԻՐ ԱՂԱՆԻԿՅԱՆ**

Դատական փորձագետ

**ՎԱՍՊՈՒՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Դատական փորձագետ

**ԱՇՈՏ ԳԱՍՊԱՐՅԱՆ**

Դատական փորձագետ

**ՀՐԱՁԵՆԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԳՈՐԾԵՐՈՎ  
ԴԵՊՔԻ ՎԱՅՐԻ ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ, ԴՐԱ  
ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՉՆՆՈՒԹՅԱՆ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Մաս 1-ին

Դեպքի տեղ ասելով՝ ամենից առաջ պետք է հասկանալ այն տեղը կամ տեղանքի հատվածը, որտեղ անսխեղականորեն տեղի է ունեցել դեպքը: Երբեմն դեպքի բնույթը ինչպես դեպքի տեղի պահպանման, այնպես էլ տեղագնություն ժամանակ, իսկ հաճախ նաև ավարտից հետո, դեռևս պարզ չէ: Դա բացատրվում է նրանով, որ հանցավոր գործողությունների տեղի պարագան, ինչպես նաև այնտեղ եղած հետքերը և այլ նյութական հատկանիշները երբեմն չեն տարբերվում քրեորեն ոչ պատժելի գործողություններից առաջացած փոփոխություններից: Այդպիսիք են, օրինակ, սպանության և ինքնասպանության, սպանության և դժբախտ պատահարի հատկանիշները:

Սպանությունների վերաբերյալ գործերի քննության հաջողությունը կախված է դեպքի վայրի ճիշտ պահպանումից և քննչական գործողությունների հմուտ, ձեռնհաս անցկացնելուց և առաջին հերթին դեպքի վայրի մանրակրկիտ տեղագնությունից: Դեպքի վայրի պահպանության նպատակն է արգելել կողմնակի անձանց մուտքը դեպքի վայր և ապահովել դեպքի վայրի պարագայի՝ հետքերի և առարկաների անձեռնմխելիությունը:

Եթե սառը զենքով կատարված սպանությունների գործերով սպանություն կատարած հանցագործը կարող է իր հետ տանել հանցագործության գործիքը, թաքցնել այն՝ նպատակ ունենալով կոծկելու հանցագործության հետքերը, ապա հրազենով հանցագործություն կատարած հանցագործը, անկախ իր կամքից, դեպքի վայրում թողնում է ոչ միայն հրազենի գործածության հետքերը, այլև

այնպիսի իրեղեն ապացույցներ, ինչպիսիք են՝ զնդակներ, պարկուճներ, կոտորակներ, միջնորմեր և այլն:

Դեպքի վայրի ճիշտ պահպանման արդյունքում և դրա հետագա զննությամբ այդ իրեղեն ապացույցները կարող են պահպանվել, հայտնաբերվել, ֆիքսվել և առգրավվել և օգտագործվել հանցագործների բացահայտման նպատակով: Քրեական գործերում, այդ առարկաները մեծամասամբ ունեն մեծ ապացուցողական նշանակություն, իսկ ժամանակ առ ժամանակ հանդիսանում են հանցագործներին բացահայտելու որոշիչ:

Պահպանելով դեպքի վայրը՝ անհրաժեշտ է հիշել, որ հանցագործությունը պարտակող անձինք մի շարք դեպքերում փոխում են հանցագործության վայրի պարագաների վիճակը՝ նպատակ ունենալով դժվարացնել կատարված իրական պատկերի վերականգնումը: Քննչական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դեպքի վայրի պահպանման և զննության ժամանակ առավել բարդություն են ներկայացնում այն դեպքերը, երբ որպես հանցագործության գործիք կիրառվել է հրազեն: Հրազենի կիրառման հետ կապված գործերով դեպքի վայրի պահպանման և դրա հետագա տեղագնության ժամանակ պահանջվում է ոչ միայն քրեագիտական մշակում անցած դեպքի վայրի զննության ընդհանուր դրույթների կիրառում, նաև այլ գիտությունների բնագավառների հատուկ գիտելիքների կիրառում: Շատ դեպքերում, ինչպես ցույց է տալիս պրակտիկան, դեպքի վայրի զննության ժամանակ հայտնաբերված իրեղեն ապացույցները և առանձին հետքերը անհրաժեշտ են

### ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

քննիչին, հետաքննիչին՝ փորձագետի առջև ճիշտ հարցադրումներ անելու համար: Բացի դրանից, հիմնվելով դեպքի վայրի զննության արդյունքների վրա և չսպասելով փորձագետի եզրակացությանը, նա կարող է օպերատիվ կարգով լուծել մի շարք հարցեր, որոնք նշանակություն ունեն կատարվածը պարզելու համար. օրինակ՝ ինչ տեսակի, իսկ որոշ դեպքերում նաև ինչ տիպի զենքից է կատարվել կրակոցը, որտեղից է կատարվել կրակոցը և մի շարք այլ հարցեր, որոնց լուծումը կօգնի քննիչին բացահայտել և մերկացնել հանցագործին: Բազմաթիվ քրեագետներ, որոնք աշխատել են քննչական զննության գիտական տակտիկայի հարցերի վրա, բացառել են տարբեր օբյեկտների զննության համար միասնական գիտական տակտիկայի ստեղծումը և նշել են, որ այդ օբյեկտների էությունը պահանջում է մոտեցման յուրահատուկ գործընթացներ՝ հաշվի առնելով դրանց բոլորի առանձնահատկությունները:

Համաձայն ՀՀ Քրեական դատավարական օրենսգրքի 56-րդ հոդվածի՝ հետաքննության մարմիններն են՝...2) գորամասերի, գորամիավորումների հրամանատարները և զինվորական հիմնարկների պետերը՝ զինվորական հանցագործությունների վերաբերյալ գործերով, որոնք կատարվել են գորամասի տարածքում կամ վերաբերում են ժանկետային ծառայության զինծառայողներին:...»

Ելնելով վերը շարադրվածից՝ հետաքննություն իրականացնող մարմինների՝ քննիչների համար առաջարկվող ձեռնարկը իր առջև խնդիր է դնում շատ հակիրճ ցույց տալ՝

1. Ինչպիսի հետքեր և իրեղեն ապացույցներ կարող են հայտնաբերվել հրազենի կիրառմամբ սպանությունների և մարմնական վնասվածքներ հասցնելու գործերով:

2. Ինչպիսի հարցեր կարող են առաջադրվել դեպքի վայրի զննության ժամանակ հայտնաբերված հետքերի և իրեղեն ապացույցների հիման վրա:

Տվյալ կատեգորիայի գործերով դեպքի վայրի զննությանը զուգահեռ պետք է կատարվի դիակի արտաքին զննություն, որը հանդիսանում է դեպքի վայրի զննության ամբողջության մի մասը: Քանի որ դիակի արտաքին զննությունը ունի որոշակի առանձնահատկություններ և կատարվում է դատաբժշկական փորձագետի /կամ բժշկի/ կողմից, ուստի այդ հարցը դիտվում է հատուկ մեթոդական ձեռնարկում:

#### **Դեպքի վայրի զննության նշանակությունը և խնդիրները**

Հրազենի կիրառման հետ կապված գործերով

դեպքի վայրի տեղագնությունը, ինչպես արդեն նշվել է, հանդիսանում է քննչական գործողություն, որն արտահայտվում է դեպքի վայրի պարագայի և դեպքի նյութական հետքերի անմիջական ուսումնասիրման մեջ՝ գործի համար նշանակություն ունեցող փաստական տվյալներ հայտնաբերելու և ամրապնդելու նպատակով:

Դեպքի տեղի զննության խնդիրները այն դեպքերում, երբ որպես հանցագործության գործիք կիրառվել է հրազեն, ինչպես նաև ցանկացած զննության դեպքում հանդիսանում են.

- պահպանել դեպքի վայրը,
- ուսումնասիրել և ֆիքսել դեպքի պարագան,
- հայտնաբերել, ֆիքսել և առգրավել հանցագործության հետքերը և այլ իրեղեն ապացույցները,
- բացահայտել և ֆիքսել գործի համար նշանակություն ունեցող հանգամանքները,
- վարկածներ մշակելու և ստուգելու համար ստանալ ինֆորմացիա գործի հանգամանքների վերաբերյալ,
- պարզել հանցագործի անձը և հանցագործության շարժառիթները,
- անհետաձգելի օպերատիվ-հետախուզական միջոցառումներ ձեռնարկելու նպատակով տվյալներ ստանալ,
- ի հայտ բերել ապացույցներ ստանալու այլ աղբյուրներ,
- ուսումնասիրել հանցագործի, տուժողի անձը,
- պարզել՝ հանցագործության ինչպիսի հետքեր կարող են մնացած լինել մեղավոր անձի մարմնի կամ հագուստի, նրա կողմից օգտագործված գործիքների և փոխադրամիջոցների վրա,
- բացահայտել այն պատճառներն ու պայմանները, որոնք նպաստել են հանցագործության կատարմանը:

Տեղագնության ընթացքում պարզաբանման ենթակա հարցերի շրջանակը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում յուրատեսակ է, սակայն կարելի է նշել մի շարք հարցեր, որոնք բնորոշ են ցանկացած տեղագնության համար.

• Տեղի ունեցած դեպքը հանցանշաններ պարունակու՞մ է, թե՞ ոչ: Նախանշելով հնարավոր վարկածները՝ քննիչը մանրակրկիտ կերպով հավաքում է փաստեր, վերլուծում դրանց փոխադարձ կապը և բազմակողմանի գնահատման հիման վրա հետևություն է անում հացագործության առկայության կամ բացակայության մասին:

• Դեպքը տեղի է ունեցել այն վայրու՞մ, որտեղ կատարվում է զննությունը, թե՞ կատարվել է մեկ այլ վայրում:

• Ի՞նչ ճանապարհով, ի՞նչ եղանակով և ինչ-

պիսի միջոցների գործադրմամբ են հանցագործները մուտք գործել դեպքի վայրը և հեռացել այնտեղից:

• Զանի<sup>օ</sup> հոգի են եղել հանցագործները և ի<sup>օ</sup>նչ հատկանիշներով են բնութագրվում:

• Ինչպիսի<sup>օ</sup> նպատակներ են հետապնդել հանցագործները, որոնք են նրանց գործողությունների շարժառիթները:

• Որքա<sup>ն</sup> ժամանակ են հանցագործները գտնվել դեպքի վայրում:

• Ե<sup>օ</sup>րը է տեղի ունեցել դեպքը:

Ինչպիսի<sup>օ</sup> հետքեր և առարկաներ է թողել հանցագործը:

• Դեպքի վայրից ինչպիսի<sup>օ</sup> հետքեր կարող են մնացած լինել հանցագործի մարմնի, հագուստի, կոշիկների, օգտագործված գործիքների, հափշտակված արժեքների և այլ առարկաների վրա:

• Ովքե<sup>ր</sup> և որտեղի<sup>ց</sup> կարող էին տեսնել կամ լսել դեպքի վայրում կատարվող իրադարձությունը:

• Ինչպիսի<sup>օ</sup> հանգամանքներ են նպաստել հանցագործության կատարմանը:

Դեպքի վայրի զննությունը որոշակի կարգի գործերով, որպես կանոն, առաջին քննչական գործողությունն է: Դա բացատրվում է նրանով, որ հենց տեղազննության արդյունքներն են, որ նյութ են տալիս<sup>ք</sup> քննության ուղղությունը որոշելու, հետագա քննչական և օպերատիվ-հետախուզական գործողություններ կատարելու համար:

Դեպքի վայրի պահպանումը և տեղազննությունը անհետաձգելի գործողություններ են, քանի որ պահպանման և կատարման հասպտումը կարող է հանգեցնել դեպքի տեղի անվերականգնելի փոփոխությունների:

Իրեղեն ապացույցները պետք է

- որոշվեն,
- հայտնաբերվեն,
- արձանագրվեն,
- ֆիքսվեն, լուսանկարահանվեն,
- հավաքվեն,
- փաթեթավորվեն,
- առգրավվեն,
- պահպանվեն

այնպիսի ձևով, որպեսզի երաշխավորվի դրանց թույլատրելիությունը՝ դատարանում որպես իրեղեն ապացույց դիտվելու համար:

Հրագենի կիրառման հետ կապված գործերով դեպքի վայրի տեղազննության ընթացքում հետաքննիչը, քննիչը պետք է պարզեն ոչ միայն այն հարցերը, որոնք ի հայտ են գալիս ցանկացած դեպքի վայրի զննության ժամանակ, այլ պետք է ձգտեն հավաքել այնպիսի նյութեր, որոնք վկայեն՝

• հանցագործությունը կատարվել է հրագենի կիրառմամբ,

• քանի կրակոց է տեղի ունեցել,

• ինչ տիպի և տեսակի հրագենից են կատարվել կրակոցները,

• ինչ ուղղությամբ են կատարվել կրակոցները,

• որտեղից են կատարվել կրակոցները,

• ինչ մոտավոր տարածությունից են կատարվել կրակոցները,

• ինչ դիրքով է եղել տուժողը կրակոցի պահին:

Հրագենից կատարված սպանությունների ժամանակ հաճախակի բացակայում են պայքարի հետքերը, որոնք, որպես կանոն, ցույց են տալիս հանցագործության կատարման վայրը:

Այն հանգամանքի համար, որ մահը կամ մարմնական վնասվածքը առաջացել է հրագենի կիրառման արդյունքում, բնորոշ հատկանիշներ են հանդիսանում անմիջապես դիակի մոտ հայտնաբերված զենքը, գնդակը, պարկուճը, խիցը և այլն: Սակայն, անհրաժեշտ է հիշել, որ վերը նշված առարկաների առկայությունը հանցագործության վայրում չի կարող հիմք հանդիսանալ կատեգորիկ հետևության համար, որ հենց այդ է դեպքի վայրը, քանի որ դեպքի վայրում /հատկապես զինվորական մասերում/ կարող են հայտնաբերվել տարբեր տեսակի զենք և ռազմամթերք, որոնք տվյալ դեպքի հետ ոչ մի կապ չունեն:

Որոշել կատարված կրակոցների քանակը դեպքի վայրում հնարավոր է՝ ելնելով հայտնաբերված պարկուճների, գնդակների, խիցերի, շրջակա միջավայրում և մարդու մարմնի վրա առկա գնդակային վնասվածքների առկայությունից: Այս հատկանիշները համեմատաբար հեշտ կարող են հայտնաբերվել փակ տարածքում: Առավել դժվար է դա անել բաց տարածքում, քանի որ մի շարք հատկանիշներ, որոնք վկայում են կատարված կրակոցների քանակի մասին, միշտ չէ, որ հնարավոր է գտնել: Այսպես, օրինակ՝ բաց տեղանքում կրակոցի դեպքում գնդակը, չխոցելով տուժողին, կարող է թռչել որոշակի տարածություն և հնարավոր է՝ չհայտնաբերվի: Բաց տարածությունում կատարված կրակոցների քանակի համար ամենահավանական հատկանիշ է հանդիսանում կրակված պարկուճների քանակը: Սակայն, այս հարցի լուծումը դժվարանում է նրանով, որ մեկ գնդակով հնարավոր է վնասվածք պատճառել ինչպես տուժողի մարմնին, հագուստին, այնպես էլ շրջակա միջավայրին, ուստի անհրաժեշտ է ուշադիր լինել գնդակի թռիչքի ուղղության հայտնաբերման հարցում և մարմնի, հագուստի և շրջակա միջավայրում հայտնաբերված վնասվածքների ուղղությունները մտովի կա-

պել իրար հետ: Որոշել այն հարցը, թե ինչ զենքից է կատարվել կրակոցը, ունի էական նշանակություն հետագա ամբողջ քննության համար: Այն դեպքերում, երբ որոշվում է, որ կրակոցները կատարվել են տարբեր տիպի զենքերից, երբեմն կարելի է դատել հանցագործների քանակի մասին: Դեպքի վայրի զննության ժամանակ կրակոցի ուղղության և տարածության որոշումը էական նշանակություն ունի հետքերի և իրեղեն ապացույցների հայտնաբերման համար, որոնք կվկայեն հրագեների կիրառման մասին, ինչպես նաև կրակոցի պահին կրակողի և տուժողի փոխադարձ դիրքի մասին: Հրագեների կիրառմամբ բռնի մահվան գործերով դեպքի վայրը պետք է պահպանվի առավելագույնս ուշադիր և պատշաճ, քանի որ քննությանը առաջին հերթին կհետաքրքրի այն հարցը, թե կոնկրետ դեպքում տեղի է ունեցել սպանություն<sup>1</sup>, ինքնասպանություն<sup>2</sup>, թե՞ դժբախտ պատահար: Զննելիչը, կատարելով դեպքի վայրի զննություն, պետք է ձգտի հայտնաբերել այնպիսի տվյալներ, որոնք կօգնեն ստանալ տվյալ հարցի պատասխանը: Իսկ վերջնականապես այս հարցը հնարավոր է լուծել միայն ամբողջ քննության ավարտից հետո, վկաների հարցաքննության, քննչական փորձարարությունների, տարբեր տեսակի փորձարանություններ նշանակելու արդյունքում: Ուսումնասիրելով դեպքի վայրի պարագաները՝ քննիչը պետք է համադրի հայտնաբերված հետքերը և իրեղեն ապացույցները և դրա հիման վրա արդեն իսկ զննության ընթացքում առաջ քաշի և ստուգի հնարավոր վարկածները՝ փորձելով հայտնաբերել լրացուցիչ հետքեր և

իրեղեն ապացույցներ: Զննչական պրակտիկան ցույց է տալիս, որ շատ հաճախ քննիչը հրապարակում է մեկ վարկածով, որը ի հայտ է գալիս դեպքի վայրի զննության ժամանակ և հավաքում է միայն այն ապացույցները, որոնք հաստատում են այդ վարկածը: Դրա համար ավելորդ չի լինի մեկ անգամ ևս հիշեցնել, որ տեղազննություն կատարող անձը չպետք է կատարի շուտափույթ հետևություններ կատարվածի մասին՝ չնայած նրան, որ իրեն թվում է, թե իր կողմից առաջ քաշված վարկածը ճիշտ է: Զննելով դեպքի վայրը՝ պետք չէ մոռանալ նաև, որ հանցագործությունը պարտակող անձինք մի շարք դեպքերում սպանությունից հետո փոխում են հանցագործության վայրի պարագաների վիճակը՝ նպատակ ունենալով դժվարացնել կատարվածի իրական պատկերի վերականգնումը: Այդ նպատակով հանցագործները առանձին դեպքերում զենքը դնում են դիակի կողքին կամ տեղավորում նրա ձեռքում: Դրա համար զենքի գտնվելը դիակի կողքին կամ նրա ձեռքում չի կարող վկայել, որ տեղի է ունեցել ինքնասպանություն: Փորձարարություններով հաստատվել է, որ զենքը որը դրվել է դիակի ձեռքի մեջ կարող է ուժեղ սեղմված լինել դիակային փայտացման արդյունքում: Դրա համար քննիչը, ինչքան էլ նրան իրական թվա առաջ քաշված վարկածը իրավունք չունի դադարեցնել զննությունը, այլ պետք է օբյեկտիվորեն հայտնաբերի, ֆիքսի այն ամենը, ինչը կարող է նշանակություն ունենալ հետագա քննության ժամանակ:

#### Օգտագործված գրականություն

1. Белкин Р.С. Криминалистика. Издательство НОРМА Москва, 2005г.
2. Разумов Э.А., Малибога Н. П. Осмотр места происшествия, редакционно-издательский отдел МВД Украины 1994г.

#### РЕЗЮМЕ

##### *Понятие места происшествия с применением огнестрельного оружия, охрана и особенности осмотра места происшествия*

Место происшествия в пространстве является то место, где было совершено преступление.

По делам с применением огнестрельного оружия осмотр места происшествия является неотложным следственным действием которое выражается непосредственном исследовании места происшествия и его материальных следов, для выявления и обоснования фактических данных имеющих значение для дела.

Сохранение и исследование места происшествия является неотложным следственным действием поскольку промедление может привести к неисправимым изменениям.

По делам с применением огнестрельного оружия при осмотре места происшествия и в его последующем осмотре требуются не только применение общих криминалистических знаний в области исследования места происшествия, но и применение специальных знаний в области других научных методик. Лицо совершившее преступление с применением огнестрельного оружия помимо своей воли на месте происшествия оставляет не только следы применения оружия, но и ряд вещественных доказательств. В последствии которые могут иметь в дальнейшем доказательственные значения в раскрытии преступления.

#### SUMMARY

##### *The concept of crime scene, its preservation and the characteristics of examination of cases connected with the usage of firearm*

Crime scene is a location where a crime took place.

Crime scene investigation of crimes committed using a firearm is such an investigative action which is expressed for the purpose of identification and strength of factual datum significant for the case, as well as for immediate examination of crime scene and its material traces.

To protect and investigate the crime scene is an urgent investigative action as the delay can cause nonrecoverable crime scene changes.

During the crime scene protection for cases connected with the usage of firearm and its further investigations, not only the application of general provisions of criminological development for the previous crime scene examinations are required, but also the application of special knowledge of other scientific areas.

Regardless of his will, the person who has committed a crime using a firearm, leaves not only trace evidence of applied firearm in the crime scene, but also a number of material evidence.

As a result of correct conservation of the crime scene and its further examination the evidences can contribute to the detection of crime.

## ՄԱՐՏԻՆ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի  
իրավունքի և քաղաքականության ինստիտուտի  
քրեական իրավունքի և քրեական դատավարության  
իրավունքի ամբիոնի հայցորդ

### ԿԱԼԱՆՔԻ՝ ՈՐՊԵՍ ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԺԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ

1966 թ. դեկտեմբերի 16-ին ընդունված «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային փաստաթուղթը սահմանում է, որ յուրաքանչյուր մարդ ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոք չի կարող ենթարկվել կամայական ձերբակալության և պահվել կալանքի տակ: Ոչ ոք չպետք է զրկված լինի ազատությունից այլապես, քան այնպիսի հիմքերով և այնպիսի ընթացակարգով, որոնք սահմանված են օրենքով:

Գործող օրենսդրության համապատասխան՝ դատարանը հանցագործություն կատարած անձի նկատմամբ պատիժ նշանակելիս պետք է ղեկավարվի ինչպես միջազգային փաստաթղթերով, այնպես և ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասի հոդվածներով, որոնք պատասխանատվություն են սահմանում կոնկրետ այս կամ այն հանցավոր արարքի համար:

Ինչպես սահմանում է ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածը (ՌԳ քրեական օրենսգրքի 60-րդ հոդված), հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակվում է արդարացի պատիժ, որը որոշվում է սույն օրենսգրքի հատուկ մասի համապատասխան հոդվածի սահմաններում՝ հաշվի առնելով սույն օրենսգրքի ընդհանուր մասի դրույթները:

Պատժի տեսակը և չափը որոշվում են հանրության համար վտանգավորության աստիճանով և բնույթով, հանցավորի անձը բնութագրող տվյալներով, այդ թվում՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներով:

Նշված հոդվածի 3-րդ մասը հռչակում է, որ հանցագործության համար նախատեսված պատիժներից առավել խիստը նշանակվում է, եթե նվազ խիստ տեսակը չի կարող ապահովել պատժի նպատակները:

Այս ամենը հաշվի առնելով՝ պատիժ նշանակելիս դատարանը իրականացնում է պատժի ան-

հատականացման կարևորագույն սկզբունքը, որը սահմանված է գործող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածում (ՌԳ քրեական օրենսգրքի 6-րդ հոդված): Համաձայն այդ հոդվածի՝ հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պատիժը և քրեաիրավական ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարացի, համապատասխանեն հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությունը անհրաժեշտ ու բավարար լինեն նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար:

Ինչպես նշում է Ե.Արտամոնովան, արդարության սկզբունքը դրված է իրավունքի բուն բովանդակության մեջ և դրսևորվում է դրա կոնկրետ ճյուղերում, այդ թվում՝ քրեական իրավունքում<sup>1</sup>: Հասկանալի է, որ արդարության սկզբունքը քրեական օրենսդրության մեջ իր արտացոլումը պետք է գտնի հատուկ մասի սանկցիայում: Պատժամիջոցները կիրառվում են կոնկրետ հանցավորի նկատմամբ՝ ելնելով նրա կողմից կատարած արարքի հասարակական վտանգավորության աստիճանից: Այդ առումով պատժամիջոցը արդարացի կհամարվի, եթե այն համապատասխանի հոդվածի դիսպոզիցիայում նշված արարքի էությանը, հանցավորի անձնավորությանը և այն մեղմացնող ու ծանրացնող հանգամանքների ամբողջությանը, որոնք կրում է մեղավոր անձը մինչև դատարանի կողմից դատավճիռ արձակելը:

Պատժի անհատականացման սկզբունքը արտահայտվում է հանցագործության կատարման մեջ մեղավոր ճանաչված անձի նկատմամբ համապատասխան պատժատեսակի և պատժաչափի սահմանմամբ, որը համապատասխանում է արարքի հասարակական վտանգավորության բնույթին ու աստիճանին, որի ընթացքում հաշվի են առնված ինչպես հանցավորի անձը, այնպես էլ պատիժն ու պատասխանատվությունը ծանրացնող ու մեղմացնող հանգամանքները<sup>2</sup>:

Օրենքի մեջ ամրագրված սկզբունքի բոլոր

տարրերը, այդ թվում և անհատականացման սկզբունքը, կյանքի են կոչվում դատարանի կողմից հատուկ մասի հողվածին համապատասխան պատժաչափ սահմանելու ընթացքում:

Կալանքը՝ որպես պատժատեսակ, քրեական օրենսգրքի հատուկ մասի հողվածներում նախատեսված է երկրնորելիության սկզբունքով, քրեական օրենսգրքի այլ պատժատեսակների հետ, հիմնականում տուգանքի և որոշակի ժամկետով ազատազրկման հետ: Հետևաբար, դատարանը, ղեկավարվելով քրեական պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներով, որոշում է, թե հատուկ մասի հողվածի նախատեսված որ պատժատեսակը պետք է կիրառի կոնկրետ դատավճիռ արձակելիս, որը առավելագույնս կհամապատասխանի կատարված հանցագործության՝ հանրության համար ծանրության աստիճանին, հանցավորի անձնավորությանը, պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող ու մեղմացնող հանգամանքներին:

Ընդհանրապես երկրնորելի պատժատեսակների նախատեսումը կոնկրետ հանցագործության համար նախատեսված հողվածի սանկցիայում հնարավորություն է տալիս արդարադատություն իրականացնող մարմնին՝ դատարանին, առավել անհատական մոտեցում դրսևորել հանցագործության սուբյեկտի գործողությունների (անգործության) գնահատման հարցում և ընտրել առավել նպատակահարմար պատժատեսակը, որը կապահովի պատժի նպատակների իրականացման ապահովումը:

Կարլ Մարքսը պատժի անհատականացման մասին նշել է, թե խնդիրը կայանում է նրանում, որ պատիժը հանդիսանա հանցագործության անմիջական հետևանքը: Հանցավորի աչքում պատիժը պետք է երևա որպես իր գործունեության անհրաժեշտ արդյունք, այսինքն՝ իր սեփական գործունեությունը: Պատժի սահմանները որոշվում են նրա կողմից կատարված հանցագործության սահմաններով, իրավախախտման որոշակի բովանդակությամբ<sup>3</sup>:

Քրեական պատասխանատվության և պատժի անհատականացումը հանդիսանում է քրեաիրավական հիմնարար սկզբունքներից մեկը, որը հիմնված է պատժի նպատակների վրա և ելնում է նրանից, որ չեն կարող լինել բացարձակապես կրկնվող հանցագործություններ և հանցագործներ: Լայն իմաստով անհատականացման սկզբունքը տարածվում է իրավակիրառ գործունեության մի

շարք փուլերի՝ պատժի նշանակման, կատարման, պատժի կրումից լրիվ կամ մասնակի ազատման վրա<sup>4</sup>:

Պատժի անհատականացման սկզբունքն իրականացվում է հանցագործություններ կատարած անձանց նկատմամբ արդարացի, հողվածի սանկցիայով նախատեսված պատիժների նշանակման գործընթացում, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը, հաշվի առնելով քրեական գործի դատաքննության արդյունքում հանցանքի շարժառիթների ու նպատակների, հանցավորի դերի, հանցանքը կատարելիս ու դրանից հետո նրա վարքագծի և այլ դրսևորումների հետ կապված բացառիկ հանգամանքների առկայությունը, որոնք էականորեն կարող են նվազեցնել հանցանքի՝ հանրության համար վտանգավորության աստիճանը, ինչպես նաև խմբակային հանցագործության մասնակցի կողմից կատարած հանցանքը բացահայտելուն ակտիվորեն աջակցելու դեպքում, կարող է նշանակել ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հողվածով նախատեսված պատժի նվազագույն չափից ավելի ցածր պատիժ կամ ավելի մեղմ պատժատեսակ, քան նախատեսված է այդ հողվածով, կամ չկիրառել որպես պարտադիր նախատեսված լրացուցիչ պատիժ (ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հողված, ՌԴ քրեական օրենսգրքի 64-րդ հողված): Նույն հողվածի 2-րդ մասը հռչակում է, որ բացառիկ կարող են ճանաչվել ինչպես առանձին մեղմացնող հանգամանքները, այնպես էլ այդ հանգամանքների համակցությունը:

Դատարանը, հաշվի առնելով հանցագործության հասարակական վտանգավորության բնույթն ու աստիճանը, հանցավորի անձը բնութագրող անհատական հատկանիշները, կալանքի ձևով պատիժ նշանակելիս պարտավոր է այդ պատժատեսակի այնպիսի չափ (ժամկետ) սահմանել, որն առավել կնպաստի քրեական պատժի նպատակների իրականացմանը, որը բխում է քրեական օրենսդրության ընդհանուր սկզբունքներից: Պետք է արձանագրել, որ պատժի ծանրությունը, նրա պատժողական էությունը արտահայտվում է ոչ թե այդ պատժատեսակի մեջ, այլ նաև դրա չափի մեջ<sup>5</sup>:

Այստեղ արդարացվում է կալանքի՝ որպես քրեական պատժատեսակի ժամկետի երկարեցումը մինչև վեց ամիս սահմանելը, և դատարանը, հաշվի առնելով գործի կոնկրետ հանգամանքները, կարող է որոշակի ժամկետ սահմանել, որն ամ-



փոփված կլինի հողվածի սանկցիայում:

Մեր կարծիքով, օրենսդիրը, նման ժամանակահատված սահմանելով կալանքի համար, դատարանին հնարավորություն կընձեռնի կատարած հանցանքի համար ավելի ճկունությամբ անհատականացնել քրեական պատիժը՝ հաշվի առնելով ինչպես արարքի վտանգավորության աստիճանը, հանցավորի անձը, այնպես էլ պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները, որ նախատեսված կլինեն հողվածի սանկցիայում<sup>6</sup>:

Հանցագործության հասարակական վտանգավորությունը հաճախ կախված է այն հետևանքներից, որոնք վրա են հասնում հանցագործության կատարմամբ (հանցագործությամբ պատճառով վնասի չափը, անձի մեղքի աստիճանը և այլն)<sup>7</sup>:

Հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանը հաշվի առնելով՝ դատարանը նշանակում է հողվածի սանկցիայով նախատեսված կալանքի որոշակի ժամկետ, այսինքն՝ արարքի հասարակական վտանգավորության աստիճանից ելնելով՝ կալանքի ժամկետը կարող է ավելի բարձր լինել: Եվ ընդհակառակը, եթե արարքը իրենից նվազ վտանգավորություն է ներկայացնում, կալանքի ժամկետը հողվածի սանկցիայով նախատեսված ժամկետներից դատարանը պետք է ընտրի ամենակարճատևը: Սակայն, պրակտիկան ցույց է տալիս, որ կալանքի կիրառումը դատարանների կողմից շատ չնչին է: Դա պայմանավորված է առաջին հերթին նրանով, որ արդարադատության մարմինները կալանքը դիտարկում են կարճատև ազատագրկման տարատեսակ և ժամկետի օրենսդրական սահմանումը նրանց մոտ այն համոզմունքը չի ձևավորել, որ ոչ մեծ և միջին ծանրության արարքներ կատարած անձանց նկատմամբ այդ պատժատեսակի կիրառումը կարող է ապահովել պատժի նպատակների իրականացումը:

Գործող օրենսգրքում շատ թվով հողվածներ կան, որոնց սանկցիաներում այլ պատժատեսակների հետ մեկտեղ նախատեսված է կալանքի կիրառման հնարավորությունը. դա կարող է վերաբերել նաև հանցակցությամբ կատարված հանցագործություններին, այսպես ասած, «երկրորդական» մասնակիցների նկատմամբ պատիժ սահմանելուն, հանցավորի դեպքերին և այլն: Նման իրավիճակներում, կարծում ենք, կալանքի կիրառումը արդյունավետ կլինի և կնպաստի նման արարքների հեղինակների նկատմամբ արդյունա-

վետ ներգործության ազդեցությանը, պատժի նպատակների արդյունավետ իրականացմանը, միաժամանակ կրեթի կալանքի կիրառման թվաքանակի ավելացմանը: Հակառակ դեպքում, եթե նման հարաբերությունների կարգավորման ընթացքում նպատակահարմար չի համարվում կալանք կիրառել, այդ պատժատեսակը կմնա «սովեռում»՝ դրանից բխող բոլոր բացասական հետևանքներով, թեկուզ և այն առումով, որ դատարանները ավելի հաճախ կկիրառեն կարճատև ազատագրկումը, որը միշտ չէ, որ արդյունավետ կարող է ազդել դատապարտյալի վրա:

Իրավաբանական գրականության մեջ բազմիցս է արծարծվել այն թեզը, որ կարճատև ազատությունից զրկելը չի տալիս այն ցանկալի արդյունքը, որն ակնկալում է դատարանը: Կարճատև ազատությունից զրկելը, այդ թվում կալանքի ձևով նշանակված պատժատեսակը, ոչ միշտ են հանգեցնում դաստիարակչական և կանխարգելիչ արդյունքի<sup>8</sup>: Սակայն, պետք է շեշտել, որ այն դեպքում, երբ քրեական գործի հանգամանքները և հանցավորի անձը ուղղման և վերադաստիարակման համոզմունք են ներշնչում դատարանին, ինչպես նաև հանցագործությունների կանխարգելումը ապահովելու խնդրում, նպատակահարմար է ավելի հաճախ կիրառել կալանքը, քան որոշակի ժամկետով ազատագրկումը, քանի որ կալանքը, ունենալով ազդեցության որոշակի և հստակ տարրեր, ավելի ներգործուն ազդեցություն կթողնի դատապարտյալի վրա՝ նրան ուղղելու, նրան հետազայում հանցագործություններ կատարելու մտքից հեռու պահելու և, որ ամենակարևորն է, կալանքի դատապարտվածը ազատագրկման վայրում չի շփվի այլ դատապարտյալների հետ, որոնք պատիժը կրում են ազատագրկման ձևով և կարող են բացասական ազդեցություն ունենալ նրա վրա: Ինչպես օրենսդիրն է պահանջում, կալանքի դատապարտված անձը շփվում է միայն կալանքի դատապարտվածների հետ, խիստ մեկուսացման պայմաններում, որի ժամանակ նրա շփումները հասցվում են մինիմումի:

<sup>1</sup> Տե՛ս Արտամոնովա Ե.Օ. Օ նշանակման քննարկումներ, «Պատժամիջոցներ», 2004, N 1, Ս. 36.

<sup>1</sup> Տե՛ս Զաքարյան Ն.Ի. Պատժամիջոցների սկզբունքները, «Սովետական պետություն և իրավունք». 1966, N 5, Ս. 74.

<sup>1</sup> Տե՛ս Մարքս Կ. և Էնգելս Բ. Սոց. 2-րդ հրատարակում, Կ. 1, Ս. 124.

<sup>1</sup> Տե՛ս Թադևոսյան Լ.Չ. Չարտարարական հանցագործությունների համար քրեական պատասխանատվության հիմնահարցերը. Երևան, 2007, էջ 239:

<sup>1</sup> Տե՛ս Թադևոսյան Զ.Ա. Ստիպանովի մեղադրանքը. Երևան, 1978. Ս. 65.

<sup>1</sup> Տե՛ս Կուրյաչև Բ.Ն. Սովետական քրեական իրավունքի ընդհանուր տեսություն, «Սովետական իրավունք», Մ., 1972. Ս. 318,

Գրիգորյան Մ.Վ. Հանցագործությունների քրեական իրավունքը, Երևան, 2010 էջ 35:

<sup>1</sup> Տե՛ս Բրոյնինյա Մ. Սովետական քրեական իրավունքի ընդհանուր տեսություն «Սովետական իրավունք», Մ., 1967. Ս. 199, Սիմոնովսկի Ա.Ա. Սովետական քրեական իրավունքի ընդհանուր տեսություն, Գոսյուրիզատ, Մ., 1961. Ս. 157.

<sup>1</sup> Տե՛ս Նիկիֆորով Բ.Ս. Սովետական քրեական իրավունքի ընդհանուր տեսություն, «Սովետական պետություն և իրավունք», 1963, N4, Ս. 69.

#### РЕЗЮМЕ

##### *Некоторые вопросы назначения ареста, как меры наказания*

Арест, как мера наказания, в достижении целей наказания еще не достаточен для вынесения законного и обоснованного приговора. Любой уголовный вид наказания, в том числе арест, может обеспечить цели статьи 48 Уголовного кодекса Республики Армения (ст.43 У РФ), только в том случае, если он исполнен в строгом соответствии, т.е. притворяется в жизнь согласно установленным процедурам.

*Ключевые слова:* преступление, санкция, арест, лишение свободы, право неприкосновенности, уголовный кодекс, вид наказания, принцип правосудия, штраф, приговор.

#### SUMMARY

##### *Some questions of arrest appointment as a type of criminal penalty*

It is not enough to make a lawful and grounded verdict to achieve the goals of detention as criminal penalty. Any type of criminal penalty, including detention, can be ensured by Article 48 of RA Criminal Code (Article 43 of RF Criminal Code) only in case of proper implementation, that is to say according to adjusted procedure.

*Key words:* crime, sanction, detention, criminal code, type of punishment, principle of justice, penalty, verdict.

**ԼԵՎՈՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ**

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ  
ՕՐԵՆՍԳՐՔՈՎ ԽԱԲԵՈՒԹՅԱՆ ԿԱՍ  
ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆԸ ՉԱՐԱՇԱՀԵԼՈՒ ԵՂԱՆԱԿՈՎ  
ԳՈՒՅՔԱՅԻՆ ՎՆԱՍ ՊԱՏՃԱՌԵԼՈՒ ՀԱՆՑԱԿԱԶՄԻ  
ՆԱԽԱՏԵՍՄԱՆ ՀԻՄՔԵՐՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

Յուրաքանչյուր քրեաիրավական արգելքի նախատեսում պետք է բխի տվյալ պետության և հասարակության զարգացման շահերից: Ցանկացած հանցակազմ միտված է որոշակի հասարակական հարաբերությունների արդյունավետ քրեաիրավական պաշտպանությանը, և այս համատեքստում կարելի է փաստել, որ հանցակազմի արդյունավետությունը անմիջականորեն պայմանավորված է այն հանգամանքով, թե որքանով է հաջողվել վերոնշյալ նպատակի իրագործումը:

Քրեաիրավական նորմը, որով քրեական պատասխանատվություն է նախատեսվում կատարված հանցանքի համար, իրենից ներկայացնում է մարդկային մտքի ստեղծագործության արդյունք, և, հետևաբար, այն կրում է խիստ սուբյեկտիվ բնույթ: Նման նորմը կարող է հիմնավոր և արդյունավետ համարվել միմիայն այն պարագայում, եթե դրա բովանդակությունը բխում է սոցիալական արդարության գաղափարից<sup>1</sup>:

Հասարակական հարաբերությունները մշտապես զարգանում և փոփոխվում են, ինչի արդյունքում դրանց արդյունավետ քրեաիրավական պաշտպանության անհրաժեշտություն է առաջանում<sup>2</sup>:

Ընդ որում, անհնարին է այնպիսի քրեաիրավական նորմերի սահմանումը, որոնք ի գորտու են մեկընդմիջտ և վերջնականապես պաշտպանելու առկա հասարակական հարաբերությունները, քանզի, ինչպես նշվեց, դրանք դինամիկ են և փոփոխական:

Քրեական իրավունքի տեսության մեջ «արարքի քրեականացման հիմքեր» հասկացության առնչությամբ առկա են տարբեր մոտեցումներ: Միասնական եզրույթի բացակայությունը տեսական բանավեճերի առիթ է հանդիսանում<sup>3</sup>: Քրեաիրավական գիտության մեջ առկա են բազմաթիվ տեսակետներ՝ կապված այն հանգամանքի հետ,

թե որոնք են արարքի քրեականացման հիմքերը, պայմանները և դրան նպաստող գործոնները: Մի շարք գիտնականների կարծիքով այդպիսիք պետք է համարել արարքի հանրային վտանգավորությունը, տարածվածությունը, դրա քրեականացման դրական և բացասական հետևանքների համաչափությունը, այլ իրավանորմերով տվյալ հասարակական հարաբերությունների արդյունավետ պաշտպանության անհնարիությունը և այլն<sup>4</sup>:

Մեր կարծիքով, արարքի քրեականացման հիմքերը և պայմանները պետք է դիտարկել ոչ թե միասնության մեջ, այլ առանձին վերցրած: Որպես արարքի քրեականացման հիմք պետք է դիտարկել դրա հանրային վտանգավորությունը: Հետևաբար, ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 184-ով նախատեսված հանցակազմի առնչությամբ պետք է նշել, որ նշված արարքի քրեականացման հիմքը դրա հանրային վտանգավորության բարձր աստիճանն է: Որպես խաբեությամբ կամ վստահությունը չարաշահելու եղանակով գույքային վնաս պատճառելու հանցակազմի նախատեսման պայմաններ հանդիսանում են տվյալ արարքի տարածվածությունը, այլ իրավական միջոցներով հանցավոր դրսևորման այս տեսակի վրա ներգործության անարդյունավետությունը:

Հանրային վտանգավորությունն արարքի հատկությունն է՝ վնաս հասցնելու քրեական օրենքով պաշտպանվող հասարակական հարաբերություններին: Խաբեությամբ կամ վստահությունը չարաշահելու եղանակով գույքային վնաս պատճառելու դեպքում առաջին հերթին վնասվում են սեփականության պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերությունները: Յուրաքանչյուր պետության արտադրական հարաբերությունների հիմքը կազմում է սեփականությունը (չարժական կամ անշարժ գույքը), որի իրավունքը պատկանում է տարբեր սուբյեկտներին: ՀՀ Սահմանադ-

www.lawinstitute.am

րության հողված 8-ը սահմանում է. «Հայաստանի հանրապետությունում ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը: Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում են տնտեսական գործունեության ազատությունն ու ազատ տնտեսական մրցակցությունը»: Ինչպես տեսնում ենք, սեփականության իրավունքը համարվում է մարդու կարևոր և անբախտելի իրավունքը: Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի հողված 17-ում հռչակվում է. «Յուրաքանչյուր մարդ իրավունք ունի տիրապետել գույքին ինչպես միանձնյա, այնպես էլ ուրիշների հետ համատեղ: Ոչ ոք չի կարող կամայականորեն զրկվել իր գույքից»: Ելնելով այս ընդհանուր սկզբունքից՝ ՀՀ Սահմանադրության հողված 31-ն ուղղակի ամրագրում է, որ սեփականությունից կարող է զրկվել միայն դատարանը օրենքով նախատեսված դեպքերում: Սեփականության իրավունքը հանրության համար առավել վտանգավոր ոտնձգություններից պաշտպանվում է քրեաիրավական միջոցներով, և այս առումով խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով գույքային վնաս պատճառելու համար քրեական պատասխանատվություն սահմանելը արդարացված է թվում:

Հանրային վտանգավորությունը՝ որպես հանցագործության նյութական հատկանիշ, օբյեկտիվ կատեգորիա է: Այն գոյություն ունի մարդու (օրենսդրի) կամքից ու գիտակցությունից անկախ: Արարքը հանրորեն վտանգավոր է ոչ թե այն պատճառով, որ ինչ-որ մեկը (օրենսդիրը, օրենքը կիրառողը) այդպես է գնահատում այն, այլ այն պատճառով, որ այդ արարքը հակասում է տվյալ հասարակության գոյության պայմաններին, խախտում է հասարակության կենսագործունեության համար անհրաժեշտ հասարակական հարաբերությունները: Օրենսդրի խնդիրը հասարակության մեջ կատարվող արարքների վտանգավորության ճիշտ գնահատումն է և դրա հիման վրա այդ արարքները հանցագործությունների թվին դասելն ու դրանց համար պատիժներ սահմանելը (քրեականացում): Այս տեսակետից, իհարկե, այս կամ այն արարքը հանցավոր ճանաչելը որոշակի իմաստով կախված է օրենսդրի սուբյեկտիվ կամքից: Օրենսդիրն ինքն է իր իրավագիտակցության, հասարակության կենսագործունեության պայմանների գնահատման հիման վրա իրականացնում արարքների քրեականացում: Հնարավոր է, որ օրենսդիրը որոշ դեպքերում սխալ գնահատի այս կամ այն արարքի վտանգավորությունը և հանցագործություն համարի այնպի-

սի արարք, որն իր վտանգավորությամբ չի կարող հանցավոր համարվել, կամ էլ, հակառակը, հանցավոր չհամարի այնպիսի արարք, որն անհրաժեշտ է այդպիսին համարել: Չնայած դրան՝ արարքի վտանգավորությունն առկա է օբյեկտիվորեն: Օրենսդիրը արարքին վտանգավորություն չի հաղորդում: Նա միայն վտանգավոր արարքների շրջանակից առանձնացնում է նրանք, որոնք, իր (օրենսդրի) կարծիքով, առավել վտանգավոր են, և որոնց դեմ անհրաժեշտ է պայքարել քրեաիրավական միջոցներով<sup>5</sup>:

Հանրային վտանգավորությունը՝ որպես հանցագործության նյութական հատկանիշ, ունի որակական և քանակական արտահայտություն: Հանրային վտանգավորության որակական արտահայտությունը հանրային վտանգավորության բնույթն է, իսկ քանակականը՝ հանրային վտանգավորության աստիճանը: Հանրային վտանգավորության բնույթը որոշվում է այն հասարակական հարաբերությունների բնույթով, որոնց դեմ ոտնձգություն է հանցագործությունը, այն է՝ հանցագործության օբյեկտով: Զննարկվող հանցատեսակի առումով, ինչպես նշվեց, հանցագործության օբյեկտը սեփականության իրավունքի պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերություններն են:

Հանրային վտանգավորության աստիճանը՝ որպես հանրային վտանգավորության քանակական արտահայտություն, որոշվում է բազմաթիվ չափանիշներով: Հանրային վտանգավորության աստիճանը բնութագրող հիմնական ցուցանիշն այն վնասն է, որ հասցնում է հանցագործությունը (հանցագործության վտանգավոր հետևանքները, վնասի չափը, բնույթը): Վնասի բնույթն ու չափը հիմք են հանդիսանում հանցագործության վտանգավորության աստիճանը որոշելու համար: Հանրային վտանգավորության մասին խոսելիս հարկ է նշել նաև մեկ այլ կարևոր հանգամանք: Հանրային վտանգավորությունը երբեք չի հասկացվում որպես վտանգավորություն բացառապես հասարակության համար: Հանրային վտանգավորությունը նշանակում է վտանգավորություն պետության, հասարակության, անձի համար<sup>6</sup>:

Հանրային վտանգավորությունը հանցագործության կարևորագույն բնութագրական հատկանիշներից է: Նախ չեն կարող հանցագործություն համարվել այն արարքները, որոնք օժտված չեն վտանգավորությամբ: Երկրորդ՝ վտանգավորության աստիճանը այլ իրավախախտումները և հանցագործությունները միմյանցից սահմանագա-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

տող կարևորագույն չափանիշ է հատկապես այն դեպքում, երբ իրավախախտումը և հանցագործությունն ուղղված են միևնույն օբյեկտի դեմ և արտաքին այլ հատկանիշներով նման են իրար: Նման դեպքերում հանցագործությունն այլ իրավախախտումներից տարբերակող հիմնական չափանիշը վտանգավորության աստիճանն է, որը որոշվում է վերը նշված չափանիշներով (վնասի չափ, արարքի կատարման եղանակ, շարժառիթ և այլն):

Սրա հետ կապված՝ անհրաժեշտություն է առաջանում քննարկել իրավաբանական գրականության մեջ վեճերի տեղիք տված այն հարցը, թե արդյո՞ք այլ իրավախախտումներն օժտված են հանրային վտանգավորությամբ:

Որոշ քրեագետներ գտնում են, որ հանրային վտանգավորությունը հատուկ է միայն հանցագործությանը: Աննշան խախտումները, որ հետապնդվում են վարչական, քաղաքացիաիրավական, կարգապահական կարգով, չեն խախտում հասարակական հարաբերությունների ողջ համակարգը և այդ պատճառով չեն կարող հանրորեն վտանգավոր համարվել<sup>7</sup>: Հանրային վտանգավորությունը, ըստ այդ հեղինակների, այնպիսի իրավախախտման հատկություն է, որն էական վնաս է պատճառում կամ այդպիսի վնաս պատճառելու սպառնալիք է ստեղծում<sup>8</sup>:

Ներկայումս քրեական իրավունքի տեսությունում գերակշռող կարծիքն այն է, որ հանրային վտանգավորությունը հատուկ է բոլոր իրավախախտումներին<sup>9</sup>: Այս տեսակետի կողմնակիցներն իրենց դիրքորոշումը հիմնավորում են հետևյալ փաստարկներով:

Նախ իրավունքի՝ որպես հասարակական հարաբերությունների կարգավորիչի էությունն այն է, որ նա կարող է կիրառվել միայն հանրորեն նշանակալից երևույթների նկատմամբ: Որքան էլ որ այս կամ այն երևույթն առաջին հայացքից աննշան լինի, քանի որ այն արգելվում է իրավունքով, միևնույն է որոշակի վտանգ է ներկայացնում հասարակության և պետության համար<sup>10</sup>: Երկրորդ՝ որոշակի արարքներն իրավախախտում են ճանաչվում այն պատճառով, որ դրանք որոշակի վտանգ են ներկայացնում և կարող են վնաս հասցնել հասարակական հարաբերություններին: Այդ արարքների համար պատասխանատվության սահմանումը բխում է դրանք պարսավելու անհրաժեշտությունից: Հնարավոր չէ պատասխանատվություն սահմանել այնպիսի արարքների համար, որոնք ոչ մի վտանգ չեն ներկայացնում և պարսավանքի արժա-

նի չեն<sup>11</sup>:

Հանցագործության և մյուս իրավախախտումների տարբերակման խնդրի հետ կապված՝ իրավաբանական գրականության մեջ փորձ է արվել հանրային վտանգավորությունը բաժանել երկու կարգի՝ հանրային վտանգավորություն և հանրային վնասակարություն:

Նման գաղափարը խիստ քննադատության է արժանացել Յու.Ի. Լյապունովի կողմից, որը, մեր կարծիքով, արդարացիորեն գտնում է, որ դա բառախաղ է: Որոշակի տեսակի արարքի՝ հասարակության շահերն այս կամ այն չափով խախտելու օբյեկտիվ հատկությունը չի փոխի իր էությունը՝ անկախ այն բանից, թե ինչպես կանվանվի՝ «վնասակար», թե «վտանգավոր»<sup>12</sup>:

Հարկ է նշել, որ նման տեսական վիճաբանության տեղիք էր տալիս նաև նախկին քրեական օրենսգրքի հոդված 7-ի երկրորդ մասը, որի համաձայն՝ «Հանցագործություն չի համարվում այն գործողությունը կամ անգործությունը, որը թեև ձևականորեն պարունակում է քրեական օրենքով նախատեսված որևէ արարքի հատկանիշներ, սակայն իր նվազ կարևորության պատճառով հասարակական վտանգավորություն չի ներկայացնում»:

Հարկ է նշել, որ նման ձևակերպում է տալիս նաև Ռուսաստանի Դաշնության՝ 1997 թ. հունվարի 1-ին ուժի մեջ մտած քրեական օրենսգրքի հոդված 14-ի երկրորդ մասը:

Այս կապակցությամբ պետք է ընդգծել, որ Ռուսաստանի Դաշնության քրեական օրենսգրքի վերը նշված նորմը միանշանակ չի ընկալվում: Այսպես, 1996 թ. «ՌԴ քրեական օրենսգրքի մեկնաբանություններ»-ում նշվում է, որ հասարակական վտանգավորությունը հատուկ է բոլոր իրավախախտումներին: Տարբերությունը միայն վտանգավորության աստիճանի մեջ է<sup>13</sup>: Նման մեկնաբանությունը բոլորովին չի բխում հոդված 14-ի երկրորդ մասի բովանդակությունից, որտեղ ուղղակի նշվում է՝ «... վտանգավորություն չի ներկայացնում ...»:

1996 թ. լույս տեսած ուսումնական ձեռնարկում, որը նվիրված է Ռուսաստանի Դաշնության նոր քրեական օրենսգրքի վերլուծությանը, նշվում է, որ հասարակական (հանրային) վտանգավորությունը հատուկ է միայն հանցագործությանը<sup>14</sup>:

Եվս մի հանգամանք: Շատ հաճախ հանցագործության և մյուս իրավախախտումների (օրինակ՝ վարչական իրավախախտման) միջև տարբերությունն աննշան է:

Վերոգրյալը թույլ է տալիս եզրակացնել, որ

www.lawinstitute.am

հանցագործությունը և մյուս իրավախախտումները միմյանցից տարբերվում են հանրային վտանգավորության աստիճանով:

